



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


6344

6345

6346

6347

6348



1995 1995  
1999  
1994  
1994

738

Mary 916

50

Printed in Turkey



ԱՐԵՎՈՒԱԳԻՇ

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ԱԿՏԲԱՆՔ ՄԻՒԶ

## ՅԱՐԵԱԿՈՒՆԻ ՀԱՐՍՈՒԹԻՒՆԵ

9pt8

## ՏՈՔԹ. և ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՎԻՆԸ ԲԱՐԵՎՈՒԹԻՒՆԸ

प्रबन्धसंक्षेप - ०१. १०२५०

1909

ՈՒՐՈՒԱԳԻՇ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

9(47.925)

ՈՒՐՈՒԱԳԻՇ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ՍԿՐԻՊՏ ՄԻՆՉ

ՅԱՐԵԱԿԱԼԵՔ ՀԱՐՈՑՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

ՏՈՒԹ. Ն. ՏԱՂԱՎԻՐԵԱՆ

Բ. ՏՊԱԿԻ. ԲՈՐԵՓՈԽՈՅՈՅ

ԳԵՆԵՏԻԿ

ԱՐ Ի ԹՈՐԵԱՆ ՏՊԱԿԻ

1908

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Այս վերջին տարիներս՝ Ազգ- գատմովթեան  
քննադատական ուսումն, օտար մատենագրաց  
մեր մասին տուած տեղեկովթեանց նկատառումն,  
Ասրեստամենաց ու Գարսից սեպածն զրօք ար-  
ձանագրութեանց ընթերցմունք, և Բայկական  
նմանօրինակ վիմագրոշց գրուածոց մասնական  
լուծմունք, այնչափ փոխած են և Խորենացոյ  
մեզ աւանդեալ պատմովթիւնն, որ նոյն իսկ ո-  
մանք յաթղմեցան մեր գատմանայրը առասպե-  
լագատում և երազապատում անուանել. սա-  
կայն լուրջ քննութիւնը նետզեաէ երեան կը  
հանեմ Խորենացոյ պատմովթեան ի՞նչ ի՞նչ դէմ-  
քերթ ու զէպքերը, թէպէս տարբեր առուամբ,  
կարևորութեամբ ու ժամանակազրական կար-

Այժմէն կարենոր կը ճամարիմք բանել, թէ մեր  
բնագաւառն միշտ միհնոյն ընակչութիւնն ունե-  
ցած չէ, գաղեմի ժողովուրդն Խուզեան կ'ամուա-  
թէր իմրդզինքն, զոր միմք Կախանա կը կոչիմք.  
ասոնք երկրին միակ բնակիչներն էին մինչ Դր-  
դար (Ն. Ք.), և այդ ատեմներն արևմուտքէն ե-  
կող Արմեններն մասամբ հայածուելով և մասամբ  
այ անոնց հետ խառնուելով՝ յառաջ եկած է զայ-  
ցեղն, չաւանականաբար Խորենացին այդ եր-  
կու տարբեր ցեղերու աւանդովթեանց մի խառ-  
նուրդն ներկայացուցած է, զորս ժամանակն  
պիտի անջատէ ու լուսաբանէ,

Ուստի Խորենացոյ զործն իրը մի գամձարան  
նկատելու նմք՝ որ ճառանկանաբար միծ մա-  
սամբ ժողովրդեան ընթերց Յաւաքուած աւան-  
դութիւններով նիւուած է, և կրթայ պատմական  
ուսումնասիրովթեանց նամար իր օգատակարու-  
թիւնն ունենալ,

2376

4 40

Այս հայրենասէր զբքիթ՝ չայցոս պատմական  
կենաց ոլեզրթ Ասորեստանիայցիթին նման 23  
դարեր յառաջ քան գքըլսառու մղելու միզը՝ նար-  
կալըրած է զայթ (բատ մեզ) երիցս միայն իշխա-  
նաց ցանիկը նաղորդելու, որք նաև անականաբար  
զոնէ իրեւ իրարու յաջորդող վեհապետներ կամ  
կառավարիչներ զոյութիւն ունեցած չեմ։ Այս  
ցանկիրու միայն առաջնոյթ (ստուարագոյնին)  
շնորհիւ զրեթէ տասն դարերու ժամանակամի-  
ջոց մը շահած է։

Դեռ ժամանակն նասած չէ Հայկազնեան անուա-  
նեալ այս կարելու շրջանի իրական պատմութիւնն  
զրելու, պատմական ու բանափրական նետազօ-  
սութիւնը և Ազգ սեպածն արձանագրութեանց  
կատարեալ ընթերցունը՝ անշուշտ այս զործն  
պիտի դիւրացնեմ, սակայն առ այս դեռ իրկար  
տարիներու պէտք կայ։

Մենք կարևոր նամարեցինք ցարդ ծեռոք բե-  
րուած ծանօթութեանց շնորհիւ ուրուազծել նա-  
ւանական պատմութեան մեծ զծերմ, ու զրկ ներ-  
կայ Կապատործն որ կրթայ շատերու զագափար  
մը տալ այս մախական շրջանի Ազգ պատմու-  
թեան մասին, և իրեն առաջնորդ ծառայել զիտ-  
ոնց ու բանափրաց հիտազօտութեանց հետեւյու։

Գործն երեք մասերէ կը բաղկանայ, առաջինն՝  
միեր բնագաւառի մին բաժանմանց, անոր բնակ-  
չութեան, ցեղի, անուան ու լիզուի վրայ բնդա-  
նուր տեսութիւն մ'է երկրորդն՝ այս երկրի բնակ-  
չութեան մինչ ցվրշակնութիւն նարսառութիւնն (Ար-  
տաքսիան) քաղաքական պատմութիւնն է, իսկ  
երրորդն՝ այդ ժամանակամիջոցի քաղաքականութեան  
պատմութեան նախափորձն է։

1908 Յուղիս

Ի Գանձերէ

## ՈՒՐՈՒԱԳԻՇ

## ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

### ԳԼՈՒԽ Ա.

Մեր բնագաւառն՝ բնակչութեան ցեղերն, ա-  
նուններն (Խալդիք, Արմէնք, Հայք, ևն) և լե-  
զուն։

1. Մեր բնագաւառն ու իր հիմն բաժա-  
նումներն։

Մեր բնագաւառն կը տարածուի լայ-  
նութեան  $37^{\circ} - 41^{\circ}$ , և Փարիզի միջօքէա-  
կանով երկայնութեան  $35^{\circ} - 46^{\circ}$ ։ Ստրա-  
բոնի նկարագրած սահմաններն կը համա-  
պատասխանեն մեր այս տուած տարածու-  
թեան։

Մեր բնագաւառն բարձրաւանդակ մ'է,  
որոյ միջին բարձրութիւնն է 1500 մէթր,  
ամենէ մեծ բարձրութիւնն է Մասիս լեռն  
որ շուրջ 5200 մէթր է։

Հայաստանի աշխարհագրական վիճակն  
զայն շատ մը անջատ մասերու (նահանգ)

կը բաժնէ, որոյ վասն և ի վաղուց այդ նահանգներն իրենց ուրոյն իշխանութիւններն ունեցած են, և որք ապա ծնունդ տուած են Հայաստանի ծանօթ բաժանմանց Նկարագրեալ ի Խորենացւոյ:

Նախահայերու կամ Խալդեանց օրով Ուրարտիա<sup>1</sup> (Ուրարտ) կ' անուանէր Վանայ ծովուն հիւսիսակողմեան երկիրն, ապա այդ անունն տրուած է այդ աշխարհի կարեռագոյն լեռան Մասիսի<sup>2</sup>:

Բիանս կը կոչուէր Վանայ ծովուն արևելակողման երկիրն (Վասպուրական), իր Վան<sup>3</sup> կամ Տուսպա (Տոսպ) մայրաբաղաբաւն:

1. Ըստ Ասորեստանեայց Ուշուու, Ուրուշուու, և ըստ Բաբելացւոց Ուրուու, Ուրարտուու: Այս բանն բարձր երկիր ըսել է ըստ Ասորեստանեայց (Աէյս): Այս անունն Խալդեան արձանագրութեանց մէջ չէ յիշուած: Սուրբ զրոց մէջ երկից յիշատակուած է (Ծնն. թ. 4 և Թ. թագ. Փթ. 37):

2. Ի Սուրբ Գիրս (Ծնն. թ. 30) յիշատակեալ Մասիսի (Masias) հետ շփոթելու չէ, սա Հայոց Միջագետաց հիւսիսակողմն Աղձնեաց մէջ կ'իշնայ, և այժմ կ'անուանի Գայրաձաւ տալ:

3. Ըստ Հ. Ֆ. Բ. Լինքի Բիանան աղաւաղմամբ եղած է Բուանա, Վուանա, և ապա Վան: Հաւանական է որ մայրաբաղաբին բուն անունն

Մանեա կամ Միհենի<sup>1</sup> կ' բառուէր Բիանայի և Ուրմիա լճին միջեւ գտնուած երկիրն, և որ ըստ ոմանց այդ լճի շուրջն կը պատէր, այսինքն Ուրմիա լճի աւազանն կազմող երկիրն (Պարսկահայք) այսպէս կ' անուանէր:

Մուսասիրն Վանայ լճին արևմտեան կողմն (Տուրուրերան, Տարոն) կը գտնուէր, իր համանուն մայրաբաղաբաւն:

Մելտիս կ' անուանէր Ուրարտուի արևմտեան կողման երկիրն (Բարձր Հայք):

Նախրին<sup>2</sup> Միջագետաց վերին կողմն կը գտնուէր, համապատասխանելով Խորենացւոյն Աղձնիր և Ծոփիր նահանգաց՝ իր խոռոշական բարձրացուած առաջական գործարան է:

Տուսպա եղած ըլլայ՝ ու ապա երկրի աղաւագեալ անունն տրուած ըլլայ և այդ քաղաքին:

1. Յիշատակեալ ի Սուրբ Գիրս (Երեմ. ԾԱ. 27):

2. Նախրի Ասորեստանեայց լեզով Գևորք կամ Գետոց աշխարհ ըսել է (Աէյս): Սաղմանասարք Գ. ի օրով Նախրին շատ մեծ էր, հիւսիսէն մինչ Բարձր Հայք ու Վանայ ծովով կը ձգուէր, արեւելից մինչ Ուրմիա լին կ'երկարէր, և արևմտից մինչ Ալիս գետն կը հատնէր. այնպէս որ ումանք կարծեցին թէ՛ Նախրին Խորենացւոյն Հայաստանի անունն էր: Սաղմանասարք. էն վերջ Նախրին կը փոքրնայ և Սարգսնէն եւր շատ քիչ անզամ կը յիշատակուի:

բուշկու նշանաւոր գաւառաւն ու համա-  
նուն քաղաքաւ:

Մելիդ կ'անուանէր Նախիի արևմտեան  
կողման երկիրն (Գ. Հայր) իր Մելիս  
(Մելիտինէ կամ Մալաղիա) քաղաքաւն:  
Խորենացւոյ Հայաստանն ամբողջացնելու  
համար կը մնան զեռ մի քանի նահանգ-  
ներ, յորոց Սիւնիքն և Ուտին՝ ի սեպաձն  
արձանագրութիւնս յիշուած Առշեիս և  
Ուշիս երկիրներն ըլլալու են:

Իսկ հիւսիս և հիւսիս արևելք գտնուող  
երկիրներն աւելի Ակիւթական զաղութներէ  
բնակեալ էին. յորս Խորենացւոյ Գուշ-  
գարգն՝ Գոգ կամ Գովք<sup>1</sup> անուամբ Կուրի  
ափունքն հաստատուած Ակիւթական Շակ  
ցեղի զաղութի նշանաւոր թագաւորի մը  
անուամբ կոչուած է, որոց ցեղակից են  
և աւելի արևելք գտնուող Շակաշէնցիք  
(Ե. Շրայտէր, Փր. Լընորման): — Երաս-  
իսի արևելեան աւազանն, այսինքն Խորե-  
նացւոյ Սիւնիքի և Փայտակարանի մի  
մասն բնակեալ էր Ասքանազեան<sup>2</sup> անուա-

1. Յիշատակեալ ի Սուրբ Գիրս, Թիւք Ի. 7,  
Եզեկ. Աթ (18, Աթ 1, 11, 15):

2. Երեմիայի յիշատակած (ԾԱ. 27) Ասքա-  
նազեաններն Երասիսի աւազաններն են իբր

նեալ Ակիւթական ցեղէ մը (Վինքլէն) զոր  
պէտք չէ շփոթել Բիւթանական Ասքանա-  
զեանց հետ՝ որ Փոխակական ցեղ մ'էր  
(Հերոդոտ, Ստրաբոն) Մուտանիոյ ծոցին  
մօտերն:

— Հարաւի Կորդուաց աշխարհն (սեպ.  
արձանազրութեանց Գուրուփոււն?) որ այժ-  
մու Քիւրտերու բուն հայրենիքն է, շատ  
անզամ Հայոց իշխանութեան տակ զրտ-  
նուած է, և ապա նոյն իսկ Հայաստանի  
մաս կազմած է Կուրճեայք անուան տակ:

Մեր հինաւորց արևմտեան զրացիներն  
եղած են Մոսոբներն (Մոսովք ըստ Սուրբ  
Գրոց), որոց երկիրն ապա Փոքր Հայք  
կոչուած է և կամ աւելի Բ. Հայք:

Խալդիոյ համացեղ իշխանութիւնը շատ  
անզամ զաշնակցութիւններ կը կազմէին  
իրարու՝ և երբեմն ալ զրացի Ակիւթական  
ցեղերու հետ, դիմագրելու համար թշնա-  
մեաց և մանաւանդ Ասորեստանեայց՝ որք  
իրենց դարաւոր ախոյեանն եղած են:

Պրացի Արարատայ և Վիննոյ իշխանութեանց.  
«Կոչեցէք ի Երայ որոք զթագաւորութիւնս Ա-  
րարատայ, Վիննոյ, և Ասքանազայ»: Իսկ Ծնըն-  
գոց (Փ. 3) և Ա. Սնաց. (Ա. 5) յիշատակած Աս-  
քանազան՝ իբր գրացի Գամրաց՝ Բիւթանիոյ Աս-  
քանազեաններու նախահայքն ըլլալ կը թուի:

Այս վորքի թագաւորութիւնը բաժնուած էին շատ մը գաւառներու՝ իւրաքանչիւրն ունենալով իւր արքայիկն (զաւառապետ), յորց զան և ապագայ հայ նախարարութիւնը :

Թագղաթփալսար Ա. իր մէկ արձանագրութեան մէջ նախրիի 23 թագաւորիկներու ցանկը կու տայ, և այլուր 60 հատերու, որք լոկ գաւառապետներ ըլլալու են, ինչպէս ստէպ կը տեսնուին Սուրբ Գրոց մէջ։ Ասորեստանեայք նախրիի մէջ երկու ծով կը ճանչնան, վերին (Վանայ) և ստորին (Կապուտան)։

— Այս հատուածս փակելէ առաջ՝ կու տամբ աստ սեպածն արձանագրութեանց մէջ յիշատակեալ աշխարհագրական անուններէն միայն անոնց ցանկն, որոց՝ ներկայիս անուններուն հետ նոյնութիւնն հաւանական կը թուի։

— Ուշտու, Ուրուշտու, Ուրտու, Ուրարտու, Արարտ,

Բիանա, Վաննա, = Վան

Տուսպա = Տոսպ

Մուսափը = Մուշ

Մելիտ = Մելիտինէ, Մալադիս

Աշքուզա, Իշքուզա = Ասքանազ

Սուխիս = Սիւխիք  
Ուխտիս = Ուտի  
Երրախի = Երևան  
Կիեհունի = Գեղարքունի  
Գուխիախի = Գառնի  
Ուշխոխինի = Օշական  
Ուշուանի = Ուշտունի  
Արտազայի = Արտազ  
Էրսիս = Արծէշ  
Արգիստինիլի = Արագածոտն  
Արզակու = Արծն  
Խարիստում = Խորխորունի  
Կիրենի = Կարին  
Ամիտ = Ամիթ  
Ահուրիանի = Ախուրեան  
Արծանիս = Արածանի  
Խիզլաթ, Գլութ = Տիզրիս  
Փուրատ = Եփրատ  
Կիլզան = Խիզան ?

Անիս և անց վերջաւորող տեղուոյ անուններն ըստ Լեմանի Խալդէա - Ալորուտեան են:

Անկեանց օրով Հայաստան երկուքի կը բաժնուի, Եփրատայ արհելեան մասն կ'անուանի Մեծ Հայք, իսկ արևմտեանն

Փոքրի Հայրը՝ և տարրեր կուսակալաց կը  
յանձնուի:

Տիգրան Մեծ այս երկու մասերու միաւ-  
հեծան թագաւոր կ'ըլլայ . սակայն յետ  
իւր պարտութեան՝ Հռովմայեցոց կը յանձ-  
նէ Փոքր Հայրն (64 Ե. Բ) որ զայն երեքի  
բաժնեցին Ա. Բ. Գ. Հայր անուանց տակ:  
Ծոփաց աշխարհը որ Մեծ Հայոց նահանգ-  
ներէն մին էր՝ և շատ անգամ Փոքր Հայ-  
րի հետ միացած էր, մօտ Արշակունի  
հարստութեան վախճանին Յունաց անցաւ,  
որք զայն Զորդորդ Հայր անուանեցին, և  
որ ապա յաւուրս Յուստինիանոսի (67<sup>րդ</sup>  
դար) ուրոյն դբութիւն եղաւ:

Հատ անգամ Բարձր Հայրն՝ Պ. Հայրի  
հետ միատեղ իշխանութիւն մը կը կազմէր  
և հաւանականարար Ա. Բ. Գ. Հայ-  
րերէն զանազանելու համար անուանուած  
է Բարձր Հայր, նկատի առնելով իր զրից  
բարձրութիւնն:

1. Այս բաժանումն աւելի հին ըլլալու է, զի  
բոլոր դրացի ազգեր այսպէս երկուքի կը բաժ-  
նէին իրենց երկիրը՝ որպէս Մեծ Մարք, Փոքր  
Մարք, Մեծ Փոխացիք, Փոքր Փոխացիք, Մեծ  
Քետացիք, Փոքր Քետացիք, հաւանականարար  
Ալեկեանք այս հին բաժանումն հաստատեցին:

Հինգերորդ դարուն Մեծ Հայրի սահ-  
մանակից օտար տարրերն (հիւսիսի Ակիւ-  
թացիք, հարաւ—արևելքի Փարսիկք, Մարք,  
և հարաւի Կորդուք ու Ասորիք) մասսմբ  
հայացած ըլլալով՝ Խորենացին փոքր ինչ  
աւելի ընդարձակ Հայաստան մը կու տայ,  
և Մեծ Հայրն 15 նահանգներու կը բաժ-  
նէ. Արարատ, Վասպուրական, Տուրուրե-  
րան, Արևիք, Բարձր Հայր, Ծոփք կամ  
Չորրորդ Հայր, Աղճիք, Մոկք, Կոր-  
ճեայր, Պարսկահայր, Արցախ, Ուտի,  
Տայր, Գուգարք և Փայտակարան. իսկ  
Փոքր Հայրն երեքի, Ա. Բ. և Գ. Հայր  
անուանի:

— Հայաստանի աշխարհազբութեան  
մասին շատ մը աշխարհազիրներ յիշա-  
տակութիւններ ըրած են, սակայն անոնցմէ  
երերն Սարարոն, Պտղոմէոս և Պլինիոս  
իրական ծանօթութիւններ կու տան: Սարա-  
րոն 20 գաւառ կը ներկայացնէ, Պտղո-  
մէոս 20էն աւելի, իսկ Պլինիոս 120. և  
գիտենք թէ Խորենացին անոնց թիւն 189ի  
կը հանէ: Առաջին երկուքն միայն մեծ  
բաժանումներն ու գաւառներն տուած են,  
իսկ վերջիններն անոնց ստորաբաժանում-  
ներն և երկրորդականներն աւ թուած են:

2. Մեր բնագաւառի և անոր բնակչութեան անուններն։

Ասորեստանեայք այս երկիրն ընդհանուր կերպով Ուրարտիա (Արարատ) կ'անուանեն, և սա ոչ միայն Ուրարտու իշխանութեան նախահայոց գաշնակցութեան գլուխ գտնուած ժամանակ՝ այլ և անկէ վերջ ալ՝ երբ գահերէց աթոռն ի Բյանա կը գտնուէք։

Հերոդոտ երկրի բնակչութիւնն Արորուտեան կ'անուանէ որ Ուրարտեանի կամ Արարատեանի աղաւազումն է, սակայն երկրի ժողովուրդն ինքնինքն Խարդիի ծառայեներ կը կոչէ յանուն Խալդիի, իրենց գերազոյ Աստուծոյ, որոյ վասն և շատեր սկսան վերջերս զեախահայս Խարդեանք անուանել, նման Ասորեստանեայց որբ իրենց Ասոր Աստուծոյ անուամբ կը կոչուէն։

Հաւանաբար ասկից կու զայ և Խարդիք անուանակոչութիւնն Հայաստանի հիւսիսակողման և Ան Ծովու եզրն գտնուող երկրին, ուր բնակող ժողովուրդը գուցէ աւելի երկար ատեն հաւատարիմ մեալով իրենց Աստուծոյն, և կամ նորեկ ցեղէն (Արմէններէ) հալածեալ՝ Խալդեանք մեծ բազ-

մութեամբ անդ խմբուելնուն՝ այսպէս անուանեցաւ այդ երկիրն։

Լինք Խալդեարուն և Ալորոտեաններուն նոյնութիւնն չընդունիր, ու կը կարծէ թէ՝ Խալդիք Քաղդէացիներ են, այդ ազգին հիւսիս հաստատուած մէկ գաղութն, իսկ Ալորոտեաններն՝ Սպերացիներ են՝ ձորոխի տականին բնակիչք։

Օտարք մեր բնագաւառն Արմենիա և մեր ցեղն Արմեն կ'անուանեն։ Առաջին անգամ Գարեն Ա. Փ (Վշտասպեան) Պեհկստանի եռալեզուեան արձանագրութեան պարսկերէն խմբազութեան մէջ կը տեսնուի Արմենիա (Արմենիա) բառն իբր համապատասխան Բարելոնական բնագրին Ուրարտու բառին (510ին), և յետ այնու զայն կը գործածեն բոլոր պատմիչներն։

Այս անուանակոչութեան (Արմէն) մասին կարծիքներն կը զանազանին, և կ'արծէ ասս զանոնք համառօտարար պատկերէլ։ Բայ Խորենացւոյ Հայկազն Արամ Նահապետի անունին առնուած է, որ բաջարի իշխան մ'եղած է, և դրացի ազգաց վրայ նշանաւոր յաղթութիւններ տանելով՝ իր անուամբ կոչուած է մեր ազգն ու երկիրն։

Խորենացւոյ Արամի հաւանականաբար սեպածեւ արձանագրութեանց Արամէն է, Քըլիստոսէ Օ դար առաջ ապրող Աւրարտեան թագաւորն՝ որ ազգային զաշնակցութեան գլուխն անցաւ, Սաղմանասար Գ.ի դիմաղրեց ու վերջապէս չարաչար յաղթուեցաւ: Ներկայիս մէջ կան և Խորենացւոյ հատկողներ, սակայն այս բացատրութիւնն հաւանական չէ մեզ համար, զի բնական չէ որ այդպէս չարաչար յաղթուող մը, որով հարստութիւն մը վերջ կը գտնէ, իր անունն տայ իր երկրին և ժողովրդեան, և եթէ այդպէս եղած ըլլար՝ յետ Արամէի Ասորեստանեայց վիմաղրոշմ արձանագրութեանց մէջ այս անունն կը գտնէինք:

Նմանապէս հաւանական չէ որ 7<sup>րդ</sup> դարուն վերջերն Բիհանայի հարստութեան Երիմանա թագաւորին անունէն առնուած ըլլայ, զի այն ատեններն Նախահայոց իշխանութիւնն տկարացած էր, և Երիմանա չունեցաւ որ և է նշանաւոր զործ իր անունն տարածելու և նովաւ կոչել տաւլու իր բնագաւառն:

Ոմանք (Պօշար) ըստ երբայականի Հարմինին եկած կը կարծեն այս բառն,

այսինքն Լեռոն Մինոյ կամ Լեռնադաշտ Մինոյ երկրին . և կամ Արմինին էն Լեռոն Լոռսի, իբր թէ Հայք Լեռանց վը բայէն լուսինն դիտող ու պաշտող եղած ըլլան և ըստ այնմ անուաննեալ իրենց երկրն:

Ըստ Վալի Մինոյ կամ Մինէ երկինք, երկնային ըսել է, ուստի և Արմենիա լեռնե երկնային: Վերջապէս ըստ Գարբագեանի Լյրինն Զենդավեստայի բառ է, որ կը նըշանակէ արևմտեան, զի Հայաստան էր արևմուտք երկրին Մարաց և Պարսից, ու այսպէս անուանեցաւ Գարեհ Վշտասպեանէն: Այս բոլոր բացատրութիւններ քաշը քը շամարուին մեզ:

Ըստ Տարմըսթէթէրի և Բասմաջեանի Արարատ և Մինէի երկրաց Գարեհի առաջնոյ լուծին տակ անոր կայսրութեան 18<sup>րդ</sup> նահանգն կազմելնուն՝ այդ երկու երկրաց միացեալ անուամբ Արմինի անուաննեցաւ ի Պարսից և ապա յայլոց<sup>1</sup>:

1. Գարեհի օրով Եփրատի և Տիգրիսի վերին աւագանն Այսինի անուան տակ 11րդ նահանգն աւագանն Այսինի անուան տակ 11րդ նահանգն կազմէին, իսկ Աքեելեան Հայաստանն (Աւարարտիան և Մինին) որպէս և ձորսի աւագանն անուան 18րդ նահանգին մէջ կը գտնուէին. ուստի

Այս տեսութիւնն ճշմարտանման կը թուէք, սակայն Մինուաշայ՝ Խալդեանց թագաւորին՝ Մալաթիոյ կողմերն զանուած մի արձանազրութեան մէջ Խորմանի կամ Արմենի բառն դորա ի հնուց գոյութիւնն կը ցուցնէ, որով և այս ենթագրութիւնն կը կորանցնէ իւր արժէքն Լէճման (1901):

Ոմանք (Բրազը) աւելի հին կը կարծեն այս բառն և նոյն իսկ թուղմէս Գ. Եղիապտացի աշխարհակալի տիրած երկրաց ի շարս յիշատակեալ Թմէնեն աշխարհն դաշնակից Բօտէնու երկրին՝ որ Ասորւց և Միջագետաց հիւսիսակողմն կը զանուէք՝ Արմենին կը համարին: Սակայն լընորման, Մասրեօ և այլք թմէնէնն Լիբանանն կը կարծեն: Եթէ նոյն իսկ Բրազչի կարծիքն ճշմարիտ ըլլայ, այն ատենուան Արմէնիան պէտք է Սուրբիոյ հիւսիսակողմն՝ Մալաթիոյ կողմերն որոնել, ուր և՝ ինչպէս ըսինք՝ Մինուաշայ մի արձանազրութիւնն կը յիշատակէ զանոնք: սակայն թուղմէս Գ. Կարմամիշն (մայրաքաղաք

և վերոյիշեալ գիտուց ենթագրութիւններն ըսկ կըզբամբ իսկ սխալ են, քանի որ Ուրարտիայէ և Մինիէ կազմուած նահանգն Արմենիա չէր անուանէր:

Քետացւոց՝ այժմու Պէտէճիքի կողմերն ) չանցաւ:

Այժմու զիտունը ընդհանրապէս ընդունելով հանդերձ Ալորոտեանց, Ուրարտեանց և Խալդիներու նոյնութիւնն, Արմէններն տարրեր ցեղ և ժողովուրդ կը կարծեն. արդարեւ նոյն իսկ մեր յիշատակած Խալդիներու թագաւորն Մինուաշ Մալաթիոյ մէջ թողած իւր արձանազրութեան մէջ զանոնք Խորմանի կամ Առմենի կ'անուանէ, իբր իր ցեղէն տարրեր ժողովուրդ մը: Հերոդու Արմէններն կը զանազանէ Ալորոտեաններէն, այս վերջիններն Հայաստանի հիւսիս արևելեան ժողովուրդ մը կը համարի, իսկ Արմէններն արևմտեան կողմանց, և թէ այս երկու ազգերն Պարսից հարկ վճարող տարրեր խումբերու մէջ յիշատակուած են:

Պատմութեան ընթացից մէջ կը տեսնուի որ Ալորոտեաններն կամ Ուրարտեաններն կամ Խալդիներն գէպ արևելեան հիւսիս կ'երթան և կ'աներեւութանան, և Փոքուն Ասիոյ ու Փոքր Հայոց մէջի Արմէններն անոնց տեղն կը զրաւեն, և հինաւուց Ուրարտեան կամ Խարդեան կ'ըւլայ Արմենիա:

Ա՞վը էին Աւրարտեանց յաջորդող Արմէններն, և ո՞ր երկրի բնակիչը : Հերուգոս (480-425) Փոխազգիներէն սերած կը համարի և անոնց հետևողութեամբ Մակեդոնիայէն գաղթած ու Ասիա անցած :

Եւդոքիս (Eudoxe) (408-355) Արմէններն Փոխազգիան ցեղ մը կը համարի և այդ երկու ազգաց լեզուին մէջ մեծ նմանութիւն կը հաստատէ :

Ստրաբոն (50-30) հաստատելով Հերուգոսի վկայութիւնն՝ աւելի մանրամասնութեան կը մտնէ, և կ'ըսէ թէ Արմէնոս անուն քաջ մը Թիեսալիոյ Արմէնիոն քաղաքէն (որ կը գտնուէր բնդ մէջ Լարիսայի և Փէռէի (Phérée) Բորէ (Bobée) լճին վրայ հաստատուած), Յասովինի հետ Թիեսալիայէն նաւով մը անցաւ Ասիա, ու իր գաղթած երկրին տուաւ իր անուն + և գորա ապացոյց կը համարի Արմէններու և Թիեսալացւոց զգեստոց՝ մանաւանդ մինչեւ ծունկերն իջնող վերարկուի նմանութիւնն :

Անշուշտ կարելի չէ այս դիցաբանական վէպին հաւասարալ և մէկ անձի գաղութով կազմեալ համարիլ մեծ ազգ մը : Հաւանականարար իրական գաղութի մը

պատմութեան յիշողութիւնն է սա , որ յընթացս ժամանակին բերնէ բերան անցնելով՝ վիպական ու դիցաբանական ձեւմ'առած է, զոր գարեր վերջ արձանագրած է Ստրաբոն :

Մեր պատմահայրն Խորենացին ալ ոյժ կու տայ այս պատմուածին «և զմեծն թիւսազիա, յորմէ Հայր» ըսկելով (ԱշԽ.):

Ե. Մայօ և Քոէզմէր ի Թրակիոյ համարին Արմէններն, սա և մասամբ նաև Խորդներու կարծիքն կը շօշափէ, զի հին Թրակացիք ցեղակիցք էին թիեսալացւոց : Փոխազցւոց<sup>1</sup> Մակեդոնիայէ գալուստն

1. Փոխազցիք Մակեդոնիայէն Ասիա անցան (Քրիստոսէ 26-30 զար առաջ Վոսփրէն կամ Տարտանէլէն) և Բիւթանիոյ հարաւակողմն Ամեսոսի արևմանան ափանց ու Լիւգիոյ միջևն մի թագաւորութիւն հաստատեցին Քրիստոսէ շուրջ 800 տարի առաջ :

Փոխազիան բերրի էր, մարգերով և այգիներով հարուստ, ժողովուրզն աշխատանքը, լաւ կենացանարոյծ և մանաւանդ ձիարոյծ էր, երկրագործութեան մեծ յարգ կու տալին, իրենց թագաւորներն հարստութեամբ նշանաւոր էին: Նեզոնին յունականին մօտ էր, մասնաւոր զիր ունէին, որոց տառերէ ոմանկը ուղղապէս Փիւնիկականէն եկած էին, և միւսներն կատամշականէն: Գլխաւոր աստուածք երեք էին, գիրազյնն էր Բակայոս, ապա կու զար Մինէս (Լուսնոյ Աս-

այժմ պատմական կերպով ընդունուած է, որոց ցեղակից և հետերնին կամ հետեւուղութեամբ Ասիա անցած կը համարուին և Արմէններն։ Սակայն այլը՝ որպէս Լէման՝ կը կարծեն թէ Արմէն ցեղն կիմմիրեան՝ է և անոնց հետ ի միասին զաղ-

տուածն). և Ամմա մայր Աստուածուհին՝ որ ըստ երկրաց տարբեր անուններ կ'առնէր։

Փոխգացիք ենթարկուած են Քեթացւոց պարբերական արշաւանաց, զարս ընդհանրապէս կը յաջողէին յետս մղել։ Կիմմերեաններն կամ Գամիրք գրաւեցին զայն (695ին), և որ ապա Լիւդիոյ մի նահանգն եղաւ (620)։ Կիաքսարի օրով Մարաց կայսրութեան մաս կը կազմէր, ապա Կիւրոսի լուծին տակ մտաւ։ Անտի անցաւ Մակեդոնացւոց։

1. Կիմմերեանք կովկասի լեռնաշղթային և Սև Ծովու հիւսիսակողման բնակիչք էին, ի մէջ կոյս Տրդ գարուն Ակիւթական Սկրուս ցեղն Մազգութներէն յալթուելով՝ դէպ արկեմուտք եւ կաւ, վօլկան և Տօնն անցնելով Կիմմերեաններն հալածեց։ Կիմմերեանց մի մաս Խրիմի թերակղին ապաստանեցաւ ու այն տեղւոյն տուաւ իր անունն, սակայն մեծ մասն ըստ ումանց Տներ և Գանուրք գետերն անցնելով՝ Վոսփորի նեղուցէն Ասիա անցաւ, ու ըստ Հերոդոտի և այլոց Կակասիոյ լեռնաշղթայի ստորոտն քերելով և Սև Ծովու եզերքն հետևելով եկան այդ ծովու հարաւային եզրն։ Ըստ Վինքլէսի Կովկասեան լեռներէն անցան, ու երկրի բնակիչներն երկուքի բաժնեցին, մին դէպ արկեմուտք և միւսն

թած են Սև Ծովու և Կովկասի հիւսիսային կողմէն, և ի Փոքր Ասիա հաստատուած։ Բայ Լէմանի կիմմերեանց կամ Գամիրք երեք անգամ մուտք գտած են ի Խալլիա, նախ առանձինն, երկրորդ Թրոկացւոց հետ, և երրորդ Քեթացւոց

հարաւ արեւելք մղելով։ Կովկասի ճամբով զալուստնին աւելի հաւանական կը թուի այժմ։ Կիմմերեանք կուրի աւազանն մոնելով Ուրարտեանց և Մաննացւոց զարնուեցան և Ասրոնի բանակէն հալածուեցան (720)։ Կիմմերեաններն հալածող Սկիւթացիներն Արաքսի արեկեան աւազանն հաստատուեցան, զրացի Ուրարտեանց և Մաննացւոց ու Արանազիանց ծնունդ տոիին։ Խոկ Կիմմերեանց մեծ մասն հաստատուեցան Սև ծովու եզրերն ի Պոնտոս, ի Պաֆլագոնիա, ի Բիւթանիա, ևն։ Սինորն և Հերակլէան իրենց մայրաքաղաքներն էին։ Թրակիայէն 710ին աւտեններն Վոսփորի ճամբով եկող Թուկոններու միացան, ու Փոխգիոյ տիրեցին։ Կապագովկիոյ վրայ ալ զացին՝ որ ենթակայ էր Սորենստանեայց, սակայն Ասուր Հաստոնէն յայնկոյս Ալիսի մղուեցան (678), Լիւդիոյ վրայ ալ զացին ու Սասինն ատին Կողոպատեցին (652), Մազնիստեան այրեցին, Եփեսոսն պաշարեցին։ Ապա Ակիւթական արշաւամքին զարնուելով անոնց հետ խառնուեցան ու ծանօթ արշաւանքն ըրին մինչ Եղիպտոս, և ապա Կիաքսարէն հալածուեցան Ակիւթացւոց հետ։

Ըստ Ցիմմերի գերման գիտունին սոքա կը ներկայացնեն հին պատմագրաց ոմանց Գամիրքն,

հետ, որոց զըստի էին Փոքր Ասիոյ մէջ եղած ատենին։ Շատ տկար են իր այս կարծեաց իրը ապացոյց փաստերն։

Գամբաց կամ Կիմմերեանց՝ Խալդեանց տիրելն հաւանական չէ, զի ինչպէս ի պատմութեան պիտի տեսնեմց Դրու դաշտուն (Ն. Ք.) Ակիմթական<sup>1</sup> արշաւանքի աւ-

որք երկրագործ ու այգեպան էին, և ըստ Սարաբոնի մասնաւոր լեզու մ'ունէին։ Սեմացւոց նըման կը թլքատուէին, խոզի միս չէին ուտեր, մեծնից մէջ պաշտօնական կուսապղծութիւն կը կառարէին, Գամբաց երկիրն ապա Ա. Հայք անուանուեցաւ։

1. Ակիմթին այսօրուան Ոռոմանիոյ և Փամբի միջեն ձգուած և Սեւ Ծովէն 20 օրուան ճամբայ գէպի հիւսիս տարածուող երկիր մ'էր։ Ակիմթացիք երեք զլխաւոր ցեղերու կը բաժնուէին։ Ակոլոգները՝ արևմտեան կողմը, Շահերը՝ յԱրևելս, իսկ Սատմաթներն՝ Երկուքին մ'չն։ Ակիմթացիք Իրանական ժողովուրդ մ'էին և ոչ թէ Մօնկօլ։ Կարճահասակ և մազուս էին։ Բայց Հերոգուտիք, թափառական ժողովուրդներ են ասոնք. առանց հաստատուն բնակութեան, և տեղոյ մը մարզագետնին սպառմամբ այլուր կը տեղափոխուէին։ Չորս կամ վեց անիւով կառքերու մէջ կը բնակէին, ուր 2-3 սենեակներ կը շինէին, այդ կառքերը 2-3 զոյգ եզներով կը ձգուէին։ Տեղափոխութեան ատեն կանայք և տղայք կառքերու մէջ կը մնային, իսկ այրերն ձի նստած՝ իրենց ոչխարաց երամներն կ'առաջնորդէին։ Լաւ ձի կը նստէին, քաջ որսորդ

տեն ի Փոքր Ասիա էին, ամոնց զարնուեցան ու խառնուեցան և ի միասին վարնուեցան Կիաքսարէն։

Ակրմէններու Փոխւգացւոց հետ Մակեդոնիայէ զալուստն կը վկայեն հին պատմագիրք, որպէս յիշատակեցինք, և առ այդ ապացոյց է նաև Թեսաղիոյ Արմէնիոն քաղաքն։ Խսկ Լեհման զԱրմէնս Կիմմերեանց ցեղակից և ընկեր կարծելուն զիխաւոր ապացոյցն է այս վերջնոց Փոքր Ասիոյ զիխաւոր մայրաքաղաքին՝ Աինորի մօտ

պատերազմիկ էին։ Թշնամւոյն գանկով զինի կը խմէին, ու անոնց մազերն իրենց ձխոց թամբին վրայ կը հաստատէին։ Գլխաւոր սնունդնին էր եփած միս, ձիու կաթ և այդ կաթով պատրաստուած պանիք։ Մեռելոց մարմինն ժողովը զեան մէջ կը պատցնէին։ Թագաւորինն զմուսելէ ետքը օրերով երկրին մէջ շրջան ընել կուսային, այդ առթիւ խրախնանութիւններ կ'ընէին, ծիեր կը զոհէին, և նոյն իսկ ժողովրդէն ումանք իրենց քիթն, ականջն, մատն են։ Կը կորատէին, վերջապէս քառանկիւնի գերեզմաններու մէջ կը թաղէին։ Իր կիներէ միոյն հետ շատ մը ծառաներ և ծիեր ալ կը զոհէին զերեզմանին վրայ։ Մահուան տարեդարձին 50 ծառուաներ ևս կը զոհէին։

Ակիմթացիք բազմատուուածեան էին, օակայն ոչ տաճար ունէին և ոչ արձան կամ պատկեր։ Գլխաւոր տատուածութիւննին պատերազմի Ա-

Արմենիոն քաղաքի մը գոյութիւնն, որպէս և իրենց միւս կեղբոնին Բիւթանիոյ Որմէնիոն (Արմէնիոնի աղաւաղումն) լեռն: Սակայն ընդունելով հանդերձ այդ տեղեաց Արմէններու կողմանէ անուանումն՝ զԱրմէնս Փոխւգացւոց ցեղակից կը համարիմք, զի Փոխւգացիք ևս՝ կիմմերեաններէ առաջ՝ այդ կողմէրն զտնուած են, ուստի և դուքա Արմէններու անցած տեղերն կը ցուցնեն: Կան և այլ աշխարհազրական առուններ, որպէս Ալիս գետի անունն զոր

րէս աստուածն էր, զոր կանգնուած սուրի մը ձմբն տակ կը պաշտէին, և որոյ ձիեր ու մարդիկ կը զոնէին (ընդհանրապէս 100 բանտարկեալներէ մին), նաև անոր բազուկներն կտրեւ լով՝ արինով նուիրական սուրն կ'օծէին: Հուրն և տարերն ալ կը պաշտէին: Կախարդներն մնձ յար ունէին Սկիւթիոյ մէջ:

Չամիրամ իբր թէ տիրած է Սկիւթացւոց: Տեսանք թէ Սկուզպիներն հալածեցին կիմմերեաններն՝ որք ապա Ասիա անցան: Սկիւթական զաղութներ հաստատուեցան ի հիւխսակողմն Խալդիոյ, որպէս Աքրանազեաններն, Գուգարք ևն. որք միանալով Շրդ գարուն Արևմտեան Ասիան ժածէցին ժամանակ մը ու Կիաքսարէն հալածուեցան: Դարեհ 513ին անոնց վրայ երթալով փախան ու մնձ վաս պատճառեցին: Աքիմինեանք անոնց դաշնակցեցան: Աղեքսանդրի միքանակն կոտորեցին:

Արմէններն տոււած են, անոր ջրի աղիուշ թեան համար զայն աղի, ալի և վերջապէս Ալիս անուաննելով: Ալիսի բղիսած լեռն Արմենիոն կ'անուանէ Հերողոս:

Իրիսի ճիւղերէ մին (Պոնտական գետակ) զոր Յոյններն Լուրս կ'անուանէին՝ Արմէնը իրենց բարբառով զայն Գայլ գետ կոչած են: Ալիսի վերին աւազանն և ապա Մեկլաբինէի կողմէրն Արմէնիա եղած է գրեթէ երեմին (Մասրերօ):

Արմէններն ի Փոքր Հայս (Ընդ մէջ կապաղովվիոյ և Պոնտոսի) մուած ըլլալու չեն մինչ մի. գար (Ե. Ք.), զի այդ գարուն Ասորեստանիայց թագաւորն Թամազլաթ Փալասար Ա. որ այդ կողմէրուն տիրեց՝ չ'յիշատակեր զԱրմէններն: Սակայն Խալդիներու թագաւորին Մինուաշի (828-784) Մալաթիոյ մէջ թողած մէկ արձանագրութեան մէջ կը տեսնամք զայնս Խոռմանի, կամ Առմենի անուան տակ (Լեհաման 1901): Ուստի Փոքր Հայք մուտքերնին տեղի ունեցած է Յրդ գարուն: Արդ՝ կամ Թուղմէս Գ. Բ. Բլենենը Արմէնիան չէ, և կամ Թագլաթ Փալասար մոռցած է զանոնք յիշատակել, առաջինն աւելի հաւանական է: Ինչ որ ալ ըլլայ Արմէն-

ներն Արևաթիոյ կողմերէն Ծոփաց աշխարհի ճամբով Մեծ Հայք մոտած են:

Արմէններն ի Փոքր Հայս գտնուած աշտեննին անշուշտ խառնուեցան Փոխւզացւոց, Քեթացւոց, ապա Կիմմերեանց, ու Ակիթացւոց հետ, և արդէն այս երկրաց մէջ գտնուած հին ոսկերոտիք ու գանձ կերն մարդաբանական տեսակէտով խառնուրդ մը կը ցուցնեն, և որ անդ բազմազան ցեղերու գոյութեան հետևանքն է:

Բայտ Վիռօֆի ի Պօղազ – Քէօ հաւաք քաղեմի Փոխւզացւոց գանկերն շատ նման են Արմէններու (Հայոց) գանկին, այսինքն Արփական են, կարճազլուխ (Brachycéphale):

Արմէններն Եփրատն անցած են 7<sup>րդ</sup> դարուն, հաւանականաբար հալածուելով Քեթացիներէ և Գամմերներէ:

Արմէններն գանդաղաբար մուտք գտած են և ոչ թէ զէն ի ձեռին, ու երկրին հին բնակչաց (Ալորտեանց, Ուրարտեանց կամ Խալդեանց) տեղն բռնած են, հալածելով զանոնք դէպի հիւսիս՝ Կովկասեան Լեռնաշղթայն: Այդ կողմերու (արեւմտեան հիւսիս) մի նահանքն ուր աւելի հոծ էին Խալդեանք՝ անուանեցաւ Խարդիք:

Հերողոսի ժամանակ Արմէններն կը գտնուէին Եփրատի արևելեան կողմի երկայնքն, ու Արածանիի արևմտեան աւազանն, և կը ներկայացնեն Պարսից 13րդ նահանքն, մինչդեռ Ալորտեաններն 18րդ նահանքին մէջ կ'իյնան (Ապիրացւոց և Մութիէններու հետ):

Արմէններն Եփրատն անցնելուն իրենց Եփրատայ արևմտեան երկրին Փոքր – Արմենի, իսկ Եփրատայ Արևելեան երկրաց Մեծ – Արմենի անունն տուին, նման Քեթացւոց, Փոխւզացւոց և Մարաց որք ունէին Մեծ–Քեթացիք և Փոքր – Քեթացիք, Մեծ–Փոխւզացիք ու Փոքր – Փոխւզացիք, և Մեծ – Մարաց ու Փոքր – Մարաց բաժանումներն:

Բայտ Եէնսէնի այդ եկ ժողովուրդն Քեթացիներ կամ Հաղեաններ<sup>1</sup> են, որք 7<sup>րդ</sup>

1. Ի Սուրբ Գիրս յիշատակեալ Քեթացիներն, զորս այժմ Խիտի, Խետի, Khatti, Kittite կ'անուաննեն Եւրոպացիք, և Վիշնայի Ախիթարեանք ու իրենց հետևողք Հաղեան կը կոչեն: Քեթացիք Սուրբոյ և Փոքր Ասիոյ միջնե կարելոր իշխանութիւն մ'եղած են երբեմն, մոռցուած էին. զիտունք չորհիւ Եզիդական և Ասորեստանեայ արձանագրութեանց վերակազմնցին անոր պատմութիւնն, այս վերջին տաշ

դարուն (Ն. Ք.) տիրելով այս երկրին և  
իրենց անուամբ (Հաթիօ) երկիրն ու ժո-  
ղովուրդն յետ այնու անուանեցաւ Հառք  
կամ Հայք: Եէնսէնի այս կարծիքն ընդու-  
նուած չէ ընդհանրապէս, զի փաստերն  
անզօր են: Այս զաղութն Քեթացի չկըր-  
նար ըլլալ, զի Սարգոն 717ին արդէն  
քանդած է անոնց իշխանութիւնն և թէ  
այս ցեղի քաղաքակրթութեան և վիմա-  
դրոշմ արձանագրութեանց հետքերն չեն  
տեսնուիր ի Մեծ Հայս:

թիներն: Էստ ոմանց Քեթացիք Կովկասէն ե-  
կած ու նախ կապագովկիա և անտի հիւսիս-  
յին Սուրբա և ի Կիլիկիա հաստատուած են.  
ըստ այլոց Սեմականներ են. այժմ աւելի կը հա-  
ւատան թէ Փոքր Ասիոյ յատուկ ազգ մ'են նը-  
ման այլ տեղական ազգերու (Խալիք, Մուսաք,  
Թապաւ, Խալզի) Ասիական անուանեալ ցեղի  
կը Քերաբերին, ուստի և ոչ Սրբականներ են և  
ոչ ալ Սեմականներ: Ասոնց մի մասն Եգիպտո-  
սի Հիւսոս (Հովհի) թագաւորներն տարած են  
Մեռեալ Ծովու արևմտեան կողմն, զոր Փոքր-  
Քերացիներ կ'անուանէին Եգիպտացիք, իսկ Հիւ-  
սոսի մեծ մասն Մեծ-Քերացիներ: Փոքր Քեթա-  
ցիներն չըէից հետ խառնուեցան:

Մեծ Քեթացիք Եգիպտացի աշխարհակալաց  
Թուղմէս Գ.ի, Ռամէս Ա.ի, Ռամէս Բ.ի և  
Սիթի հետ չափուած են, ու քանիցս հաշտութիւն  
կնքած են դաշնակցութեամբ: Քեթացիք իրենց  
սահմաններն ընդլայնած են մինչ Յունական

Վերջապէս հաւանականաբար այդ եկ  
ժողովուրդն Փոխօգիոյ կողմերէն կու գար  
որոյ վասն վկայեն արժանահաւատ պատ-  
միչք: Հին պատմագիրք զմեզ Փոխօգացոյց  
ցեղակից կը համարին ու Եղուաց մէջ  
մեծ ինսամութիւն կը հաստատեն:

Հերոսոսոս Փոխօգացիներն ու Արմէն-  
ներն համացեղ եղայլը կ'անուանէ, իսկ  
Դիոնիսիոս Աղիկառնացին համալեզու կը

Արշակեղագոսն, և Փոքր Ասիոյ խորերն, Փոխ-  
օգիներէ քանիցս յետս մղուած են: Ռամէսն  
զապատկան աղաման և մանաւանդ Ասո-  
ր.ի տաեն կը ակարանան ատեն կը յաղթուին ու  
բեստաննայց ծաւալման ատեն կը յաղթուին ու  
կը ճպատակին Թագլամթ Փալասարի (ԺԱ. Պար).  
Փիչ վերջ Փոքր ինչ կը զօրանան և յաղթութիւն  
մը կը տանին Ասորեստաննայց վրայ. սակայն  
Ասոր-Նազիրաքալ 877ին կը տիրէ անոնց և  
Կարկամիջ հարուստ մայրաքաղաքնին կը կո-  
ռուպուէ: Սազմանասար Գ. 858ին կրկն կը հպա-  
տակեցնէ զանոնք:

Քեթացիներն այլ ևս Ասորեստանն կը յարգեն,  
և միայն գելք յԱրեւելս Մալաթիոյ իշխանու-  
թեան վրայ պարբերաբար կը յարձակին և միշտ  
յետս կը մղուին. Սարգոն 717ին մայրաքաղաք-  
նին կը կործանէ, Մարաց և Պարսից Կայսրու-  
թեան օրով բոլորովին կ'անհետանան:

Քեթացիք զարգացեալ քաղաքակրթութիւն  
մ'ունէին նորհիւ Եգիպտոսի և Ասորեստաննայց  
հետ շարունակական շիմանց: Նշանագրերով ար-  
ձանագրութիւններ թուացած են՝ գեր անըն-

գիւրուագիծ

Համարի. Եւտոքսիոս (յոյն) Հայերէնն և  
Փոխզերէնն նմանաձայն են, կ'ըսէ:

Հնախօսք Արմէններու ու Փոխզացոց  
հագուստներն համանման կը համարին ընդ-  
հանրապէս որ ցեղակցութեան նշան մ'է:  
Քաերքսէսի ընդդէմ Յունաց պատերազմին՝  
Արմէններն ու Փոխզացիք միւնյն ձևով  
զինեալ էին:

Հաւանականաբար Արմէններն իրենց  
չետ բերին իրենց Փոխզացոցինին նման  
այբուբէնն՝ սերեալ ի փիւնիկականէ, որ  
յետ ժամանակ մը զործածութեան բարձի  
թողի եղաւ ու Մեծն Մեսրոպ՝ Ե. զարուն  
զայն գտնելով ու կատարելազործելով՝ ի  
զործածութեան դրաւ, և որ իր անունն կը  
կըէ այսօր: Ապազյին կը մնայ այս կար-  
ծեաց վրայ վերջնական վճիռ արձակել:

Չեմք կընար ընդունիլ սակայն թէ՝ այս  
եկ ժողովուրդն (Արմէններն) երկրին վա-  
ղեմի բնակչութիւնն ամբողջովին հալածե-

թեռնլի՝ որք Եգիպտական նշանագրերէ եկած  
կը համարուին:

Քեթացոց մէջ արուեստ և վաճառականու-  
թիւն զարգացած էր, շատ հարուստ էին. կրօ-  
նիւ Քանանացոց կը մօտենային, երկիրն փոքր  
իշխանութեանց բաժնուած էր՝ որոց իշխաններն  
երկրին վեհապետին կը հպատակէին:

լով դէպ հիւսիս՝ անոնց տեղն բռնած ըլ-  
լան, անշուշտ աւագ մեծամասնութիւնն  
մնացած է անդ, և նորեկ ժողովուրդն  
խառնուած է անոնց հետ: Այդ եկերն ըլ-  
լան Փոխզացի կամ Կիմմերեանք երկուքն  
ալ Արփական՝ մեծ ընտանեաց վերաբերող  
ցեղեր են, առ այս ամեն ոք համաձայն  
է. սակայն զալով երկրի բնիկ հինաւուրց  
ժողովրդեան ցեղին՝ հեղինակներն տարա-  
կարծիր են: Բստ ումանց Սեմականք էին  
նորա, ըստ այլոց Արփականք, ըստ այլոց  
բազմաց Փոքր Ասիոյ յատուկ Ասիական  
անուանեալ ցեղին կը վերաբերէին: Մեր  
պատմահայրն մեր առաջին նահապետն՝

1. կը կարծուէր թէ՝ Հնդկա-Եւրոպական ցե-  
ղի խանձարուրն կեղրանական Ասիոյ բարձրա-  
ւանդակներն էր, սակայն նորանոր ուսումնասիւ-  
րութիւններ և մանաւանդ Եեզուաբանական գիւ-  
տեր կը ցուցնեն թէ՝ Հնդկա-Եւրոպական ցեղի  
վաղեմի բնագաւառն եղած է Տնիքեր և Պօլկա  
գետերու աւազաններն ներկայացնող Աւ. Հողերն,  
ուրկէ ճիւլ մը դէպ Արևելք երթալով՝ ծնունդ  
տուած է իրանեան և Ճնշիկ ազգերու, և այլք  
դէպ Արևմուսաք ուղղուելով կազմած են Լատին-  
եկրն, Կեղտերն, Ցոյներն և Գերմաններն. Ա-  
րևմուեայց խումբէն բաժնուելով Ասիա անցած  
են Փոխզացիք և Արմէններն, որոց անջատունն  
տեղի ունեցած է ըստ Շահօտէրի Քրիստոսէ 30  
դար առաջ:

Հայկ՝ Բարելոնէ եկած պատմելով՝ կարծես ոյժ կու տայ առաջին ենթադրութեան, այս կարծեաց պաշտպանք իրենց իրքեւ փաստ կը համարին Հայոցս կազմախօսական, և եղուական և կրօնական ինչ ինչ Սեմական յատկութիւններն ու տարրերն, բայց այլը արդար իրաւամբ այդ ամենն բնական կը համարին երկու դրացի ժողովրդոց համար՝ որբ դարաւոր առնչութիւններ ունեցած են, և հետեւաբար անզօր նախահայուն Սեմականութիւնն ապացուցանելու: Ամենէ հաւանականն է որ այս օրուան Հայն՝ Խալքեաններու (Ասիական ցեղ) և Արմէններու (Արիական ցեղ) ձուլումն է, ունենալով և Սեմական արեան խառնուրդ:

Նախահայոց բուն ցեղն ստուգելու համար կարելի է զիմել Գանկաչափութեան: Արդարեւ ոմանք կարծագրոյն (Brachycéphale) կը համարին զնախահայս, ինչպէս Արիական ազգերն, այլը երկարացրուի (Dolicocéphale) կը կարծեն երկրին հին բնիկներն, ինչպէս Սեմական ցեղերն, իսկ ուրիշներ մին թէ միւսն կը գտնեն հին գանկերու մէջ, և այս երկուքի խառնուրդ Միջազգոյններ (Mésitocéphale-

լէ) ալ, որով և անգամ մ' ևս կը հաստատուի թէ՝ զեռ ժամանակն եկած չէ այս մասին վճիռ արձակելու: Մենք մի այլ գործի պատրաստութեան առթիւ պէտք ունեցանք զծել Փոքր Ասիոյ ցեղերու մարդարաննական քարտէսն, առ այդ շատ մը մարդարան հեղինակաց գործերն թղթատեցինք, սակայն հնար չեղաւ մեզ մեր նպատակին համուելու: Այս զիտութիւնն որ շատ լոյս կրնայ սփոել մեր ինպոյն վրայ, զեռ մեր բնագաւառի համար շատ ուսումնասիրուած չէ:

Մեր Հայ անուանակոչութիւնն ոչ ի վիմագրում արձանագրութիւնս տիսնուած է և ոչ ալ վաղեմի պատմագրաց մէջ յիշատակուած է, միայն վրացիք զմեզ Հայու կամ Հայու կ'անուաննեն: Բատ Խորենացւոյ՝ մեր ազգութեան հիմնադիր Հայի՝ նաշապետի անուամբ Հայ կը կոչուինք, ուստի և այժմու և օտար պատմիչը շատ

1. Մեր ըստ Խորենացւոյ՝ նախահայր Հային հուկայ աղեղնաւոր մ' է նման Յունաց Օրիոնին, և որոյ վասն և Ասւեր Գրոց մէջ մեր նախնիք այդ Օրիոն քաջարին երկնից մէջ ներկայացնող համաստեղութիւնն՝ Հայկ թարգմանած են երկիցս. (Յոք, լ. 31 և Եսայի ձք. 10):

անգամ զմեկ Հայկեան (Haïkan) կ'աւ նուանեն: Բստ ոմանց խարդի կամ Հարդի Ալսուծոյ անունէն եկած է, և Հարդեն, Հայր, Հայ եղած է: Բստ Եշնսէնի՝ ինչպէս տեսանք Քեթացւոց Հարիօ անունէն ելած է Հատր կամ Հայք:

Լեզուաբանք կը կարծեն թէ՝ Հայկ հայր կամ նախահայր կը նշանակէ, Հնդկա-Եւրոպական Peter բառէն սերած ըստ լեզուաբանական մի օրինաց, որով P զիրն Հայերէն Հ-ի կը փոխուի և Ե զիրն Ի-ի, որով Peter եղած է Հայո, Հայր, Հարի (անուն որ տրուած է նախանեաց բնագաւառին) և Հայկ՝ Հայրին փաղաբշանն է ինչպէս Հայրիիկ:

Շոէյոյէռ կ'ըսէ թէ Peter բառն զըեւ թէ նոյնութեամբ մնացած է պետ բառին մէջ զօրապետ, քաղաքապետ են: Ալմէն ներն Խալդիա մանելով ինքինքնին այն ժողովրդեան պետն կամ հայրն անուանեցին իրը ազնիւ ցեղ և յորմէ մնացած է Հայ անունն:

Մեր բնագաւառի Հայաստան անուանումն նորագոյն է, և Պարսիկ ազգեցութեան տակ կազմուած Հայ և Արան (երկիր) պարսկերէն բառով. ինչպէս Քիւր-

տիստան, Լազիստան, Արագիստան, և որ հստանականաբար Ծոր դարէն սկսած եմք գործածել:

Յօտարաց և գուցէ նախաբար մեզմէ Փոքր Արմենիա, Մեծ Արմենիա անուանակոչութեանց համապատասխան են Մեծ Հայք և Փաքր Հայք կոչումներն:

\*  
\* \*

Մեր Ազգ, Պատմագիրք Ագաթանգեղոսէն սկսեալ և իրարմէ ընդօրինակելով Աստուածաշունչի Տունն Թորգումայ և Արամազեան ցեղն իրը հոմանիշ կը համարին մեր ցեղի, սակայն ապացուցուած է թէ՝ Թորգումայ Տունն (Togorma) մասնաւոր երկիր մ'է Հայաստանի հարաւ արևելեան կողմն (Քիվէպթ), հաւանականաբար սեպածե արձանագրութեանց Tilgarima ամրոցին կողմերն: Աստուածաշունչ զրոց այս մասին մի քանի խօսքերն երբէր հակառակ չեն թուիր մեզ, զոր օրինակ Եղեկիէլ «Տունն թորգումայ ի ծագաց հիւսիսյ» կ'ըսէ (Ա.Բ. 6), և այլուր Թորգումայ տունէն ձիեր ու ջորիներ ի Տիւրոս բերուիլն կը յիշատակէ (Ի.Ե. 14), զի արզարև Թորգումեանց երկիրն Ասորեստանի համար հիւսիս էր, և թէ անզոր պէս

ի մեզ ձիաբուծութիւնն և ջորերուծութիւնն ժաղկած էր և այսօր իսկ է: իսկ Ասքանազն (Askenas, Ashkanzař, Ishkouzař) Մինիի մօտ Ակիւթական փոքր իշխանութիւն մ'էր ինչպէս առիթ ունեցանք ըսելու:

Ահաւասիկ այս շփոթութեան պատճառաւ, մեր առաջին քրիստոնեայ նախահարք թունդ կրօնասէր՝ ուզելով իրենց ազգին ծագումն գտնալ ի Սուրբ Գիրս, Ծննդոց գրքին մէջ առ այդ ունայն պրատումներէ ետք՝ կը տեսնան որ՝ իրենց բնագաւառի դրացի երկու փոքր ազգերու Ասքանազեանց և Թորգումեանց ծագումն դրուած է (Ծնն. Ժ. Յ. Անաց. Ա. 6). «և որդիք Գաւմերայ՝ Ասքանազ և Թիրար և Թորգում» , ուստի և կը համարին թէ՛ հայերն այս երկու դրացի ցեղերէն տարբեր ծնունդ չեն կրնար ունենալ, ուրեմն և Հայկն Թորգումյ զաւակն կը համարին՝ որով Ասքա-

1. Կոյի Յաբեթ որդույ զաւակն:

2. Թիբաթ անուամբ ժողովուրդ մը կայ Ուրալ լերանց մէջ, որ ցոյց տայ թէ՛ Ակիւթացւոց վաղեմի Երկիրն այն կողմն էր. ուսկից եկած են Ասքանազեանք, Թիբաթեանք և գուցէ Թորգումնանք:

3. Եթէ Հայկն Աստուածաշունչ զրոց Գամերայ զաւակ Յաբեթի որդին համարիմք, սա Կոյի

նազ կ'ըլլայ Հայկայ հօրեղբայրն, ուստի և Հայկայ սերունդն կը կոչեն Թորգումնան և ազգակից Ասքանազեանց: Միւս կողմանէ իրենց այս ենթազրութեան հաստատութիւն կը ցուցնէն Երեմիայի (ԾԱ. 27) «Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեանց, և Ասքանազեան զնդին» խօսքն, յորում կը տեսնեն Մարգարէին բերնօք Աստուծոյ հրամանն ուզել Արարատեանց (իմա Թորգումեան ուան՝ ըստ մեր նախնեաց) և Ասքանազեանց. այսինքն Գամերի երկու զաւակաց սերնդոց՝ ի կործանումն Բարելոնի:

Ծանօթ է բանասիրաց թէ՝ այս հաստուածն Երայերէն բնազրին մէջ սապէս է<sup>1</sup>. «.... հրաւիրեցէր ի վերայ զորա զազաս, կոչեցէր ի վերայ զորա զթազաւորութիւնս Արարատայ, Մինոյ և Ասքանազայ....»,

Թոռնորդին կ'ըլլայ, մինչդեռ ըստ Խորենացւոյ Գամերի Թերաս որդւոյն զաւակն է Թորգում. որով և Հայկ Կոյի թոռան թոռն կ'ըլլայ: Այս Թերան յիշաստակուած չէ Սուրբ Գրոց մէջ: Այս խնդիր մեր նիրեն դուրս է:

1. Տես ի ծանօթութեան Աստուածաշունչի, հրաւարակեալ Ամերիկեան Սուրբ Գրոց ընկերութեան կողմանէ, Կ. Փոլիս, 1895, Տպ. Պատառալեան:

յորում կը տեսնուի թէ՝ մարգարէն կոչ  
կ'ընէ ո՛չ միայն Արարատեանց և Ասքա-  
նազեանց՝ այլ և Մինոյ երկրին որ Ա-  
րարատեանց դրացի մի այլ Խալդեան իշ-  
խանութիւն էր: Ասքանազեանք անշուշտ  
դրացի են միւս երկու իշխանութեանց  
գուցէ և դաշնակից այն ատեն, և հաւա-  
նականարար մարգարէն տեղեակ այդ կա-  
պակցութեան՝ դաշնակից իշխանութեանց  
կոչ կ'ընէ յանուն Եհովայի:

Կար և մի այլ Ասքանազեան ազգ (As-  
scanien) որ Փոփոքական ցեղ մ'է ի Բիւ-  
թանիա, որոց Նախահայրն Ասքանազ եր-  
գուած է Հոմերէ: Այս Ասքանազեաններու  
անուամբ կայ գաւառ, գետ, լիճ, նաւա-  
հանգիստ և կղզեխումբ: Այս ցեցէն սե-  
րած է Փոփոքական իշխանական տունն:  
Գուցէ Արմէններն Փոփոքական Ասքանազ  
ազնուական ցեղէ սերած ըլլալու աւան-  
դութիւնն ունէին իրենց մ'ջ, ու Աստուա-  
ծաշունչ զրոց Ասքանազներն զանոնք կար-  
ծեցին, բայց ինչպէս դիտել տուինք,  
Առլր Գրաց Երեմիայի Ասքանազներն  
Ակիւթական ցեղ մ'էին և տարբեր Փոփո-  
քական Ասքանազներէն, գուցէ Ծննդոց

Գրաց մ'էջ յիշատակեալ Ասքանազն այս  
վերջնոց կը վերաբերի<sup>1</sup>:

\*  
\* \*

Ի մի բան մեր բնագաւառի նախնի բը-  
նակիչը Խալդեանք կամ Ալորուեանք կ'ա-  
նուանուէին, որ հաւանականարար Ասիա-  
կան անուաննեալ Փոքր Ասիոյ ցեղին կը  
վերաբերէին: Արմեն անուաննեալ Փոփոքաց-  
ւոց ցեղակից Արփականներն Մակեդոնիա-  
յէն Փոքր Ասիա անցան, ժամանակ մը  
Փոփոքիա՝ ապա ի Փոքր Հայս (ընդ մ'ջ  
Կապագովկիոյ և Պոնտոսի) մնացին, Գա-  
մրաց ու Քիթացւոց հետ Փոքր ինչ խառ-  
նուեցան, ու ապա Մալաթիոյ կողմէրն  
իջան և Ծոփաց Երկրին ճամբով 7<sup>րդ</sup> դա-

1. Գիտունք ումանք այս անուելի շփոթութէն  
նէն գերծ մնալու համար Յիւթանական Ասքա-  
նազներն Ascanien կ'անուաննեն, իսկ Ակիւթա-  
կաններն Askenas:

Եթէ անուանց պատահական նմանութիւնն  
միևնույն ծնունդն ընդունիլ հարկազրէր զմեզ՝  
պարա էինք Գերմանիոյ հիւսիսակողման մի գա-  
ւառ ևս Ասքանազնանց ցեղակից ընդունիլ զի նոյն  
անունն կը կրէ, և երբեմն մասնաւոր իշխանու-  
թիւն մ'ալ ունեցած է այդ անուամբ:

բուն Մհծ Հայք մտան, տեղացիներն մասսամբ դէպ հիւսիս հալածեցին, ու անոնց միացելոց հետ խառնուելով յառաջ եկաւ Արմէն կամ Հայ ազգն:

Հայաստանի շրջակայ բնակչութիւնը հետզհետէ հայացան ու Հայ ցեղին հետ խառնուեցան. արդարն Հայաստանի հիւսակողման Ակիւթացիք ու համացեղ Աշողուանը, Արեւելեան նահանգներու (Փայտակարանի, Ախւնիքի), և Պարսկահայոց Մար ու Պարսիկ ազգաբնակութիւններն, հարաւ արևմտեան (Աղձնեաց), Ասորեստանեայք և արևմտեան զաւառաց (Բարձր - Հայք, Չորրորդ - Հայք, Փոքր - Հայք) Յոյներն՝ հետզհետէ Հայոց հետ խառնուեցան ու անհետացան: Եոյնն տեղի ունեցաւ և Արտաշատի, Երուանդաշատի, Վանի և Նախիջևանի Հրէական կարևոր զաղութներու հարար: Միայն հարաւի Կորդուիք մասսամբ միայն հայացան (Զազա), այլը պահեցին իրենց ազգութիւնն (այժմու Քիւրտերն):

Յ. Մեր բնագաւառի վաղեմի լեզուն. — Նախահայք անշուշտ կը խօսէին այն լեզուով որով զրուած են իրենց վիմագրոշմ արձանագրութիւնը, արդ այդ սեպաձեւ

զրութիւնը սկսուած են կարդացուիլ, սակայն լեզուի մասին զիտունը կարծեօր կը տարբերին: Հինքս, Մօրթման աշխատեցան հայերէնով բացատրել, զայդ կը պնդէ դեռ Հիսարլեան. Հ. Սանտալճեան բաներու մեծ մասն միայն Հայերէն կը կարծէ, կիւսար անծանօթ լեզու մը կը համարի, Լընորման և Աէյս վրացերէնի մերձաւոր կը կարծէն, և սովու ոյժ տուած կ'ըլլան Հերողոտի վկայութեան՝ որ Ալորոտեաններն Արմէններէն դէպ հիւսիս հալածեալ կը համարի. Միարան (Գալուստ Տէր Մկրտիչեան) Ուտերէնի շատ մօտ կ'ենթազրէ և սովաւ Հերողոտի հետեւողաց դասէն կրնայ համարուիլ: Բատ ոմանց այս արձանագրութեանց մէջ Խոր կամ Խոռ բառէն զատ հայ բառ չտեսնուիր:

Մ. Մէյէ կը կարծէ թէ Հայ (Արմէն) լեզուն Քառէ 6-7 դար առաջ տեղական մի այլ լեզուէ շատ փոխառութիւններ ըրաւ, որ անշուշտ Խալդեան բարբառն էր:

Հայերէնն ալ Կովկասեան լեզուաց (Վրացերէնի) նման սեռի հետք չունի, և սա վաղեմի լեզուի (Խալդեանի) ազգեցութիւննէ (Մէյէ, Մառ): Լեզուարանը և զլիաւորաբար Մառ՝ Սիմական լեզուաց և Խալ-

դեան ու Վրական բարբառներու միջև կարեսը առնչութիւններ կը հաստատեն: Այսանք կարծեցին իսկ թէ Խալդեան Անական լեզու մ'է, յորմէ սերած է վրացերէնն, և որ կը բացատրուի Ալորոտեանց գէպ հիւսիս հալածուելովն, սակայն քանի որ Խալդեանց Ասիական ցեղին վերաբերիլն՝ այժմ աւելի ընդունուած է, գուցէ այդ առնչութիւնն Անմականաց հետ շարունակական շփման արդինքն է:

Տըլակարդ և Փ. Միւլէք այժմու Հայ լեզուն իրանականի մի ճիւղն կը համարէին, սակայն Հիւրշման և այլ լեզուաբանք կը ցուցնեն թէ՝ իրանական ազդեցութիւնն նորագոյն ժամանակաց գործ է, իսկ բռն հայ լեզուն Արիական ընտանեաց աւելի եւրոպական ճիւղին մօտ է, որպէս և կը բացատրուի Արմէն ցեղի գալուստն և բնագաւառն նկատի առնելով:

Վերջապէս կան որ հայ լեզուն Դուրանական ընտանեաց մէջ կը զասեն, սակայն այդ հաւանական չէ և Դուրանական ազդեցութիւնն վերջին տասն դարերու գործն է:

Հայ լեզուի Արիականութեան գլխաւոր ապացոյցներն են թուականաց նմանուա-

թիւնն, քերականական ձևերու նոյնութիւնն: Ա. Ա. Դ. դիմորոշք մեծ դեր կը խաղան հայերէն գերանուանց և բայից մէջ որպէս ի հնդեւրոպական լեզուս: Անուններու սեռականի, տրականի, և գործիականի նշաններն ի+ մ+ ւ+ գ+ բ+ նոյն են Լատիներէնի հետ:

Յայերու խոնարհումն մեծապէս կը նըմանի Յունականին: Հայերէնի ապառնի մէջ յ գրին դերն կը տեսնուի և Սանսկրիտի մէջ:

Ի մի բան Նախահայոց կամ Խալդեանց լեզուն Ասիական ընտանեաց կը վերաբերէր, և զոր Ալորոտեանք գէպ հիւսիս տանելով՝ Կովկասեան լեզուաց և զըլխաւորապէս վրացերէնի ծնունդ տուաւ: Արմէնք Արեաց եւրոպական ճիւղին վերաբերելով՝ իրենց լեզուն աւելի Լատիներէնի և յունարէնի մօտ էր քան Արեաց Ասիական ճիւղերուն (Սանսկրիտի և Իրաներէնի):

Խալդեան և Արմէնեան լեզուաց խառնուրդն է հայերէնն, ուր Արիական տարբն աւելի զօրաւոր է, և վերջապէս յընթաց ժամանակին իրանական և ապա Դուրանական ազդեցութիւնը կրած է:

## ԳԼՈՒԽԻ Բ.

---

Ուրուագիծ պատմութեան Հայոց մինչ ց'Աբ-  
շակունի հարստութեան հաստատութիւնն.

1. Նախապատմական ժամանակ. — Մեր  
պատմահայրն՝ Խորենացին՝ Քրիստոսէ 23  
դարեր առաջուընէ կը սկսի Հայոց պատ-  
մութիւնն, և որ հաւանականաբար Հայոցս  
Ասորեստանեաց հետ միևնույն ժամանակ  
պատմական կեանք մը սկսել տալու նը-  
պատակաւ է: Բայ այժմու զիտական  
սկզբանց՝ եթէ ի նկատի առնեմք միայն  
վիմագիր արձանագրութիւնք և մօտաւոր  
ժամանակաց պատմիչներու վկայութիւնք՝  
մեր բնագաւառի մասին ամենէն հին յիշա-  
տակութիւնն 14<sup>րդ</sup> դարէն առաջ չ'ան-  
ցնիր<sup>1</sup>: Նոյն իսկ եթէ 16<sup>րդ</sup> դարու Թուղթէս  
Պ. Եզիպոտացի աշխարհակալի ի շարս իր  
նուաճած երկրաց յիշատակած Շմինեն ա-

1. Կինոսի և Շամիրամի 19րդ դարուն Հա-  
յատանի տիրապետութիւնն՝ այդ անձնաւորու-  
թեանց գոյութեան նման առասպելային է:

նուանեալն իբր Արմէնիա ընդունիմք՝ Բրա-  
զիլի հետևողութեամք, այդ ժամանակուան  
Արմէնիան Փոքր Ասիոյ հարաւակողմն ո-  
րոնելու է, զուցէ Մալաթիոյ շրջակայներն  
և ոչ թէ ի Մեծ Հայս, ուր Խալքեանք  
բնակէին այն ատեն:

Եզիպոտացիր դար միայն (16<sup>րդ</sup>-15<sup>րդ</sup>)  
իրենց իշխանութիւնն կրցան մինչ Հիւսի-  
սային Առուիս և Մալաթիա տարածել,  
և 15<sup>րդ</sup> դարուն (1440 ի ատեններն) բա-  
շուեցան: Ասորեստանեայք սկսան տակաւ  
զօրանալ և իրենց իշխանութեան սահման-  
ներն ընդլայնել, ի ձեռն Սաղմանասար  
Ա. ի (1300-1275) և Թագղաթ-Փալասար  
Ա. ի (1275-1265) մինչ Նաիրի և Տի-  
զրիսի ակունքն, կոմմագինէ, և Մոսոբ  
(Կապպագովկիա):

Շուրջ 1200ին ատեններն սակայն ար-  
դէն այս երկիրներն իրենց լուծն թօթա-  
փած ու ազատած էին:

Թագղաթ-Փալասար Բ. (1130-1090)  
Ասորեստանեաց թագաւորն զէպ ի հիւսիս  
երեք արշաւաններ կ'ընէ, առաջինով Քուր-  
իսիէն (հիւսիսային Միջագետք և Կոր-  
դուաց աշխարհն) կը հպատակեցնէ, բա-  
ղաքներն կը կործանէ, աստուածներն կը

գերէ ու երկրի հարստութիւնն կը կողոպատէ. երկրորդ արշաւանքով՝ Նախրիի վրայ կը քալէ ուր իրեն դէմ կ'ելնէն 23 թագաւորներ... որոց օգնութեան կը փութան և այլք, որով ընդդիմազրաց թիւն 60ի կը հասնի. և այսպէս քանիցս չափուելով կը յաջողի զանոնք հպատակեցնել մեծ անզթութիւններ ի գործ զնելով, ու իշխանաց զաւակներն պատանդ առնելով կը հեռանայ. ապա 1200 ձիու և 2000 եզի տուրքով ազատ կը թողու զանոնք: Երրորդ արշաւանքով՝ Մոսոբներն և կոմմազինեցներն կը հպատակեցնէ: Թագղաթ-ֆալասար բազմաթիւ յիշատակարաններով արձանազրել կու տայ իր արշաւներն: Մեր բնագաւառոի մէջ երկուք են իր յիշատակարաններն, մին ի կոճանկու<sup>1</sup> և միւսն Սուրբնատայ այլին մէջ<sup>2</sup>:

1. Մանազկերտէն Յ ժամ հեռի կը զանուի:

2. Վերին Տիգրիսի ձախակողման մի օժանդակ գետն է, որ այժմ Սկսիկ-սու կամ Պիրքիկ-սու կ'անուանուի. այս գետն իրը 6 ժամ ճանապարհաշափ երթալէ եւոք՝ ապառաժի մը տակն կը մտնայ և կէս հազարամեդը հեռուէն դուրս կ'ելնէ, այդ ելից տեղին այր մը կայ՝ յորում 5 արձանազրութիւններ կան, որոց մին թագղաթ-ֆալասարինն է:

Ասուր-Նազիր-Արաւ Բ.ի օրով (1060) Նախրեցիք այլ հպատակաց նման իրենց լուծը կը թօթափեն:

Թագղաթատար կամ Թուկութինինիք Բ. (889-885) Նախրիի վրայ կ'երթայ և զայն կը հպատակեցնէ<sup>1</sup>, սակայն ապա վերստին կ'ապստամբին:

Ասուր-Նազիր-Արաւ (885-860) իր մայրաքաղաքն դէպ ի հիւսիս, և Քաւար կը տեղափոխէ, և կը սկսի դէպ հիւսիս և հիւսիսային արեւելք արշաւաններ ընել: 884ին իր ձեռնարկած արշաւին առթիւ Նախրեցիք նուէրներով զայն ետ կը դարձնեն, սակայն ապա կ'ապստամբին, ուստի և Ասուր-Նազիր-Արաւ անոնց վրայ կ'երթայ 880ին և 879ին և մեծ անզը թութիւններ ի գործ զնելով կը հնազանդեցնէ զանոնք: Սա առաջինն է Ասուրեստանեայց վեհապետներէն որ Աւրարտիոյ սահմաններն հասաւ, զրաւեց այն կիրճերն որք կը ասնին դէպի Արծանիսափ (Արածանի) աւազանն, Քիսառփ (Աստոն), Կիւզան (Խիզոն?): Աւրարտիա հպատակութիւն խոստացաւ, որոյ վրայ կ'ենդանեաց,

1. Սուրբնատայ այլին մէջ ունի մի արձանազրութիւն:

52

զինւոյ և պղինձի տուրք դրաւ։ Ներկայացցուցիչ մը կարգեց ի Քիսասի (Սասուն) և իբր կառավարութեան կեղրոնական բաղաբ սահմանեց Տամտամազունն (Հաւանականարար Խարբերդի և Տիարպէրիրի միջև)։ Սա ևս Սուրնատայ այրին մէջ միարձանազրութիւն ունի։ Ասուր-Եազիր-Աբալի իշխանութեան տաւաջին տարիներն Ուրարտիոյ վրայ կ'իշխէր Սարիսարիս՝ մը՝ որոյ յաջորդին Արամէի հետ չափուեցաւ ապա։

2. Խարդեամ Հարսառքիւն. — Այս տեհններն (ի մէջ կոյս 9 րդ դարուն) մեր ընազաւափ նախկին իշխանութիւնը ի տես Ասորեստանեայց օր քան զօր զօրանալուն՝ և նախատեսելով իբենց ընդհանուրին ըստ պառնացող վտանգն, դաշնակցական միութիւն մը կը կազմեն, իբենց զլուխ ունենալով Ուրարտուի թագաւոր Արամէ<sup>2</sup> (Ա-

1. Բեկը և Լեհման Արամէէ առաջ կ'բնդունին այս Սարիսարիս՝ զաւակ Լութիպրինի մը։ Լինք այս երկու անձնաւորութեանց (Լութիպրին, Սարիսարիս) զոյութիւնն ընդունիր։

2. Գիտութեան ներկայ վիճակին մէջ միզ կարելի չէ Ուրարտիոյ արքայից իշխանութեան սկիզբն և վախճանն որոշել, սակայն քանի որ

բամ<sup>3</sup>) որ և Եազիրիի իշխան կ'անուանէր։ Աս ատեհներն Ուրարտիան յաջողած էր իշխելու Եազիրիի արեմտեան կէսին, Բիանայի, Արածանիի աւազանին (Տուրութերան) և Մալաթիոյ, Արամէի<sup>1</sup> կեղրոնական իշխանութեան մայրաքաղաքն էր Արզամացան<sup>2</sup>։

իբենց ժամանակակից Ասորեստանեայց թագաւորներու իշխանութեան ժամանակն ցոյց կուտամք՝ զիւրին է մերայնոց ժամանակն մակարերել։

1. Այս Արամէն Խորենացւոյն Արամին ըլլալուէ, ժամանակագրական տարբեր կարգաւ, որոյ հայրենասիրութիւնն ըլլայէ մեր պատմահայրն։ Սա ըստ Խորենացւոյ ժամանակակից էր Նինոսի՝ որ անոր մարգարտէ վարսակալ կիելու իշխանութիւնն տուաւ։ Դիոնէսիոս Սիկիպացին Նինոտի ժամանակակից Բարզանէս անուն Հայոց թագաւոր մը կը յիշառակէ որոյ յաղթած է Նինոս, սակայն ապա զայն իր իշխանութեան մէջ հաստատած։ Գիտեմք արդէն թէ՝ Նինոս պատմական անձ չէ, այլ հաւանականաբար Ասորեստանի Նինիբ Աստուածն։ Համիրամ որ ըստ Խորենացւոյ յաղթած ու պատերազմին մէջ սպաննած է Արամէի զաւակն Արայն՝ նոյնակէս պատմական զոյութիւն չունի, Գուշիաններու մայր Աստուածունին էր՝ նման մեր Անահուայ։ Ուստի և նկատի առնելու չեմք։ Արամ ըստ Արամական լեզուի Բարձր ըսել է։

2. Մասբերո կը կարծէ թէ՝ այդ քաղաքն ապագայ աշխարհազերու Արծիկին (Արծկէն) է՝

Ասորեստանեայք հաշտ աչքով չ'էին  
կընար նայիլ այս միութեան վրայ, ուսու-  
տի և Ասուր-Եազիր-Աբալ իր իշխանու-  
թեան 18<sup>րդ</sup> տարին Արամէի վրայ գնաց,  
Կուպառուն այրեց, Տամաւամազունի կողմն  
իջաւ, հակասակ իր անզթութիւններուն  
չկրցաւ գրաւել Ամիզն, և աւելի առաջ  
երթալ չյանդզնելով, այն կողմերէն 6000  
անձեր գերի վարեց և Նինուէի մօտերն  
իբր գաղութ հաստատեց: Իր մեկնելէն ետք  
կրկին ապստամբեցան այդ երկիրներն՝ ան-  
շուշտ Արամէի զրդմամբ: Ասուր-Եազիր-  
Աբալ ունի և Սուբրնատի այրին մէջ մի ար-  
ձանազրութիւն:

Սաղմանասար իր թագաւորութեան ա-  
ռաջին տարին (860) արշաւեց Նախրիի եր-  
կրկին և խուրուշկիա գաւառն ասպատա-  
կեց ու նոյն անուն քաղաքն և այլ բազ-  
մաթիւ քաղաքներ այրեց. Կակիա թա-  
գաւորիկին խոյս տուաւ: Սաղմանասար Ա-  
րամէի Սուգունիա քաղաքին վրայ կ'եր-  
թայ կ'առնէ: Այս նուաճումն ժամանա-  
կաւոր ազգեցութիւն կ'ունենայ՝ ու կրկին

Մանազկերտի մօտ: Խոկ ըստ այլոց Կարնոյ հա-  
րաւ արելեան Արծն քաղաքն:

Նախրեցիք Արամէի զրդմամբ կ'ապստամ-  
բին:

Արամանասար երկու տարի վերջ (857)  
Արամէի իշխանութիւնն ի սպառ բառնալու  
մոտք, մեծ բանակաւ դէպ Հիւսիս կ'ելնէ,  
Նախրին կը նոււաճէ, Արածանին կ'անցնի,  
Առւխմէի գաւառն կը մտնէ, Արզաւըսուին  
վրայ կ'երթայ, ու պաշարմամբ կ'առնէ  
կը կործաննէ. սակայն Արամէ Ատտարի  
լեռներն ապստանած էր: Սաղմանասար  
իրիտիա լերան վրայ (Բինկէօլ տաղ?) իր  
յաղթութիւնն արձանագրել կու տայ, ու  
Արամալիի (Արմաւիր?) վրայ կ'երթայ  
կ'առնէ, կը քանդէ: Զանզիում երկիրն  
անցնելով Վանայ Ծովս կ'երթայ, արձա-  
նագրութիւն մը կը թողու. Գելզանի իշ-  
խանէն նուէր կ'ընդունի և Նախրիի՝ Խու-  
րուշկիա գաւառակի Կակիա իշխանին վր-  
րայ կ'երթայ, անոր Շիլա ամրոցն կը  
գրաւէ և 3000 մարդ կը գերէ ու իր  
պատկերն Տիգրիսի ափանց ապառաժնե-  
րու վրայ քանդակել կու տայ:

1. Ըստ նորագոյն գիւտերու երեք են Տիգրիսի  
ափանց մօտ Սաղմանասարի թողած արձանա-  
գրութիւններն, որոց երկուքով կը պարծենայ  
թէ տիրած է Նախրիի ծովէն (Վանայ լիճ) մին-

Յաջորդ տարին կապուտան ծովու չարաւակողմն կ'արշաւէ, ժողովուրդն նուեռով ծովուն բացերն կը փախչին. Ասուրեստանհայն անոնց կը հետեւ ու ծովն արինով կը ներկէ: Այս ամէն յաջողութիւններն ժամանակաւոր ազգեցութիւն կ'ունենան, Արամէ կրկին իր երկրներն ձեռք կ'անցնէ, և վերջապէս 12 տարիներ վերջ Սալմանասար (845) կրկին Նախրիի վրայ կու գայ, Առունատի այրին մէջ արձանագրութիւն մը կը թողու, Աւրարտիոյ սահմաններն կը մտնէ և Դափանիի (Լարնոյ հարաւակողմն) իշխանն աշնոր կը հպատակի, և առանց Արամէի ետեէն իյնալ խորհելու կը դառնայ:

Արամէի կը յաջորդէ Լուդիպրինի մը: Ո՞վ էր Լուդիպրին, Ասորեստաննեայց կողմանէ Աւրարտիոյ վրայ դրուած տեղացի

չե Մեծ ծովն արևմտից (Միջերկրական), թէ գրաւած է Քիբացուց ողջոյն աշխարհն, Ասոհմիէի, Դախանիի, Աւրարտիոյ, Գելզանի, իսկ միւսով կը յաւելու թէ՝ տիրած է Արամէի Արզաքուն քաղաքին, Խուբուչկիայի, Միլիտինէի և իր իշխանութիւնն տարածած է մինչև Ադի գետն (Ավիս?): Սալմանասար երեք արշաւներ ըրած է ի հիւսիս, իր թագաւորութեան Ա. Գ և ԺԵ տարիներն, իր արձանագրութիւններն այս վերջին արշաւանաց ժամանակէն են:

Կառավարիչ մը, թէ հարկատու իշխան մը, թէ Արամէի զաւակն կամ անոր ցեղէն յաջորդ մը և կամ սոսկ անհատ մը որ Ազգ. իշխանութեան զլուխ կ'անցնի:

Լուդիպրինի զործոց մասին բան մը չգիտեմք, իր զաւակն Արիդուրիս Ա. Աւրարտիոյ նշանաւոր թագաւորներէն կ'ըլւայ:

Սալմանասար Գ. քանիցս չափուեցաւ Արիդուրիսի հետ, 833ին իր Տիանասուր զօրավարն Արիդուրիսի վրայ զրկեց, որ նախ յաղթեց, ստկայն ապա յետս մղուեցաւ: 830ին Մաննայի վրայ կ'երթայ, Աւտարի թագաւորը կը փախչի: 829ին Տիանասուր մեծ բանակաւ վերստին եւ կաւ, Խուբուչկիա, Մաննա, Պարսուասպատակեց և Մուսասիրի Զարափիս քաղաքն և 46 այլ քաղաքներ կործանեց, Աւրարտիոյ 50 քաղաքներն այրեց, ստկայն քիչ վերջ Սարիդուրիս վերստին ապստամբեցաւ:

Արիդուրիս Ա. 828ին իր աթոռն Տուսպաս (Տոսպ = Վահ) կը փոխադրէ, ամպաստամբեցաւ:

1. Եթէ Արամէ առաջ մի այլ Արիդուրիս քնկունիմք, սա կ'ըլլայ Սարիդուրիս Բ.

ըութեանն համար, ու զայն անասիկ վիճակի կը վերածէ<sup>1</sup>, ինքզինքն արքայից արքայ, թիսնայի բազաւոր և Նախրիի իշխան կը հռչակէ: Իլնուէէն գրիչներ բերել տալով՝ Ասորեստանեայց վեհապետներու նման, ու անոնց պարձենկոտ ու ճովն իր գործերն արձանագրել կու տայ ապառաժից վրայ, անոնց սեպածե գրերով ու լեզուաւ<sup>2</sup>: Արիդուրիսի յաջորդներն այլևս ինքզինքնին թիսնայի թագաւոր, Տուսպասի մայրաքաղաքին տէր կը հռչակեն. սակայն Ասորեստանեայը միշտ Ուրարտուի թագաւոր կը կոչեն զանոնք:

Արիդուրիսի յաջորդ Խշորմիս Ա.ի օրով Ասորեստանեայց Շամսի-Ռաման Գ. արքայն (825-812) երից կ'արշաւէ Նախրիի վրայ, առաջինն անձամբ, երկրորդն ի ձեռն իր սպարապետին՝ որ 820 ին 200 քաղաքներ կործանելով զայն կը հպատակեցնէ, ու վրան ձիու տուրք կը դնէ. երրորդն անձամբ, յորում Պար-

1. Ասորեստանեայը երբէք չեն կրցած Տուսպա մտնել:

2. Արձանագրութիւններէն երկու հատ ծանօթ են մեզ:

սուա, Խուլպուսկիա, Մաննա, Գիլիզբունատա երկիրները կ'ասպատակէ, սակայն թիսնան յարգանք կը ներշնչէ և Ասորեստանեայն անդ չերթար:

Շամսի Ռաման Գ.ի որդին Ռամանի սասի Գ. (812 - 783) Մաննայի վրայ կ'երթայ, և վերջապէս կը հպատակեցնէ զայն 811ին. իր յաղթութեանց արձանագրութիւններն կան վանայ ապառաժից վրայ: Ռամանի սասի կը սափառուի 808ին և 807ին կրկին Մաննայի վրայ երթալ, սակայն կ'երևայ թէ՝ այս ամեն անզօր են, զի Ուրարտիոյ թագաւորներն իրենց իշխանութիւնն կ'ընդլայնէին զէպ ի հիւսիսային արեկելը:

Խշորմիսի կը սկսի երկրին լեզուաւ գրել տալ իր գործոց արձանագրութիւններն, միշտ գործածելով Ասորեստանեայց սեպածե գրերն, իւր մի արձանագրութեան մէջ 46 Աստուածութիւնք յիշատակեալ են, զուցէ և ինքն ըրած է անոնց կարգաւորութիւնն:

Մենուաշ (Մանաւազ?) Խշորմիսի զաւակն իր հօր ծերութեան զահակից և սպա իրեն յաջորդ կ'իշխէ: իր հօր զակալցութեան ժամանակամիջոցին իր իշ-

իսանութիւնն տարածեց Մուսասիրի, Գուշը բուխաի (Կորդիք) կապուտան և Գիղամայ ծովելու արևմտեան երկրաց վրայ: Առաժագաւորութեան առաջին տարիներն մայրն Թարիւրիաս իրքեւ խնամակալ կ'աջակցի իր զաւկին, ու այդ միջոցին շինել կուտայ Տուպայ նշանաւոր ջրմուղներն՝ զորս Շամիրամայ կը վերագրեն: Այս վեհապետի օրերէն մեացած են Արտամիտի, Յերկրի, Արծուարերդի, Մանազկերտի, և Խօթազարի ջրմուղները: Մենուաշ իշխանութեան զլուխ անցնելուն՝ կ'ընդլայնէ իր տէրութեան սահմաններն Արաբսէն Տաւրոս, կը տիրէ Աւրմիոյ լճին շրջակայ երկրաց, Կորդուաց աշխարհին, Վերին Զապի, Խուպուտքինայի (ըստ մէջ նինուէի և Որմիոյ), Արածանիի ամբողջ աւազանին, Մալաթիոյ: Իր իշխանութեան սահմաններն արևելքն Արմաւիրն Արմաւիրն կ'անցնէին, իսկ հիւսիս արևմուտքն կարինն: Մինուաշի օրով Աւրարտեան իշխանութիւնն Ասորեստանեայցինին կը հաւասարէր և բազմամարդութեամբ զայն կ'անցնէր. (Մասրէրո): Ասորեստանեայց դէմ ամրութեանց շղթայով մը պաշտպանուած էր: Մենուաշ Ասորեստանեայց արուեստաներն ու բաղա-

քակրթութիւնն կ'որդեզը: Աւրարտեան լեզւով իր զործերն արձանագրել կու տայ, ամենուրեք մեչեաններ և պալատներ կը շինէ, և Ասմաննիւրարի Դ.ի (812-783) հետ բանիցս յաջողապէս կը չափուի, կ'աշխարհակալէ դէպ ի հիւսիսային արեւելքը և ի մէջ այլոց Էթիաուսի (Etiaous) երկրին (Գարեկեաց գաւառ Արարտապայ) Լուսունիս (այժմ կազզուան աւան ըստ Բասմաջեանի) բաղաքն կը զրաւէ ու Մինուահիշինի (Մինուաշակերտ = Մանազկերտ?) բաղաքն կը շինէ: Մաննան կը հպատակեցնէ, ու անդ զաղութներ կը հաստատէ և բաղաքներ ու պալատներ կը շինէ: Քեթացոց դէմ պատերազմելով յետու կը մղէ զանոնք և յԱրևեմուտս յաջող արշաւաններ կ'ընէ, Մոսոքներն կը հպատակեցնէ: Մենուաշ Խալդեան այլ թագաւորներէ շատ աւելի արձանագրութիւններ թողուցած է մեզ:

Մալաթիոյ կողմերն իր թողած մի արձանագրութեան մէջ Արմէն ցեղն կը յիշատակէ, ինչպէս ըսինք: Մենուաշի մահն 784ի ատեններն տեղի ունեցած ըլլալու է:

Զաւակն Արգիստիս Ա. (Արմենակ? =

Արագած) աւելի մեծ աշխարհակալ մը կ'ըլլայ, իր իշխանութեան 14 առաջին տարիներուն 14 պատերազմներ կը մղէ, Արաքսի հիւսիսային կողման լեռնական ներն կը նուածէ, Եթիառւսն և Ուրմին<sup>1</sup> (Ourmi) կը հնագանդեցնէ, կը նուածէ Փոքր Ասիոյ և Ասորիքի մէկ մասն, Ասորեստանեայց հպատակ Քեթացիներն իշրեն կը հպատակեցնէ, Մալաթիոյ կը տիրէ, և այդ կողմերէն շատ գերիներ կը բերէ ի Բիանա: 780ին և 779ին Ասորեստանեայց վրայ յաղթութիւններ կը տանի, և նոյն իսկ Ասորեստանի սահմանն կ'անցնի Փառուուան և Խուալուշիւան իր երկրին կը միացնէ: Ասդմանասար Պ. (783-773) դժուարու անոր կը դիմագրէ. Արգիստիս 778ին Ասորեստանեայց վրայ մեծ յաղթութիւն մը կը տանի ի Սուսիստաս, 776ին կրկին կը յաղթէ Ասորեստանեայց, 774ին Նամոիի մէջ կրկին զանոնք յետս կը մղէ: Տարիունիսի (Տարօն?), Տուարացւոց (Տուարածատափ?) և Գուրքոնի գաւառաց Խլրտումներն կը զսպէ և անոնց մէ առած գերիներու և աւարի մէկ վեցե-

1. Զոր շփոթելու չէ Ուրմիոյ հետ:

բորդն Խալդիի Աստուծոյն կը նուիրէ: Մանացիներու (771) և Եթիառուցիներու ապատամբութիւններն կը զսպէ, և Խաքիկուլասի (այժմ Աղեքասանզրօրու) զաւառն ու շրջակայներն կ'աւերէ ու մինչ Կովկաս կ'երթայ:

Արգիստիս Արմաւիրն (Արամալի) նորոգելով զայն Արգիշտինիլի (Արագածոստն?) կամ Խալդինիշի (Խալդիարնակ?) անուանեց և Արագած լերան իր անունն տուաւ<sup>1</sup>. Իր զորձերն արձանազրել տուած է զլիաւորապէս Վանայ ապառաժներուն վրայ: Ասրիզուրիս իր Սուրբիացի զաշնակից իշխանաց աջակցութեամբ Արքատի կողմերն ընդդէմ Ասորեստանեայց ճակատեցաւ ու յաղթուեցաւ (743), և պատերազմի խառնակութեան մէջ հազիւ կրցաւ մատակձիու մը վրայ հեծնելով փախչէի<sup>2</sup>: Այս ճակատամարտին մէջ ինք և իրեններն 73,000 մարդ կորսնցուցին մեռեալ կամ զերի: Թագղաթ-Փաղասար՝ Ասրիզուրիսի կարստին (կառը, զէնը ևն) տեղւոյն վրայ

1. «Եւ զլեառն անուանէ յանկագոյն յիւր անունն Արագած» (Խոր.):

2. Մատակձիու մը վրայ նստելն անարգական էր, մանաւանդ իշխանի մը համար:

այրեց, միայն անկողինն պահեց ու զայն խթար Աստուածուհւոյն նուիրեց։ Առբիացի իշխանք հաւատարիմ մնացին Սարիւղուրիսի, որ վրէժ լուծելու կը պատրաստուէր, նոյն իսկ Ակուչիի թագաւորիկն՝ Մաթիլու՝ երեք տարիներ դիմադրեց Ասորեստանեայց ու պաշարուած մնաց իր Արքատ մայրաքաղաքին մէջ՝ սպասելով Սարիւղուրիսի օգնութեան, սակայն ապա ստիպուեցաւ անձնատուր ըլլաւ ու հաշտուիլ (740)։ Սարիւղուրիսի բոլոր դաշնակիցներն անոր անգործութիւնն տեսնելով՝ վստահութիւննին կորսնցուցին ու հեռացան։ Ասորեստանեայն նախ Նարիի մի մասն գրաւեց (739) ու անդ ամրութիւն մը շինելէ ետք առաւ Նազի գաւառն (736), յաջորդ տարին Տուսպան (Վանն) պաշարեց, սակայն առումն անկարելի գոնելով՝ շրջակայներն ասպատակեց, իր յաղթութիւնն Վանայ ապառաժից վրայ զրել տուաւ, և հարուստ կողովուտներով վերադարձաւ (735), երկամեայ (733-732) պատերազմով Դամասկոսն առաւ ու բնակչաց 8000ն փոխաղեց ի Քիո (ի Նարիի)։ Սարիւղուրիս հանդարս մնաց մինչ իւր մահն (730ի տուեններն)։

Այս հինգ թագաւորներն՝ (Սարիւղուրիս Ա., Խարուինիս Ա., Մենուաշ, Արգիստիս Ա., Սարիւղուրիս Բ.) յորդոց որդի շուրջ դար մը (835-730) ազատ իշխացին միշտ, յաջողապէս իրենց սահմաններն ընդլայնելով զէպ ի արեւելք և հիւսիս, արևմուտքն զիմադրելով Քիթացւոց և Մալաթիացւոց ունագութեանց, որպէս ցոյց տան Բալուի արձանագրութիւններն (գուցէ և Արմեններուն), ինքզինքնին յարգել տալով հարաւի Ասորեստանեայց։

Այս վերջին երեք աշխարհակալ թագաւորաց զործերն տարրական կերպով յիշատակած է Խորենացին զանոնք Մանաւագ, Արմենակ, Արմայիս անուաններով։

Սարիւղուրիս Բ.ի յաջորդն Խուսաս Ա.կամ Արծակամ Աւրաս (Հրաչեայ?) նախ զէպ արեւելք արշաւաններ ըրաւ, 23 մանր իշխանութեանց տիրեց, խնդիր չունեցաւ Սաղմանասար Ե.ի հետ, սակայն անոր յաջորդն Սարիւրէնն կամ Սարգոնն (722-705) ըստ Աստուծաշունչի Առանն<sup>1</sup> իրեն ախոյեան ունեցաւ։ Ուրաս իր զօրաւոր թշնամիոյն կարենալ դիմադրե-

1. Եսայի ի. 1 :

Ուրուազիծ

լու համար՝ դաշնակցեցաւ զբացի իշխանութեանց հետ և ի մէջ այլոց Զիքառաւթուի, Մոսորներու Միթա թագաւորին, և նոյն իսկ Թորելներու և Քետացւոց հետ: Մաննայի իրանչութագաւորն՝ որ Սարգոնի դաշնակից և հարկատու էր մերժեց Ուրսայի առաջարկն: Աւրսա Մանայի մէջ յեղափոխութիւն հանել տուաւ, իրանչուի երկու քաղաքներն (Սուանդախուլ և Դուրդակիա) իրենց դաներն Զիքառաւթուի Միտաղի թագաւորին առջև բացին: Մարգոն յօդութիւն հասաւ իր դաշնակցին (իրանչուի), այդ քաղաքներն ետ առաւ ու այրեց և ապստամբ բնակիչներն ի Սուրբա (Քեթացւոց Ախարի երկիրն) արսորեց (719): Մարգոն 720ին ստիպուեցաւ Ակիւթական արշաւանք մը յիսս մղել, որը հաստատուեցան Արաքսի Արեկեան աւազանին մէջ: Մարգոն ապա իր կայսրութեան արևմտեան հիւսիսային կողմերն՝ Աւրսաի զրդամբ ծագած ապստամբութիւնն զրպակելու մեկնեցաւ. Մարգոն կործանեց Քեթացիներու իշխանութիւնն՝ զի ասոնք ապստամբութեան զլուխն էին, տիրեց առնոց կարկամիշ քաղաքին (717), և Ասորեստանի մաս ըրաւ զայն: Քիչ վերջ

իրանչու մեռաւ, զաւակն՝ Ազա՝ Ուրսայի առաջարկն մերժելուն՝ Ուրսա զայն ապատամբութեան մը մէջ դաշոյնով սպաննել տուաւ (716): Ազայի յաջորդեց իր եղբայրն Ուրսասանն, սա հպատակեցաւ Ուրսայի և անոր 22 ամբութիւններ տուաւ: Մարգոն զայս լսելով Ուրսասանի վրայ զնաց, տիրեց անոր երկիրներուն և Ուրսայի մի բանակին յաղթեց և անոր 8 զաւաններն զրաւեց, որպէս նաև Ուրսասանէն ընդունած 19 բերդաքաղաքներն, ու 4200 մարզ գերի տարաւ: Ուրսայի դաշնակց Զիքառաւթուի Միտաղի թագաւորին և Մելտիսի (Բարձր Հայք) Բակատաթի թագաւորին յաղթեց, ու այս վերջինն մորթազերծ ընել տուաւ Ազայի սպանման տեղին վրայ<sup>1</sup>. Մաննան ասպատակեց, Աւալուսուն որ նախ փախած էր, ի լուր այս ամենուն եկաւ ու Մարգոնէն ծնըազիր ներողութիւն հայցեց, Մարգոն Ուրսասունի ներեց ու զայն իր գահուն վրայ հաստատեց և անոր մայրաքաղաքի իգիրդի մէջ իր պատկերն ու յաղթութիւններն քան-

1. Կերեայ թէ՝ Բակատաթի ինք դաշունահար զրած էր Ազան, և անոր երկրին պիսի իշխէր:

դակել տուաւ, կամէք և Ուրսայի վրայ երթաւ, սակայն Ասորեստանի մէջ ապշտամբութիւն մը զսպելու համար ստիշպուեցաւ ետ դառնալ (716):

Ուրսայի սպիաման վրայ Ուլուսուն ապշտամբեցաւ, Սարգոն հարկադրուեցաւ դէպ հիւսիս ելնել, իր ներկայութիւնն բաւեց Ուլուսունի հնազանդութիւնն ձեռք բերելու: Հայրենասէրն Ուրսա միշտ իւր ծրագրոյն հետամուռ՝ Սարգոնի հեռանալուն (715) Ուլուսունը կրկին իրեն հպատակեցոց և զաւակն պատանդ առաւ: Սարգոն ստիպուեցաւ մեծ բանակաւ Ուրսայի վրայ զնաւ, ճակատեցաւ Ուրսայի և անոր դաշնակցաց դէմ (714), Ուրսա յաղթուելով մատակ ձիու մը վրայ հեծնելով փախաւ ու ամուր տեղեք ապատանեցաւ. զինգ ամիս լեռներն թափառեցաւ՝ հալածուելով Սարգոնին. Ասորեստանեայն Ուրսայի 260 ձիւսորներն զերի բռնեց: Ուրսայի միակ հաւատարիմ մնացած էր Մուսասիրի Ուրզանա<sup>1</sup> թափառորն, Սարգոն

1. Ուրզանայի կնիքն՝ Լահէի թանգարանն կը գտնուի: Այս կնիքն բթամատի հաստութեամբ երկար և գլանաձև սկ քար մ'է՝ որոյ վրայ բեւ լեռագրերու պատկերներ կը գտնուին: Պատկերն

Մուսասիր մուաւ, Ուրզանան փախաւ, առ առ ընտանիքն, գանձն և շատ մարդիկ (20170) ու բազում կողոպուտ՝ և բազագին մէջ գտնուած խալզի և Բագրաբում գից անզրիներն զերեց<sup>1</sup>. Ուրսա զայս լահլուն մ'ծերու ներկայութեամբ ինքզինըն դաշոյնով սպաննեց (714): Սարգոն Ուլուսունն իր գահուն վրայ հաստատեց և Ուրսայի գաշնակիցներն վրէժ լուծեց: Թուրելայ և Մոսոքի երկիրներն ասպատակեց (713), Սարգոն Մելիտի կամ Մարդիոյ թափառութիւնն կործանեց (712). Մազաւորն և 5000 զօրական զերեց և

է թեսաւոր մարդ մը որ իր երկու ձեռքերով երկու թաչուններու զգէն բռնած է: Աղձանագրութեան թարգմանութիւնն է.

Կնիք Ուրզանայի  
Արքային Մուսասիրի  
և Կուսարթի քաղաքի  
վէմ բարի ոգւոյ  
որու իբրև օծի  
չար լեռներու մէջ  
բերանը բաց է:

1. Կերեկի թէ Խալզեանց ժամանակ որպէս և կուապաշտ Արշակունեաց գարերուն Տարօնն (Մուսասիր) կոնական մնձ կեդրոն մ'էք և այդպէս մնաց մինչ Քրիստոնէութիւն:

անդ ասորեստանցի կառավարիչ մը զբաւ<sup>1</sup>։  
Ուրսայի յաջորդեց (714) իր եղբայրն  
Արգիստիս Բ. սա նախ հպատակեցաւ Աշ-  
սորեստանեայց, սակայն ապա մի քանի  
տարի վերջ Սարգոնի քանակն Քաղէտա-  
տանի մէջ զբագած ատեն՝ զլուխ վեր-  
ցուց և իր եղօրմէն խլուած երկիրներն  
ձեռք անցուց, նոյն իսկ Մաննան իրեն  
հպատակեցուց, կումմուխի թագաւորն Մու-  
տուլլուն ապատամբեցուց։ Սարգոն 708ին  
Մուտուլլուի վրայ զնաց, սակայն նու  
արդէն փախած էր։

Սարգոն 705ին սպաննուցաւ իր Տուռ-  
շառուքինի պալատին մէջ, ու իրեն յա-  
ջորդեց Աբնեքերիմ (705-681): Արգիս-  
տիս դեսպաններ զրկելով Աբնեքերիմայ  
ձիու նուէրներով բարեկամութեան դաշինք  
կնքեց, հաւանականաբար հիւսիսի և ա-  
րևմտեան դրացի իշխանութեան ոտնձոււ-  
թիւններն ու սպաննալիքներն սկսած էին  
հարաւի մեծ պետութեան բարեկամութեան  
պէտք զգացնել։

Աբնեքերիմ ընդլայնեց իր կայսրու-

1. Ուրսայի արարքներն արձանագրուած են  
ի Խորսապատ։

թիւնն, Ամիտի հիւսիսակողման Նիբուրի  
լերան, Մալաթիոյ և Մաննայի վրայ աւ  
գնաց ու անոնց երկիրներն ասպատակեց  
և զանոնք հնագանդեցուց։

Արգիստիսի յաջորդեց (685?) Առուսս  
կամ Ուրսա Բ. (Ակայորդի?) որոյ օրով  
Աբնեքերիմայ երկու կրտսեր զաւկներն  
Սարասար և Աղբամէլէր՝ իրենց անդրա-  
նիկ և ատրամայր (Բարեկոնացի) զահա-  
ժառանգ եղօր Ասուրտանի՝ նախանձելով՝  
այս վերջնոյն ի Միջազիսս գտնուած ժա-  
մանակ՝ սրով սպաննեցին իրենց հայրն  
Աբնեքերիմի՝ Նինուէի տաճարի մէջ աղօ-  
թած ատեն (681): Սարասար կամ Սա-  
նասար հօրն աթոռը բազմեցաւ։ Երեց եղ-  
րայրինին Ասորդան կամ Ասուր Հատուն  
ոճիրի լուրն առնելուն դարձաւ ու իր  
եղբարց դէմ ճակատելով յաղթեց ու զայնս  
հալածեց։ Բայ ոմանց Սանասար պատե-  
րազմին մէջ ինկաւ, ըստ այլոց իր եղբարց  
հետ ի Խալդիա ապաստանեցաւ (Խոր. և  
Պ., Թագ ԺԹ. 37<sup>1</sup>):

Ասուրդան չյանդինեցաւ սահմանա-

1. Ըստ Խորենացւոյ ի Սանասարայ սերեալ են  
Աղձննաց քնակիչք, իսկ յԱղբամէլէրայ Արծրու-  
նիք և Գնունիք։

զլուկան անցնիլ, դարձաւ ու իր հօր աթոռն  
բազմեցաւ:

Աւսաւ Բ, պալատներ կը շինէ լեռանց  
գագաթներն, որ երկիւղի նշան մ'է. զի  
արդարի Արաքսի աւազանին մէջ Ոկիւ-  
թացիք զօրացած էին, և պարբերաբար  
Կ'ասպատակէին Աւրարտիան և Մաննան,  
նոյն խակ Մաննայի մի քանի գաւառաց  
տիրած էին:

Ասուր Հատառնի օրով (681-668) կիմ-  
մերեանց ևս սկսած էին զօրանալ, Ասուր  
Հատառն զանոնց յայնկայս Ալիսի մղեց:  
Ասուր Հատառն նուաճեց և Ասուրիական  
իշխանութիւններն :

Ոկիւթացիք Յ78ին Մաննացւոց նիզա-  
կակցութեամբ Ասորեստանեայց դէմ եւան,  
սակայն Որմիոյ Ծին հիւսիսակողմն Ա-  
սուր Հատառնի բանակէն յետս մղուեցան:  
Աւելի վերջերն Ոկիւթացւոց Քասմիտափթի  
թագաւորն՝ Մարաց, Աւրարտիանց, Ման-  
նացւոց հետ նիզակակցելով Ասորեստա-  
նեայց վրայ գնաց, Ասուր Հատառն իւր  
աղջիկն Ակիւթացի թագաւորիկներէ միոյն  
Բարբաթուայի կնութեան տալով՝ հաշտու-  
թիւն կնցեց:

Ասուր Հատառն՝ զԲարելո՞ն զոր իր

հայլն կործանած էր՝ վերականգնեց (զի  
մայլն Բարելացի էր), Նինուէն զարդա-  
րեց, Եզիւպոսի տիրեց և մեռաւ ՅԵՅԻՆ:

Աւսաւ Բ.ի կը յաջորդէ իր զաւակն  
Երիմինա (675°). սա որևէ արձանազրու-  
թիւն չունի, Ասորեստանեայց բարեկամ  
կը թուի, հաւանականաբար սորա օրով  
տեղի ունեցած է ի Խալզիա արևմտից  
Եկող գաղութիւն մուտքն, զոր մենց Փոխ-  
գացւոց ցեղակից Արմէններ կը համարինք,  
ինչպէս ըստնց: Ասոնց հաւանականաբար  
ի Կիմիկրեանց կամ Գումբաց հալածուե-  
լով դէպի Խալզիա սկսան մտնել, որոյ  
կառավարութիւնն արդէն այնչափ տկա-  
բացած էր:

Փատմազիրը Արմէններու մուտքն իւա-  
զադ և առանց զէնքի զանդադ ներմու-  
ծում մը կը համարին. կարելի չէ մեզ  
ընդունիլ առանց որևէ ընդհարման մուտք  
մը, զի այդ եկերն վերջապէս բնիկ ժո-  
զովրգեան տեղն կը բռնէին, հաւանա-  
կանաբար եթէ ոչ մեծ պատերազմներու,  
զոնէ ներբին յուզմանց պատճառ եղան,  
որով և երկրի կառավարութիւնն աւելի  
տկարացաւ. իրաց այս վիճակին մէջ կը  
բացատրուի Երիմինայի որևէ արձանա-  
զրութիւն չթողուլն:

Ուրսա Գ. կը յաջորդէ (670) Երիմինայի: Աս մեծեաններ և պալատներ կը շինէ, որ նշան մ'է թէ յուզլունք դադար գտած են, ու երկրի իշխանն պէտք զգացած է նորեկ տարրի գալստեամբ յառաջ եկած տւերներն չէնցնել:

Ուրսա Գ. Ասորեստանցւոց Ասուր Բաշնի Բալ արքային (668-626) գեսպանութիւն գրկելով (668) կը դաշնակցի, սացոյց տայ թէ տկար էր իւր երկրի կառավարութիւնն և Ասորեստաննեայց օժանդակութեան կը կարօտէր: Ասուր Բաշնի Բալ իր մի արձանագրութեան մէջ կ'ըսէ թէ՝ Արքիտուրիսի հայրն (Ասուսա) իր հօր (Ասուր Հաստանի կամ Ասուրտանի) բարեկամութիւն յայտնած էր<sup>1</sup>:

Խալդիոյ հիւսիս արևելեան Ակիւթական ցեղն՝ Ասբանագեանք՝ ծանօթ են արդէն մեզ, այս ատեններն կը հանդիպինք Աբսսոսի հովիտէն եկած և մի այլ Ակիւթական զարդութի՝ Շակերուն՝ աւելի արևմուտք կուր գետի աջակողմն հաստատուած, որք իրենց Գագու կամ Գոգ

1. «Ասրիդուրիս Ուրարտիոյ թագաւորն որուն հարքն թագաւորք՝ իմ հօրս եղբայրութիւն յայտարած էին»:

(Գովկ) թագաւորի անուամբ Գուշարք (Գուշայարք) անուանեցան, և իրենց երկիրն այդ անունն առաւ: Այս ցեղի մի այլ հատուածն աւելի արեկելը կը զանուէր և որոց բնակութեան գաւառն Շակաշէն կուռեցաւ:

Կ'երեկի թէ Գոգ կ'իշխէր Առվասյ, Մուսովքայ և Թորելայ երկրաց վրայ: Շատ հաւանական է որ Գոգ մեծ յաղթութիւն մը տարած է և Ասորեստաննեայց վրայ, և կամ Ակիւթացւոց Քասրառիթի թագաւորի 678ի արշաւանաց ատեն սա անոր նիզակակից էր և մեծ սարսափ ներգործած է Ասորեստաննեայց և Հըէկից և որովայս վերջնոց մարգարէներուն նիւթ մատակարարած է իրը Ասորեստանի սպառնացող մի հզօր զօրութիւն (Եզ. ԼՌ. և Իթ.):

Գոգի յաջորդած են իւր երկու որդիքն Սուրագի և Պարիտիս, որք մերժեցին հըսպատակիլ Ասորեստաննեայց, որոց վրայ գնաց Ասուր Բանի Բալ (660), և ասոնց 75 ամրոցներն զրաւեց ու զիրենք զիրի բռնելով Նինուէ բերաւ: Ասուր Բանի Բալի այս արարքն Ակիւթական ցեղերն մեծապէս զրգուեց:

Այս ատեններն Մաննայի Ախսիրի թագաւորն ապստամբեցաւ Ասուր Բանի Բալի դէմ, երբ սա Եզիպտոս կը զանուէր, սաւ կայն ապա չարաչար յաղթուելով իր իշերդու քաղաքն թողուց և ամուր տեղեր ապաստանեցաւ: Ասուր Բանի Բալ երկիրն անտէր զանելով հիմնայատակ քանդեց ու Մաննացւոց կանխաւ իւր հարց օրով իշրենցմէ առած Պատուերի վիճակն ետ առաւ ու հեռացաւ: Ախսիրի երեսան ելնելուն ժողովուրդն զանի սպաննեց և զաւակն Ուալի անոր տեղ դրաւ: Սա իւր մի աղջիկն Ասուր Բանի Բալի կնութեան տուաւ: Մաննացիր Ասորեստանցւոց գործած անգթութեանց համար արհամարհանք սկսան մշակել անոնց դէմ:

Աւրսա Գ.ի յաջորդն Ասրիգուրիս Գ. իր հօր քաղաքականութեան հետեցաւ, հաշտ գնաց Ասորեստանեաց հետ, իր գահակալութիւնն ծանուցանելու համար դեսպաններ և ընծայներ դրկեց Ասուր Բանի Բալի (Յ45):

Ասրիգուրիսի. կը յաջորդէ (620°) իրքիսս՝ վերջինն Խալքեան թագաւորաց, որոյ իշխանութիւնն Երասխոյ հիսկասակողմէ ամփոփուած էր, իրեն մայրաքա-

դաք ունենալով Լուսիունիս՝ ինչպէս իր մէկ արձանազրութիւնն կը ցուցնէ: Կ'եւ ըսայ թէ ի Փոքր Հայց եկող Արմէններն զրաւած էլն արգէն Արևմուտքն, և Խալշիան սկսած էր Արմէնիա ըլլալ:

Ասրիգուրիսի օրով արգէն հիւսիսի Ակիւթական ցեղերն (Ասքանազեանք, Շակը) սկսած էլն զրգուվլ ընդդէմ Ասորեստանիայց, որոնք իրարու հետ միանալով՝ և գուցէ նոր զաղութեր ևս ընդունած ըլլալով՝ իրենց Մայր հայրենիքէն, իրը չեղեղատ մը ամրող Խալդիան, Ասորեստանն, Փոքր Ասիան, Սուրիան կը ծածկեն, բոլոր ծանօթ աշխարհի կը տիրեն, ու այդ երկիրներն կ'աւերեն: Հարկ է կանգ առնել ու ներկայացնել զանոնք ու իրենց աւերներն և յառաջ քան զայս տամբ մեր ուսումնասիրած շրջանի Խալդեան և Ասորեստանեաց թաբաւորաց ժամանակագրական ցուցակն ըստ Վէպէոփի և Մասրերօնի:



նեցաւ, կիաքսար յազթուեցաւ և հարկաւ տուութիւն խոստանալով Մարաստանի քաշուեցաւ (634): Մատիէս Ասորեստանի վրայ գնաց. Նինուէն զատ այլ արքաւ յական քաղաքներ (Քալաք, Ասոր) ինչ կան ու այրուեցան, երկիրն ասպատակուեցաւ, ու ժողովուրդն անզթօրէն կոտորուեցաւ: Ուրարտի ոտնակոխ եղաւ, Ռովս, Մոսովը և Թուրել միւնոյն վիճակն ունեցան: Կիմմերեանը նախ զիմադրեցին Զելայի մօտ, սակայն ասկա իրենց Փօոքոս թագաւորն գերի իշնալուն՝ ստիպուեցան թըշնամւոյն հետ միանալ, ու միամին ասպատակեցին Միջագետքն, հիւսիսային Սուրբիան, Փիւնիկէն, Գամասկոսն, Պաղեստինն (628), և Եզիզտոսի վրայ զացին: Պատմաթիքոս Ա. Թագաւորն ճոխ ընծայներով ընդ առաջ ելաւ և զանոնը ետ դարձուց, իրենց դարձին ասպատակեցին Փղշտացիներն, Ասքալոսի մօտ Տէրքեթոյի տաճարն կողոպտեցին, ու այլ ևս սկսան տկարանալ,.... իբր թէ Աստուածիւնի պատժուեցան.... իրականութիւնն այն է թէ՝ արդէն շարունակական պատերազմներով սպառած էին: Կիաքսար բարեկամացաւ ու ճաշի հրաւիրեց Մատիէսն ու իր զօ-

ռականներն, և սպաննեց զանոնը: Ակիւթացիք իրենց գլուխներն կորսնցունելով՝ չյուսահատեցան, կոռւեցան Մարաց հետ վերջապէս կիաքսար զանոնը Մարաստանէն վոնտեց: Այս ամեն քսան տարի (634-614) և կամ ըստ Հերովոտի 28 տարի (642-614) տևած է<sup>1:</sup>

Ակիւթացւոց մի մասն կովկասի ճամբռով Եւրոպա մտաւ, իսկ այլք Արաքսի և Ալիսի միջև ժամանակ մը մնացին և անվաս քաղաքացիներ դարձան, ի կապագովելիա, ի Պոնտոս, յՈւրալտիա, զորս կը յիշատակէ Ստրարոն՝ Մաքու (Շակ) անուաննելով:

Ասուր Բանիքալ 625ին մեռած ու իրերէց զաւակն (Ասուր Էթիլիւմնի) ու ապայս վերջնոյն մահէն ետք (620) միւս զաւակն Ալնշանիսքուն՝ զոր յոյներն Սակոս<sup>2</sup> կ'անուաննեն: —

1. Այս Ակիւթական արշաւանքի մասին Սուրբ Գրոց մէջ շատ մը յիշատակութիւններ և մարզարէութիւններ կան. (Եզէկիէլ, Երեմիա, Առքոնիա, Յառամ, Բ. Թագ., Երկրորդումն օրինաց, Մնացորդք Բ.):

2. Պատմագիրներէ ոմանք Նինուէի այս նրկու կամ երեք թագաւորներուն տեղ Սարգանաբաղ կը դնեն շատ անզամ, որ իրապէս զոյու-

Նինուէի իշխանութիւնն արդէն տկառացած էր և Բարելոն առանձին թագաւոր ունէր Նաբուպալասարն՝ որ և ապա ազատ հոչակեց ինքզինքն (611): Սառակոս ուզեց զայն պատժել, Բարելոնի թագաւորն պատերազմի առաջքն առաւ. սակայն ապա վրէժ լուծելու համար կաշունակցեցաւ Կիաքսարի հետ և անոր աղջիկն Ամիթիսն իր զաւկին Նաբուզորունոսորի կնութեան առաւ: Կիաքսար Մարաց ու Բարելոնի բանակներով, ու ըստ Խորենացւոյն և Հայոց Պարոյր իշխանի օժանդակութեամբ՝ որ Արմէն ցեղի առաջին իշխանն կը թուի, Ասորեստանի վրայ գնաց: Սառակոս յաղթուելով՝ Նինուէի մէջ ապաստանեցաւ, պաշարումն երկար տեւեց, վերջապէս 608ին Սառակոս իր պալատին մէջ ինքզինքն իր հարստութեամբ ու ընտանիքով այրեց թշնամույն ձեռքն չ'իյնալու համար: Նինուէն կոտրուեցաւ և կործանեցաւ: Ասորեստանի կայսրութեան ջնջմամբ երկու այլ կայսրութիւնքի միան ունեցած չէ, միայն զեղիս ու ցոփի իշխողի ներկայացուցիչն է: Այս անունն Ասոր Բանիքալի աղաւաղումն է, և որով ներկայացուած են Ասորեստանի վերջին երեք զեղիս վեհապետներն:

կազմուեցան, Մարացն՝ որոյ բաժին ինկաւ Ասորեստան, Տիգրիսի ու Եփրատի ափունքն և Փոքր-Ասիան, և Բարելացւոցն՝ որոց ինկաւ Միջագետքն, Սուրիան, Պաղեստինն, և որը նոյն իսկ Եգիպտոսի վրայ իրաւունք ունենալ կարծեցին:

Կիաքսար իրեն բաժին ինկած երկիրներն հետզհետէ իր իշխանութեան տակն առաւ և միշտ յաջողութեամբ, և վերջապէս Ալիսի եզերեն հասնելով Լիւթէացւոց դիմադրութեան հանդիպեցաւ, վեց տարիներ իրարու հետ չափուելէ ետք՝ Արեգական խաւարում մը երկուստեք չարագուշակ համարուելով՝ հաշտութիւն կնքեցին: Ալիսն իրենց սահման դնելով, և ի նշան բարեկամութեան Լիւթիոյ թագաւորին աղջիկն Աղիաղողէս՝ Կիաքսար իր որդւոյն՝ Աղմահակայ կնութեան առաւ (585): Յաջորդ տարին Կիաքսար մեռաւ:

Կիաքսար Լիւթիոյ արկելակողմի իր տիրած երկիրն Կապաղովկիա անուանեց, ուր գտան և Քեթացիներն ու Արմէններու մնացորդներ:

Աւրարտեան և զրացի բոլոր Խալդեան երկիրներն Կիաքսարի իշխանութեան տակ մտան, և Պարոյր ի վարձ իւր ծառայու-

թեան ըստ Խորենացւոյն՝ կիաքսարէն արշայական թագ ստացաւ, մնալով հարկատու:

Այլևս ոչ սեպածև արձանազրութիւնք կան և ոչ Խալդեաններու մասին յիշաւակութիւնք: Արմէններն որք սկսած էին մուռք գտնել Խալդեաններու երկիրն բազմացած են անդ, հալածելով երկրին բնակիչներն, և իրենք անոնց մնացորդաց հետ խառնուելով կազմած են Հայ ցեղն՝ զոր՝ օտարք Արմէն անուան տակ կը ճանչնան:

Պարոյր հաւանականաբար Արմէն կամ Հայ ցեղէն իշխան մ'է՝ յաջորդ Խալդեան իոցիասին, և կամ սա իշխելով կեղրոնական Հայաստանի, և իոքիասի յաջորդներն (եթէ կան) Արաքսի հովտին:

Խորենացին Պարոյրի գործքն նկարագրելէ ետք, կ'ըսէ թէ՝ «այժմ անցից ի թիւ մերց արանց, մանաւանդ թագաւորաց մինչ ցտէրութիւն Պարթևաց, քանզի ինձ այսորիկ արք ի մերոյ թագաւորէն սիրելիք, որպէս բնիկը և իմոյ արեւանառոք և հաւաստի հարազատք»: Այս խօսքերէն կը ճետէի թէ Պարոյրի նախորդներն բուն հայ ցեղէ, արիշնէ չէին: Այդպէս կը հասկնայ և պատմաբան Յովհաննէս կա-

թողիկոս, և կ'ըսէ թէ՝ Անուշաւանէն ետք Հայոց վրայ իշխողք նոյն ցեղի սերըն գէն չէին, և վերջն Պարոյր Հայկայ զարմէն՝ երկրի իշխանութիւնն ձեռք առաւ և այլն: Խակ մենք կը սիրենք հաւաստալ թէ՝ Պարոյրով բուն Արմէն ցեղին կ'անցնի երկրին իշխանութիւնն:

4. Արմենեամ Հարստուրիւն. — Այլևս Ասորեստաննեայն կամ Խալդեան արձանագրութիւնք չկան մեզ առաջնորդող, ուստի մեր պատմանօր Խորենացւոյ, օտար պատմագրաց, և Քանոնիոնի տուած տեղեկութեանց հետևողութեամբ պիտի զծեմք հաւանական պատմութիւնն:

Պարոյրի յաջորդ Հրաչէի մը գոյութիւնն և սորա Նաբուզողոնոսորի (Բարելոնի արքային) աջակցելով Երուսաղէմի գրաւումն (558) և իր յաջորդներն (Փառնաւազ, Պաճոյճ, Կոռնակ, ևայլն) կարելի չէ զրապէս ընդունիլ: Սակայն հաւանականաբար ունեցած եմք Երուանդ մը (Խոր.) հայր Տիգրանայ, ժամանակակից կիաքսարի որդույն Աժդահակայ (584-549). և այս վերջնոյն յաջորդի կիաքսար Բ.ի (Բսեն.) (549-536): Երուանդ ապստամ-

բեցաւ Աժդահակայ դէմ, և պաշարուելով  
յանձն առաւ հպատակութիւն, տարեկան  
50 տաղանդ տուրքի<sup>1</sup> վճարում, իր զօր-  
քով օգնել Աժդահակայ և ամրոց չշինել  
(Քսեն.):

Բատ Խորենացւոյն Աժդահակ Տիգրա-  
նայ քոյրն Տիգրանուհին կնութեան առաւ  
Արմէնիոյ տիրելու մոօք. սակայն ծրա-  
գիրն յայտնուեցաւ, Տիգրանուհի փախաւ  
եկաւ ի Հայս, և երկու թագաւորութեանց  
մէջ գժտութիւնն սկսաւ:

Կիաքսար Բ.Փ օրով (549 - 536) Ե-  
րուանդ կրկին ապատամբեցաւ, ու բերդեր  
շինել տուաւ և կը մերժէր անոր աջակցիւ  
պատերազմաց մէջ (Քսենոփոն):

Կիաքսար Բ.Փ իր զօրութեան անկումն  
տեսնելով իւր քեռորդին կիւրոսն<sup>2</sup> բերել  
տուաւ Պարսկաստանէն և զայն իւր բա-  
նակաց ընդհանուր սպարապետ կարգեց:  
Կիւրոս յաջողեցաւ հայոց օժանդակութիւնն  
ձեռք բերել՝ Լիւդէցւոց կրեսոսին դէմ  
պատերազմելու համար (546), սակայն

1. Բարեկոնական տաղանդն կ'արժէր 4830 ֆր. այսինքն ընդ ամէնն 241.500 ֆր. էր տուրքն:
2. իր Մանդանէ քրոջ և կամբիւս պարս-  
կին զաւակն:

Հայք Բարեկոնի դէմ պատերազմելու հա-  
մար մերժեցին աջակցիւ : Քսենոփոնի  
«Խորացք կիւրոսի» գործոյն մէջ կը տես-  
նուի թէ՝ Հայք արդարև կարեոր տարր  
մ' են և կիւրոս վարպետութեամբ՝ Ե-  
րուանդայ որդույն Տիգրանայ հետ իր ու-  
նեցած բարեկամութեան շնորհիւ, կը յա-  
ջողի Հայերն հաճեցնել: Վելջապէս Հայք  
կիւրոսի կ'աջակցին Բարեկոնի գրաւման  
համար և կու տան 4000 ձիաւոր ու 20,000  
հետևակ: Տիգրան կը հրամայէր ձիաւորաց՝  
իսկ Եամբոս հետևակաց: Աստուածաշունչ  
գրոց մէջ յիշատակուած է Արարատայ,  
Մինոյ և Ասքանազայ թագաւորութեանց  
(Եսայի ԽԵ. Երեմ. ԾԱ. 27) (իմա՞ Հայոց)  
կիւրոսի աջակցումն Բարեկոնի գրաւման  
համար (538):

— Երուանդայ յաջորդած է իր որդին  
Տիգրան, զոր շատ կը գովէ Քսենոփոն և  
զայն իմաստուն կ'անուանէ: Տիգրան ըստ  
Խորենացւոյ երկրին բարեկարգիչ մ'եղած  
է, մեծ զարկ տուած է երկրագործութեան  
և վաճառականութեան: Ախալ է Տիգրա-  
նակերտի շինութիւնն այս Տիգրանայ վե-  
րագրելն, սա Մեծին Տիգրանայ գործն է  
(Ատրարոն):

Կիւրոս զաւակ չունենալով՝ կիւրոս անոր յաջորդեց (536): Բատ ոմանց այս յաջորդութիւնն պատերազմաւ տեղի ունեցած է և նոյն իսկ ըստ Խորենացւոյն Տիգրան օժանդակած է կիւրոսի առ այս : Կիւրոսի յաջորդ կամբիւսի օրով (529-521) Հայոց մասին բան չեմք գիտեր:

Տիգրանայ զաւակն Վահագն (Խոր.) Մարաց ընկերակցութեամբ ապստամբեցաւ Թարեհ Ա. դէմ (521-485):

Դարեհ՝ Դատարշիշ անուն հայ զօրավարն զրկեց անոր դէմ (519), Վահագն երիցս՝ յաղթեց Պարսից բանակին և սկըսաւ Բարելոնի վրայ քալել: Դարեհ Վահանումիզա անուն մի պարսիկ զօրավարի հրամանատարութեամբ՝ աւելի զօրաւոր բանակ մը զրկելով՝ երկու պատերազմներէ ետք հեռացուց զանոնը<sup>2</sup> (518), զՀայաստան իր կայսրութեան մի նահանգն ըրաւ և տարեկան 300 տաղանդ արծաթի և 20,000 ձիու տուրք դրաւ<sup>3</sup>:

1. Առաջինն ի Զուզա (Զօգան?) սահմանագլխի մօտ, երկրորդն ի Թեկրա (Թիլ), երրորդն յՈւլիամա:

2. Վերջին վճռական ճակատն տեղի ունեցած է յԱնտիգարա (?):

3. Դարեհի օրով Հայաստան Պարսից կայ-

Դարեհ՝ հայոց ապստամբութիւններն զորս յիշատակեցինք՝ արձանագրել ուրածած է ի Պիսիտոն<sup>1</sup>:

Վահագնի քաջագործութիւնը աստուածացուցին զայն, և որ ոչ միայն Հայոց այլ և Վրաց պաշտաման առարկայ եղաւ (Խոր.): Գուցէ այս զիւցագնի բուն անունն Վահագն չէր, այլ ապա իր քաջագործութեանց համար արուեցաւ այս անունն իբր մականուն, որ այնչափ կը նմանի աւեստական Վերիզրականին կամ Վիտական Ազնիին կամ Վամ-Ազնիին՝ որ պատերազմի և յաղթութեանց ոգին կը ներկայացնէր: Վահագնի մասին երգեր հիւսուեցան ու երգուեցան:

Դարեհ Վշատապեայ երբ՝ Բարեկոնն առնելէ ետք՝ Մարաց վրայ կ'երթար, Արա-

սերութեան 7րդ նահանգն կը կազմէր, ապա միւնյն զեհապետի և Փոերքսեսի օրով 11րդ նահանգն կը ձևացնէր. Հերոգոսի օրով (Ե. դար) Փոքր Հայքն և Արածանիի աւազանն կը ներկայացնէրն 13րդ նահանգն. իսկ Ուրարտեան և Ալորութեանք 18րդ նահանգին մէջ կ'իյնային: Արաքսերքսեսի օրով (406-358) Արմէնիան Պարսից 13րդ գաւառն կը կազմէր և կը վճարէր՝ 400 տաղանդի և 30,000 ձիու տուրք:

1. Պատսատի և Եկրատանի (Համարտան) միջն ապառաժից վրայ:

խի անուն հայ մը իրը Նաբուգոդոնոսոր Նաբունեղւոյ որդին Բարելոնի աթոռն կ'ել-նէ (513), ու Դարեհի կը դիմադրէ, ու վերջապէս Վինտարրա զօրավարի ձեռօք իր համախոհներով կը բռնուի ու կը խա-չուի:

Դարեհի կը յաջորդէ Քսերքսէս (485-465), որ Հայաստանն իր լուծին տակ կը պահէ, և Վանայ քարաժայոփց վրայ ե-ռաւելզուեան (Պարսիկ, Մարական, և Բա-րելական) արձանագրութիւնք փորագրել տալով կը պատմէ իր փառքն:

Քսերքսէսի Յունաց դէմ մղած պատե-րազմին (483) Դարեհի Փեսայ Արտօքմէս Պարսիկ զօրապետին հրամանատարութեան տակ կը գտնուէր հայկական բանակն. ասոնք Փոխզացւոց նման զինեալ էին, և կը կրէին կաշիէ հիւսուած գտակ, նեղ վա-հան, կարճ նիզակ, դաշոյն և արդին (javelot):

Կիւրոս Արտօների ընդդէմ Ուշեղն Ար-տաշէսի ապստամբութեան ատեն (401) Արմէնք հաւատարիմ մնացին Արտաշիսի:

Հաւանականարար այս ատեններն Հա-յաստանի հիւսիսային արևելեան կողմն Երասխի և Կուրի հովտաց միջև՝ կար և

ազգ, իշխաններով կառավարուող երկիր մը՝ որոյ վարիչներն ըլլալու են Խորենա-ցւոյ տուած թագաւորաց շարքն Վահագնէն մինչև Վան, և որք հաւանականարար Պարսից հպատակ էին:

Քսենոփոնի Հայաստանէն անցից ատեն (401), Հայաստան կը բաժնուէր երկու մասանց, Արևելեանին կուսակալն էր Ա-րտաքա (Արտաքսիասի փեսան), իսկ ա-րևելեանին Տրիփազ. Այս կուսակալներն զրեթէ ինքնիշխան թագաւորներ էին<sup>1</sup>: Արմէններն երկրին տէրն էին, Կորդուաց լեռներէն մինչ կարնոյ Հիւսիսակողմն : Քսենոփոն Խալդիներու հանդիպեցաւ Առ ծովու մօտ:

Խորենացւոյ տուած արքայից շարքի վերջնթերն՝ Վան՝ ըստ մեր պատմագրաց նորոգած է Տուսպան, ու իր անուամբ Վան<sup>2</sup> անուանած է զայն, իսկ վերջինն Վահէ իր բանական Դարեհ Կողոմանո-

1. Տրիփազ իր անունով գրամ կորած է, Եփ-րատայ վրայ առանձին պալատ շինած է, ար-ծաթէ բաժակաւ ըմպելու իշխանութիւն ունէր, առանձին հացարար և տակառապետ ունէր՝ որք միայն արքայազնց յատով էին: —

2. Այս քաղաքի այդ անուանակոչումն շատ հին է, ինչպէս տեսանք:

սի օգնութեան գնաց Աղեքսանդրի դէմ, 7000 ծիաւորօք և 40,000 հետևակօք և անդ Արքելայի ճակատամարտին մէջ ինւ կաւ (331) և պարսկահպատակ Հայաստանն (Հարաւ և արևեմտեան մասն) Մակեդոնական կայսրութեան մի նահանգն եղաւ. իսկ Հայաստանի արևելեան հիւսիսային կողմն կուրի և Երասխի հովտից մէջ՝ ուր ազգազատ իշխանը կը տիրէին, շարունակեցին իրենց ազատութիւնն վայելել: Դժբաղդարար անոնց մասին տեղեկութիւնը կը պակսին մեզ:

Ծ. Մակեդոնա-Աելեկեան իշխանապետութիւն. — Աղեքսանդր Հայաստանի վրայ Միհրան անոնց պարսիկ մը (գուցէ հայ) կառավարիչ կը դնէ (330), սակայն իր մահէն վերջ (323) Հայաստանի հարաւածանն Փրատափեռնէս, իսկ արևեմտեան մասն Կէպատղոմէսու յոյն իշխանին յանձնուեցաւ: Այս վերջինն չար էր և ժողովուրդն տժգոհ էր իրմէն, ուստի Հայք իրենց Արդուարդ իշխանին միջոցաւ զայն վոնտե-

1. Դիոդորոս զայն Հայոց թագաւոր կ'անուանէ, գուցէ հասկնալու է թագաւորազն իշխան, որոյ յաջորդած է՝ ըստ Զամշեանի՝ Հրանդ կամ Որոնդ:

ցին և տեղը զրին կապաղովկիոյ, թագաւոր Արփարաթ Բ.ք որդին Արփարաթ Գ. որ ի Հայս ապաստանեալ էր: Ապա հայք ունեցան Ազգ. իշխան մը Յուաթափառ կամ Հրահնատ իրը կառավարիչ (317) որ զրիթէ ինքնիշխան էր և հարկ մը միայն կը վճարէր: Սա Պոնտացւոց դէմ իր մը դած մի պատերազմին մէջ ինկաւ: Ասոր յաջորդեց Արդուարդ հայազգին: Իպոսի հակատամարտէն ետք Մակեդոնական երկիրներն կրկին բաժնուեցան և Հայաստան Սելկեանց բաժին ինկաւ (312), Արդուարդ ապատամբեցաւ (301), սակայն Աելեկիոս զայն զապեց ու Հայաստանի կառավարիչ կարգեց Արտաւազդ հայ իշխանն (Ատրպատականի թագաւորն ?): Արտաւազդի մահից յետոց (190) Հայաստան երկու կուսակալութեան բաժնուեցաւ, վերին և արևելեան մասն՝ Մեծ Հայքն՝ յանձնուեցաւ Արտաքսիաս (Արտաշէս) հայ իշխանին, իսկ արևմտեան և հարաւային մասն՝ այսինքն Յուփաց աշխարհն և Բարձր Հայքն՝ Զարփազրիսին (Զարեհ) կառավարչութեան յանձնուեցաւ:

Արտաքսիաս երկիրն ծաղկեցնող բարի իշխան մ'էր, ուստի և ժողովրդէն շատ

սիրուած, և որ Մեծն Անտիռքոսի Մագանիսիայի մօտ Հռովմայեցիներէն կրած պարատութենէն օգտուելով՝ ինքզինքն Հռովմէացւոց օժանդակութեամբ անձնիշխան թագաւոր հոչչակեց (188) իրեն յանձնուած երկրին, նոյնն ըրաւ և Զարեհ։

Այս ատեններն Հռովմայեցւոց թշնամի կարքեղոնացի Աննիբաղ նշանաւոր զօրավարն Անտիռոսի պալատէն փախչելով՝ Հայաստան ապաստանեցաւ, Արտաքսիաս սիրով ընդունեց զայն և անոր խորհրդով շինեց Արտաշատ քաղաքն Երասխայ վրայ (189) և զայն ըրաւ իւր մայրաքաղաքն<sup>1</sup>։

Արտաքսիաս գաշնակցեցաւ (180) Փոքր Ասիոյ փոքր իշխանութեանց (Պերգամա, Բիւթանիա, Գաղատիա, Կապաղովկիա, Պոնտոս) հետ։ Զարիադրիսի սերունդն շարունակեց իշխան Ծոփաց և Բարձր հայոց վրայ մինչ Տիգրան Մեծ (80) (Ստրաբոն)։

Արտաքսիասի մահուամբ (161) իրեն յաջորդեց զաւակն Արտաւագդ։ Բայ Խորենացոյն սա շատ մեղկ էր, ուստի և ժողովուրդն զոհ չմնալով և Սելևկիանց իշ-

1. Ստրաբոն, Պլուտարք, Դիոգորոս Սիկիլիացին։

խանութիւնն ալ տկարացած ըլլալով՝ հայ նախարարաց հրաւիրանօք Պարթեք<sup>1</sup> տիւ-

1. Պարթեք ընդ մէջ Մարաստանի և Արեաց հաստատեալ Արիական, և ըստ ոմանց Սկիւթական ցեղ մ'էին, իրենց երկիրն կը համապատասխանէր այսօրուան Խորասանին։ Պարթեք Պարսիկ իշխանութեան տակ անցան, ապա Մակենդնացոց՝ և յետ Մեծին Ազերսանդրի՝ Սելլկեանց։ 255ին (Ա. Ք.) ապստամբեցան, սակայն ապա զսպուելով՝ կրկին փորձեցին ու յաջողեցան 238ին և իրենց պետքին մին Արշակ Ա. (Դարեհ Կամ Զարեհ) ի ցեղէն Դարեհ Կողոմանոսի, հիմնեց Պարթեք թագաւորութիւնն, զօրացան և յաւուրս Արշակ Զ.Ի. (Միհրզապ Ա.) Դիոգորոս Սիկիլիացւոյ ատեն մինչև Եփրատ հասցուցին իրենց իշխանութիւնն (160) սիրելով Մարաց, Պարսից, Բաբելոնի, ևն. իրենց կայսրութիւնը Եփրատէ մինչ ցինդոս կը ճգուէր։ Սակայն երկար չմնացին, 143ի ատեններն, Դիմեւոր Բ. Նիկասորի օրով ետ քաշուեցան ու այլևս Տիգրիսն չմնցան, չնորհիւ Անտիռոս Սիկենէսի ընդդիմութեան։ Փրիստոսէ կէս դար ասած սկսան չափուիլ Հռովմայեցւոց հետ, նախ յաղթեցին, սակայն ապա յաղթուելով՝ մկրացան շարունակական պատերազմներով և վերջապէս Պարսից Սասանեան իշխանութեան հիմնադիր Արտաշերէն յաղթուելով (126) Պարթեք հարստութիւնն վերջ գտաւ։ Պարթեք յունամուլ էին, յոյն լիզուն կը մշակէին, արքայք յունական տիտղոսներ կը կրէին. յոյն զաղութներն կը նախաստառորէին, իբր քաղաքաւ կը թիւ ատարաց Ազատակալ Մազդէականութիւն մ'էր կրօննին, ըստ օրինակի Յունաց՝ ատուածոց անդրիներ կը շինէին։

ըեցին Հայաստանի (160), և հիմնեցին Արշակունի հարստութիւնն, ու Արշակ Մեծի (Միհրդատ Ա. կամ Արշակ Զ. պատմչաց) եղբայրն Վաղարշակն եղաւ Հայոց առաջին Արշակունի թագաւորն։ Երբ Վաղարշակ մտաւ ի Հայոց թագարատ Փարազեան նախարարն ընդ առաջ ելաւ ու անոր զլուկն թագ զրաւ և արքայական ու կենուռ գահի վրայ նստեցուց զայն (Սերէսու)։

Ըստ նորագոյն ուսումնասիրութեանց Արտաքիասի գաւակն Արտաւազդ իշխած է 160 - 149, իր յաջորդն անձանօթ է մեզի։ Ապա Հայոց գահուն վրայ կը տեսնեմք մի այլ Արտաւազդ (Artvadistus) (123-95 ?) որ քաջարի մ'եղած է ու պատերազմած է Պարթևաց Միհրդատ Մեծի արքային հետ և շինած է Մարակերտն ի Մարաստան։ Այս Արտաւազդի գաւակն

1. Պոմպէոս Տրագոսի (ժամանակից Յուստինոսի) Միհրդատ Մեծն ի պատմագրաց Միհրդատ Բ. (114-86) կը կարծուի, սակայն Հ. Յ. Աստուրեան (Բազմ. 1905 Քետր.) Տրագոս Պոմպէոսի մի շփոթ վկայութեան վրայ յենլով զայն Միհրդատ Ա. (174 - 138) կը կարծէ, որով և այդ պատերազմն Արտաքիասի որդւոյն Արտաւազդի կը վերագրէ։

եղած է Տիգրան Մեծ<sup>1</sup> որ Պարթևաց քով պատմանդ<sup>2</sup> էր (Արտարոն, Յուստինոս)։ և անոնց 70 հովիտ տալով ազատեցաւ և Հայաստան զալով իր հայրենի երկրին տիրեց (95) ու ոչ միայն Պարթևաց տուածներն ետ առաւ, այլ և Ծոփաց ու Բարձր Հայոց թագաւոր Զարթաղրիսի յաջորդ Արտաշէսն սպաննելով՝ անոր իշխած Հայաստանի այդ մասն իրենին միացուց, Փոքր Հայրի տիրեց և եղաւ համայն Հայաստանի վեհապետ (Արտարոն)։

Արտարոն (50-30) և Պոլիբիոս (205-130) ժամանակակից պատմիչներն կը վկայեն թէ Մեծն Տիգրան Արտաքիասի յա-

1. Ըստ Ապմիհանոսի Տիգրան Մեծի հայրն ևս Տիգրան կ'անուանէր, ուստի կարելի է որ այս վերջին Արտաւազդի երկրորդ անունն ըլլայ Տիգրան, և կամ ընդ մէջ Արտաւազդի և Տիգրանայ պարտիմ զնել մի այլ Տիգրան (հայր Տիգրանայ Մեծի)։ Եթէ ըստ Հ. Յ. Աստուրեանի երկու Արտաւազդներն միացնեմք, և սորա ու Տիգրան Մեծի միջև այս վերջնոյն հայր Տիգրան մը դնեմք, անձանօթ չմնար և շաբքն կ'ամբողջանայ (Արտաքսիաս, Արտաւազդ, Տիգրան, Մեծն Տիգրան), սակայն սա ստուգութեան կը կարողի։

2. Գուցէ իր հօր մի պարտութեան հետևանքն էր և կամ բարեկամական դաշնակցութեան մը ապահովութեան համար։

ջորդներէն է ուստի և Հայկազն և ոչ  
Պարթև:

Ընդ մէջ Արտաւազդ Բ.ի վախճանին  
(149) և Տիգրանի հօր Արտաշէսի (Ar-  
tostistus) գահակալութեան (123) ըստն  
և վեց տարու միջոց մը կայ, որ գուցէ  
Արշակի մը իշխանութեան յատուկ է, զոր  
յիշատակած է Փիլոստրոս յոյն պատմիչն  
Բ. դարու, իր Դիամիոյ Ապողոնի վարուց  
մասին գրած գործին մէջ:

Ուստի ըստ այժմու պատմաբանից և  
մեզ Հայոց Արշակունի անուանեալ հարս-  
տութիւնն հիմուած է Արտաքսիսէ (189),  
կը հասնի մինչ Մեծ Տիգրան և կը տես  
մինչև Տիգրան Կրտսեր (Մեծն Տիգրանայ  
թռունորդին) և իր ըոյրն Երատոյ թագու-  
հին, այսինքն Բրիստոնէական թուականի  
առաջին տարիներն: Ապա Հայք ընդ գեր-  
իշխանութեամբ Հոռվիմայեցւոց են և այ-  
լացեղ (Հայ, հոռվիմայեցի, մար, պարթև,  
պոնտացի հն.) թագաւորներ կ'ունենան,  
այս երկրորդ շրջանն կը տես մինչև Խո-  
րենացւոյ Արտաշէս Բ. (Տիրիթ կամ Տըր-  
դատ) (53) որ Պարթևաց Վաղարշ թա-  
գաւորի եղբայրն էր, և յետ այնու Պար-  
թևաց Պահլաւ արքայական ցեղին կ'անց-

նի՝ որ կը տեսէ մինչ ցվախճան Արշա-  
կունի հարստութեան (428): Ուստի և Խո-  
րենացւոյ Վաղարշակ, Արշակ, և Արտա-  
շէս անուանց տակ պատմածներն իրական  
չեն, և կամ ըստ Գարագաշի՝ Արշակայ և  
Արտաշէսի վրայ գրածներն «ոչ այլ ինչ  
են եթէ ոչ պատմութիւնն արշաւանց  
կիւրոսի և յաջորդաց նորա Գարեհի և  
Քսերքսեսի»: Արտաշէս աշխարհակալի ա-  
նուամբ դրամ իսկ չկայ:

## ԳԼՈՒԽ Գ.

Կախափորձ պատմութեան քաղաքակրթու-  
թեան Հայոց մինչ ցԱրշակունի Հարստութիւնն.

Պատմական այն շրջանն զոր ուրուազը-  
ծեցինք՝ հինգ որոշ ժամանակամիջոցներու  
կը բաժնուի:

1. Կախմական ժամանակ. — Կախմա-  
կան ժամանակն կ'երկարի ի սկզբանէ  
մինչև ԺԱ. Դարն (ն. Ք.), որով կը սկսի մեր  
ընազաւատի իրապէս պատմական շրջանն  
ինչպէս տեսանք: Այս ժամանակամիջու-  
ցին տեղական ժողովրդեան վրայ օտար

տարբ ազդած ըլլալ չթուիր: Երկրի կրօնն էր հաւանականարար թեավաշտորիւն, և գուցէ անոր ամենէն միամիտ ձեն Տարրաւ պաշտորիւնն, որպէս այլ նախնական ժողովրդոց մէջ<sup>1</sup>: Չենք կարծեր որ այս շրջանի մէջ զրի և զրականութեան վրայ գաղափար ունեցած ըլլան բնիքը: Երկիրն իր աշխարհագրական բաժանման հետեւանոց ինել մը փոքր իշխանութեանց բաժնուած էր:

Գործիս Ա. տպագրութեան մէջ այս ժամանակամիջոցն մինչև ԺԶ. դար համարած էինք, ընդունելով ԺԶ. էն ԺԷ՝ դարու մը Եզիպտական տիրապետութիւն, զի Թուղթէս Գ. եզիպտացի աշխարհակառ ի շաբա իր տիրապետած երկրաց յիշատակած Բմենելի երկիրն՝ Արմէնիան

1. Այս շրջանին մէջ պաշտաման առարկայ եղած է ի մէջ այլոց սօսիի ծառն, զոր կը յիշատակէ Խորենացին: Բայ մեր Պատմահօր՝ Արմենակ (Արգիստիս Ա.) Արմաւիրի մօտ տնկեց սօսիներու նուիրական մի անտառ, որոյ ծառերու հողմից ազգեցութեան տակ՝ հանած ձայներէն գուշակութիւններ կ'ընէին քուրմերն: Արտ նուիրական անտառի ծօնեց Արայ իւր Անուշաւան որդին: Տես առ այս «Հայոց հին կրօններն» «Քանասէր», 1902 ի Փարիզ:

Համարած էինք: Աակայն այժմ համուզուած եմք որ եթէ նոյն իսկ ըստ Լընորմանի և իր բազմաթիւ հետևողաց այս աշխարհն Լիրանանն իսկ չէ՝ ու Արմէնիաի համազօր է, այդ դարու Արմէնիան ի հիւսիսակողմն Ոուրիոյ, Մալաթիոյ մօտերն որոնելու է, ուր կրնային զանուիլ Արմէններն Եփրատն անցնելէ առաջ, և երրէք մեր բուն բնագաւառն ի ՄԷծ Հայք. ուստի և եզիպտական տիրապետութիւնն շատ շատ 7րդ դարուն ի Հայս մուտք զբանող եկ ժողովրդեան վրայ էր, և ոչ թէ մեր բուն բնագաւառի համայնքին:

Մէնք Եզիպտական տիրապետութեան ժամանակամիջոց մը ընդունած էինք՝ բացատրելու համար այդ Ափրիկեան ազգի քաղաքակրթութեան ինչ ինչ հետքերն, ի մէջ որոց զիսաւորն է տոռմարի մոյնութիւնն<sup>1</sup>, ամանորի միենոյն օրն՝ Օգոստոս

1. Եզիպտացիք տարին 360 օր կը հաշուէին, 30 օրուան 12 ամիսներէ բազկացեալ, ապա սկըսան 5 աւելեաց օրեր ալ ընդունիլ, սակայն զգաւոզ թէ Աքեզակնային տարին  $\frac{1}{4}$  օր աւելի է՝ որով 4 տարին մէկ օր և 1460 (365  $\times$  4) տարին մէկ տարի տարբերութիւն կ'ընէ, 365 օրերէ բազկացեալ բաղարյային տարիէն զատ ընդունեցին և 365  $\frac{1}{4}$  օրուան զիսաւական ու կրօնաւան

11/24ին՝ այսինքն՝ աշնանային գիշերա-

կան տարի մը, և մինչդեռ քաղաքական տար-  
տյ սկզբնաւորութիւնն (ամանորն) չորս տա-  
րին մի օր յառաջ կ'երթար, Աստեղագիտական  
կրօնական տարին միշտ միհնոյն օրն Շնիկ ասու-  
դի գրեակնային ելքի օրն կը սկսէր, այսինքն  
Օգոստոս 11ին (Տ. տ.), ու 1460 տարին մի ան-  
գամ գիտական ու քաղաքական տարիներու ա-  
մանորն միհնոյն օրն կ'իյնային (Օգոստ. 11):  
Այս հանդիպութն տեղի ունեցած է Քրիստոսէ  
1322 տարի առաջ, յաւուրս 19րդ հարստութեան  
Մէնոփրէսի, և հաւանականաբար անկէ առաջ  
2782ին և 4242ին և յետ Քրիստոսի 138ին,  
1598ին և ապա տեղի պիտի ունենայ 3058ին:  
Այս տօմարը գեռ կը գործածեն խալտիներն:

Հայք ալ ունէին մէկ տարուան համար ՅՈ օ-  
րեայ 12 ամիս և 5 աւելիաց օրեր, ու երկու  
տօմար, մին հաստատուն և գիտական՝ սկնելով  
Օգոստ. 11ին (Տ. տ.) և միւտն շարժական, բա-  
ղարական, որոց ամսագլուխն 1460 տարին մի  
անգամ հաստատուն տօմարի ամանորին կը հա-  
մապատասխանէ, ճիշտ նման Եգիպտականին:  
Այս երկու տօմարներու ամանորից հանդիպութն  
տեղի ունեցաւ 20 տարի առաջ 1888ին, անկէ  
առաջ 428ին և յաջորդ հանդիպութն տեղի պի-  
տի ունենայ 3348ին: Եգիպտացիք այս 1460 տա-  
րուան շրջանն Շնիկ աստիդի կամ Սօրիական շր-  
ջան կ'անուանէին իրենց պաշտպան գլխաւոր  
աստղի անուամբ. իսկ Հայք իրենց նախահօր  
ձօնեալ Հայկ համաստեղութեան անուամբ Հայ-  
կաց շրջան կը կոչէն: Հայկն Շնիկի գրացի է, և  
սա Հայկայ երեք գլխաւոր աստղերու հետ գրե-  
թէ միհնոյն գծին (միջօրէականին?) գրաց կը  
գտնուի:

Հաւասարէն շուրջ մէկ ամիս առաջ տօ-  
նութն<sup>1</sup> և գրեթէմիկնոյն եղանակաւ:

Եգիպտացիք այս տօմարի հաստատութիւնն  
Սիսիւսի կը վերագրեն և Քրիստոսէ 4242 տա-  
րի առաջուընէ սկսած, որով և շրջանագլուխի-  
ւին կ'ըլլան 4242, 2782, 1322, 138, 1598...  
իսկ Հայք իրենց նախահօր Հայկ հահապետի կը  
վերագրեն Քրիստոսէ 2492 տարի առաջ հաս-  
տատուած, որով և շրջանագլուխիւներն կ'ըլլան  
2492, 1032, 428, 1888...: Եթէ այս շրջանա-  
գլուխիւներն նոյն եղած ըլլային պիտի ընդու-  
նեինք գիւրութեամբ մեր Եգիպտացիներէ ընդ-  
օրինակութիւնն, սակայն տարբեկելուն՝ կը հար-  
կագրուինք ընդունիլ միայն գրութեան հետեւ-  
ութիւնն:

1. Եգիպտացիք և Հայք իրենց ամանորն մի և  
նոյն օրն կը տօնէին (Օգոստ. 11/24ին) այսինքն  
յառաջ մէկ ամիս առաջ աշնանային գիշերահա-  
գրեթէ մէկ ամիս առաջ աշնանային գիշերահա-  
գրասարէն ինչպէս վերս յիշեցինք: Գուցէ ի սկզբ-  
աբան կը համապատասխանէր աշնանային գիշե-  
րահաւասարին, սակայն ապա գիշերահաւասարի  
յառաջացութէն (տարին 50°էն մէկ դարու մէջ  
յառաջացութէն (տարին 50°էն մէկ դարու մէջ  
կ'ընէ մէկ օր) յառաջ եղած է այս շուրջ միամ-  
սեայ տարբերութիւնն (իբր 30 դարերու մէջ):

2. Եգիպտացիք ամանորին Նեղոսի հարաւ-  
ելիքն կամ յորդութն կը տօնէին և կը տօնէն:  
Հայք այդ առթիւ Զրմելուի յիշատակն ու շուրը  
կը տօնէին, ու կը սկսէին հանաստրդի խրախ-  
նանութեանց, իբրաւու վրայ շուրը սրոկելով ու  
ազաւիթ թոցնելով ի յիշատակ նոյն, ի մի բան  
Զուրըն կը տօնէին հիսակէս Եգիպտացիք, և զոր  
ցուրը Հայք կը շարունակեն Վարդավառի տօ-  
ցարդ Հայք կը շարունակեն Վարդավառի տօ-

Ալրդարեւ զարմանալի է որ իրարմէ այսա-  
չափ հեռի գտնուող երկու ազգերու տա-  
րեզրութեանց , ամանորի ու զայն տօ-  
նելու եղանակին մէջ այսչափ նմանութիւն  
գտնուի . աւելցուը ասոր վրայ և Հայոց  
մէջ Եզիպտացւոց նման կենդանապաշտու-  
թեան հետքերն , մեռելոց թաղման եղե-  
րամայրերու ընկերակցութիւնն , ազնուա-  
կանաց բարձրութեանց վրայ թաղումն՝  
որք կը յիշեցնեն Եզիպտացւոց բուրգերն ,  
և զարեջրի պատրաստութեան հմտութիւնն  
(Քսենեփոն) , որք կը ստիպեն հաւատալ  
այս երկու ազգերու քաղաքակրթութեան  
որ և է առնչութիւնն՝ զոր դժուար է բա-  
ցատրել մեզ :

Ալրդ՝ բանի որ Եզիպտացւոց մեր մայր  
հայրենեաց տիրապետութիւնն չհմբը ըն-  
դունիր , ուստի այս ամենը բացատրելու  
համար կը ստիպուինք ընել հետեւալ են-  
թաղբութիւններն :

Է իբր տօն Ալլակերպութեան : Մեզ այնպէս կը  
թուի թէ երկու ազգերն ալ չընեղի յիշատակն  
կը տօնեն , և իրենց այս տոմարի սկզբնաւորու-  
թեան թուականներն (Եզիպտացւոց համար 4242  
և Հայոց համար 2492) ըստ ազգերու ջրհեղի

Ա. կամ թմէններն արդարեւ Ալրմէն-  
ներն են՝ որք Եզիպտացւոց տարեզրու-  
թիւնն և այլ քաղաքակրթական հետքերն  
բերին ի մեզ Քրիստոսէ 7 դար առաջ :

Բ. կամ Եզիպտական տոմարն և այլ  
քաղաքակրթական հետքերն գոյութիւն ու-  
նէին ի Առուրիս՝ որ ենթակայ էր Ե-  
զիպտոսի , և անկէ անցած է ի Փոքր Ա-  
սիա և ի Հայս :

Գ. կամ՝ այս Եզիպտական քաղաքա-  
կրթութեան հետքերն տարբեր ժամանակ-  
ներ և տարբեր ճամրայներով մտած են .  
զոր օրինակ զարեջրի պատրաստութիւնն ,  
եղերամայրերով թաղումն և այլն , Ասո-  
րեստաննէն մտած կրնան ըլլալ , իսկ տո-  
մարի զլութիւնն Քրիստոնէական թուա-  
կանի Ե . դարուն միայն՝ երբ մեր նախ-  
նիք Ալեքսանդրիս կ'երթային ուսանողու-  
թեան , տեղացի քրիստոնեայներէն (Խաղթ-  
ներէն) ուսան զայն . սակայն ամանորի  
առթիւ ջուրի տօնն Հայոց մէջ շատ աւելի  
հին է , և ըստ մեզ Ջրհեղեղի յիշատակն  
կը ներկայացնէ , որ հաւատականաբար  
Քաղղէացիներէն անցած է Եզիպտացւոց  
և մեզ :

Հ. Ասորեստաննեայց ազրեցորեան ժա-

մահակ. — Այս ժամանակն կը սկսի ԺԱ. դպրէն և կը տեէ մինչև Նվուէի կործանումն, և կամ աւելի ճիշտ Արմէն ցեղի գալուստն (675°): Այս շուրջ օ դարու ժամանակամիջոցին Խալդիք սերտ առնչութիւն ունեցած են Ասորեստանեայց հետ, ինչպէս տեսանք, և անոնցմէ մեծապէս ազդուած են:

Յառաջ քան թ դարն կամ Արամէ, Ասորեստանեայց և Խալդեանց յարաբերութիւնը թոյլ էին, և միայն Նախրիի հարաւային մասի հետ էին առնչութիւնքն, որ ստէպ հարկատու և հապատակ էր Ասորեստանեայց, հակառակ իր պարբերական ապստամբութեանց: Արամէի հաստատած դաշնակցական միութեան առթիւ՝ Ասորեստանեայց գրգռուելով՝ բազմից արշաւեցին և ջանացին հնազանդեցնել իրենց լուծն արհամարհող Խալդեաններն՝ և վերջապէս ցանդեցին Արամէի Ուրարտեան հարստաութիւնն: Թէպէտ Լութիպրինի կամ Արգիստիսի հիմնած Բիանական իշխանութիւնն զրեթէ շուրջ դար մը (840-730) ազատ կը մնայ ու կ'ընդլայնի և Ասորեստանեայց տէրութեան կը հաւասարի, սակայն հայրենասէրն Ուրսա իր ախոյեան

Սարգոնի զինու զօրութեան առջև կ'ընկճի (714): — Իր յաջորդներն բարեկամ կը մնան Ասորեստանեայց, զի արևմուտքէն Փոքր Ասիոյ ժողովուրդը՝ և հիւսիսէն Սկիւթական ցեղերն եռուզեռ վիճակի մէջ էին և վտանգ կը սպառնային, և վերջապէս Արմէններն նեղուելով իրենց դրացի ժողովուրդներէն կու զան հաստատուիլ Խալդեանց երկիրն՝ ու նոր շրջան մը կը սկսի:

Ասորեստանեայց այս շրջանին ատեն զարգացեալ քաղաքակրթութիւն մ'ունէին, և որք իրենց կրօնիւ, լեզուաւ, գրականութեամբ և արհեստներով մեծապէս ազդեցին Խալդեանց վրայ:

Կրօնն խոր ազդեցութիւն գործած կը թուի, զի ի Խալդիս կը հաստատեմք այս շրջանին մէջ զրեթէ Ասորեստանեայցինին նման աստուածութիւնք:

Ասորա-քաղէական գերազոյն երրորդութեան Անու, Յերու, և Խա՛ որք Երկինք, Երկիր և Գիտութիւն կը ներկայացնէին՝ միայն առաջինն ծանօթ էր Նախահայոց Խարդի անուան տակ՝ իրը Երկնի աստուածն. իսկ ասոնց յաջորդող բարձրագոյն երրորդութեան, Այն, Շամազի, և

Ուսմանոց որք լուսնոյ, Արեգական և Մըթնոլորտի ու անոր մէջ տեղի ունեցած եւրեցիթից աստուածութիւնը կը ներկայացընէին, ասոնց երկու վերջիններն ծանօթէին խալդեանց՝ Արտիհի և Տէիշրա անուանց տակ: Ի մի բան Ասորա-Քաղդէական գերազոյն և բարձրագոյն երկու երրորդութիւններով Խալդիք մի երրորդութիւն կազմած էին՝ Խարդի, Արտիհի և Տէիշրա իրը Երկնի, Արեգական և Մըթնոլորտի աստուածութիւնը՝ որոց Ասորա-Քաղդէական Անուի, Շամալի և Ռամանուի յատկութիւններն կը վերագրէին:

Հաւանականաբար Նախահայք, այս բարձրագոյն երրորդութեանց յաջորդող հինգ մոլորակաց պաշտպան հինգ աստուածութեանց խումբն ալ ընդունած էին Ասորա-Քարելացւոց նման: Անոնց որոշապէս յայտնի չեն մեզ, սակայն անոնց մէ միայն Մարտուկ կամ Մերտուկ՝ որ Լուսնթագի պաշտպանն էր՝ յարգուած ըլլալու է ի Խալդեանց՝ զի այս մոլորակի 4 արբանիակներն<sup>1</sup> ներկայացնող չորս

1. Սա ցոյց տայ թէ՝ Լուսնթագի արբանիակներն յառաջ քան զկալիէ (1610) ծանօթ էին Քաղդէացւոց և Ասորեստանեայց:

Հետեւորդ շուներն՝ որք « կենդանացոցի դիսկաց» կ'անուանէին, հաւանականաբար մեր պատմագրաց Յարաշեղներուն կը համապատասխանեն ( Լանկլուա, Բասմաջեան ):

Ասորեստանեայք այս զիփաւոր աստուածութիւններէ զատ՝ պաշտէին և շատ մը երկրորդական աստուածութիւններ, կիսաստուածներ, առանց հաշուելու բարի և չար ողիներն:

Խալդեան արձանագրութեանց մէջ յիշատակեալ Ասւիս ( Չուր )<sup>1</sup>, Այաս ( Հող )<sup>2</sup>, Արլափիտիս կամ Արլափի ( Լուսին ), Աստառուտաս, Խառուպէնիս, Խոմասինիս, Բագրաբառում ևն աստուածութիւններն, և Շառիս կամ Սառիս<sup>3</sup> զիցուհին հաւանականաբար Ասորա-Քաղդէական աստուածութեանց ներկայացուցիչներն են, որոց մասին զեռ ներելի չէ բան մ'ըսել: Ազարապա հրոյ աստուածն էր՝ որոյ նուի-

1. Զրոյ աստուածն է և Տէիշրաի մի այլ ձևն:
2. Համարժեք կը կարծուի Բիլուի:
3. Սառիսն գուցէ Նինուէացւոց Խշթարն է ( Աէլս ), ներկայացուցիչ Արուսեակի, բնութեան և սիրոյ, որով և մոլորակաց ներկայացուցիչ հինգ աստուածութեանց մին:

բուէին մէկ եզ և երկու ոչխար, Ուսս  
կամ Հուսա՛ հողմոց, Տուրանի՝ լերանց  
(Հ. Սանտալճեան): Ըսինք արդէն թէ՝  
իսպուինիսի մի արձանագրութեան մէջ  
46 աստուածութիւնք յիշուած են:

Նախահայք ալ ունէին անշուշտ կիսաս-  
տուածութիւններ և հաւատային բարի և  
չար ոգիներու, որոց յիշատակութիւնն կը  
տեսնեմք նոյն իսկ քրիստոնէական դարե-  
րու մէջ:

Խալդիս Աստուածն պահանջէր 70 եզի  
և 34 ոչխարաց զոհ: Յաղթութեանց ա-  
ւարներէն աստուածոց և մանաւանդ Խալ-  
դիս բաժին կը հանէին: Արգիստիս Ա.  
Մաննացւոց յաղթելով՝ աւարի <sup>1/6</sup> Խալ-  
դիս նուիրեց:

Հին ատեններն աստուածութեանց քա-  
ղաքներ կը նուիրէին, ումանք Շամիրամա-  
կերտ անունն վանայ՝ Շահ-Միհր-Լերտ  
կը ստուգարանեն և արեգական ձօնուած  
քաղաք մը կը կարծեն, գուցէ դա Խալ-  
դեան լեզուաւ մի այլ բառի թարգմանու-  
թիւնն է՝ արիական բարբառով:

Վանայ հարաւակողման Աստան քա-  
ղաքն լուսնի նուիրուած էր:

Կապուտան ծովի մօտակայ Արտէմիս

քաղաքն՝ որոյ տիրեց Մէնուաշ՝ Արեգա-  
կան նուիրեալ էր:

Արտինի, Արտէմիս, Արեգակ, Արե-  
գի բառերու մէջ Ար արմատն կայ որ  
գուցէ Աստուած ըսել է, ուստի և Արեգ-  
ակն Աստուածոյ մէկ աչքն կը նշանակէ:  
Արամ կամ Արամէ, գուցէ Աստուածատուր  
ըսել է, նոյն արմատն կը կրեն և Արմե-  
նակ, Արմայիս, Հարմա, Արտաւագդ, Ար-  
շաւիր, Արտաշէս:

Արեգական նուիրուած էր Արեգ ամիսն  
և Լուսնի՝ Մահեկանե:

Այսչափ դարաւոր շփում ունեցող ազ-  
գեր՝ բնականաբար իրարմէ փոխադարձա-  
բար բառեր կ'որդեգրեն, և եթէ մեզ ծա-  
նօթ ըլլար նախահայոց բարբառն՝ ան-  
շուշտ անոնց մէջ ասորեստանեան բառե-  
րու ստուար թիւ մը պիտի գտնէինք, նոյն  
իսկ մեր այժմու լեզուն, որ առանց խնա-  
մութեան չէ նախահայոց բարբառին հետ՝  
իր մէջ ունենալու է կարգ մը ասորեստա-  
նեայն բառեր զորս ապագայ բանափրու-  
թիւնն երևան կրնայ հանել: Յիշատակեմք  
առ այժմ Հիւրշմանի և այլոց տուած մի  
քանի բառերն. ինչպէս կոնկու=կնիր,  
զսս = զոր, կամմակհս = կմախս,

sakan = իշխան . pataru = պատառել :  
իր քերականական փոխառութիւն կամ  
նմանութիւն կրնանք ըսել թէ Նախա-  
հայք Ասորեստանեաց լեզուի ուղղակա-  
նի , հայցականի և յոգնակի մասնիկներն  
կը գործածէն :

Նախահայք նախ քան Գրբ զարն որևէ  
զիր և զրականութիւն ունեցած ըլլալ չեն  
թուիր , այդ դարուն իրենց զրացի զար-  
գացեալ ազգին՝ Ասորեստանեաց սեպածն  
զրերն <sup>1</sup> (որք աւելի սեպածն զրերու խըմ-

1. Մարդիկ նախ պատկերներով կը յայտնէին  
իրենց գաղափարներն , այս եղած է կերպոնական  
Ամերիկայի զաղեմի քաղաքակիրթ ժողովրդոց  
զրութեան եղանակն , այդ զրութեամբ ամբողջ  
պատմութիւններ թողած են Մեքսիկացիք : Գու-  
րա մի տեսակն կրնայ համարուիլ հին Եզիպ-  
տացոց զաղափարանիշերով զրականութիւնն :  
Ասորաբելական ժողովուրդք որդեգրեցին այդ  
զրեակերպն , և աւելի զործնական ձև մը տա-  
լով անոր՝ զծերով կը ներկայացնէին զաղա-  
փարանիշերու և հորհրդանիշերու շրջանակներն  
(նախնական վիճակ) , որոյ յաջորդեց կրկին մի-  
և նոյն ժողովրդան մէջ այդ զծերուն զամի ձև  
տալով զրութիւնն՝ որ բուն սեպածն զրութիւնն  
կը ներկայացնէ : Այս սեպախումբերու մէջ դեռ  
կը տեսնուին պատկերի ձևեր և զաղափարանիշեր :

Այս զրութեան մէջ կայ 400 տառեր կամ  
վանկեր՝ որոց ոմանք մի քանի տեսակ կը կար-  
դացուին . ասոնցմէ գուրս են զաղափարանիշերն :

բումներ էին և բառեր ու գաղափարներ կը  
ներկայացնէին՝ առին , և ապա զայն ի-  
րենց լեզուին յարմարցուցին :

Ասորեստանեաց վեհապետք՝ իրենց պա-  
լատանց պատերուն և երկրի ու տիրած  
աշխարհաց ապառաժից վրայ կ'արձա-  
նազրէին այս սեպածն զրերով՝ իրենց  
գործերն ու յաղթութիւններն : Ի նախա-  
հայք թագաւորաց Ասորիդուրիս Ա. սկսաւ  
իր գործոց պատմութիւնն զրոշմել Բիա-  
նայի ապառաժից վրայ՝ միւնոյն զրերով  
և լեզուաւ <sup>1</sup> : Իր յաջորդին՝ իշպուինիսի  
օրով՝ այդ սեպածն զրերն իրենց լեզուի  
յարմարցուցին և ունեցան սեպածն զրե-  
րով ուրոյն զրականութիւն մը , փոխ առ-  
նելով սակայն Ասորեստանեաց զաղափա-  
րանիշերն <sup>2</sup> , խորհրդանիշերն , անիծից ձե-

գարսկականն ունի միայն 33 նշանագրեր՝ որք  
տառական են (այսինքն այրութենի հնչման նման)  
և ոչ թէ վանկային :

1. Սա ապացոյց մը կրնայ համարուիլ Ասո-  
րեստանեաց լեզուի ու զրերու՝ եթէ ոչ ժողո-  
վրդեան ընդհանրութեան՝ զոնէ մասնաւորաց  
(զարգացելոց) կողմանէ հատկանալիութեան , ի-  
բրև ժամանակի քաղաքակրթութեան լեզուն , ա-  
պա թէ ոչ տննապատկ եղած պիտի ըլլային այդ  
արձանագրութիւնը :

2. Զոր օրինակ Ասորուած , որդի , թագաւոր ,  
ուրուազիծ

ւերն, ևն։ Այսօր Հայաստանի՝ նա մանաւանդ վանայ շրջականերն, հարաւայիններներն և Երասխի ու Կուրի հովիտներն լի են այս արձանագրութիւններով։ Այս սեպածե զբերով զբականութիւնն կը հասնի մինչ Ակիւթական արշաւանքն ու կիաքսար, ուստի և այս զբականութիւնն ի մեզ ճիշտ երկու դարու (835 - 635) կեանք ունեցած է։

Նոյն ատեններն վերջ գտած են և Ասորեստանեայց լեզուի սեպածե արձանագրութիւնք. երկու դարու աւելի կեանք ունեցած են Բարելականք և Շոշականք, սակայն Պարսիկը, որ այս վանկային և գաղափարանշային զբութիւնն պարզելով տառական արժէք տուած էին անոնց՝ գործածեցին մինչ ցըրիստոնէութեան Ա. դարն, յորժամ Փիւնիկ տառերն վանեցին զայնս և անոնց յաջորդեցին, ուստի և սեպածե զրութիւնն մոռցուեցաւ։ Գիտունը յաջողեցան Պարսից սեպածե արձանագրութիւններն կարդալ 19րդ դարուն սկիզբն, սակայն կէս դար ետք միայն յաջողեցան

մարդ, տուն ըսելու համար Ասորեստանեայց նման նշաններ կը գործածէին։

Ասորեստանեայց, Բարելաստանի, Շոշաստանի, և Մարաստանի արձանագրութիւններն լուծել. իսկ Խալզեաններն 1880է ի վեր միայն կը կարդան։ Լեզուն ան-

1. Ի վերջ կոյս ժԹ. դարու մի քանի հնաւսէր զիտունիք իրենց ուշն կը դարձնէին օնսուծն զրով արձանագրութեանց վրայ, և քանի մը անշաջող փորձերէ եար՝ կոօթրքէնդ 1802ին յաջողեցաւ ճանաչել Պարսիկ օնսուծն զրեսու այբնարանն, զար կատարելագործեց Էօժէն Պիտոնուիք ֆրանսացին 1836ին, և քանի մը տարի վերջ Հանուի Օսմաններն անզիացին Արքմաննեան արձանագրութեանց ընթերցման ամէն նրբութիւններուն ծանօթ էր։ Նինուէի աւերակց՝ ի ձեռն Պօթա ֆրանսացւոյն՝ գիւտն (1846), Գօյուննուուիք և Խօրսապատիք պեղութեան և յաջորդ տարիներուն էլչարդ անզիացւոյն Նէմրութիք բըլրին վրոյ Պալազ քաղաքի աւերակց գիւտն, և Գօյուննուուիք աւերակց պեղման շարունակութիւնն չատ մը արձանագրութիւններ երևան հանեցին, որոց ընթերցման իբր բանալի ծառայեց եռալեզուեան (Պարսիկ, Բարելական, և Շոշական) արձանագրութիւն մը, և այսպէս քիչ տարիէն կարգացուեցան բոլոր ծանօթ Բարելական, Ասորեստաննեան, Շոշական ու Մարական արձանագրութիւններն որոց քերականութիւնն ու բառարանն իսկ պատրաստուեցան։

Իսկ գալով հայկականաց՝ զորս Խալչիսն և կամ Վանեան կ'անուաննեն՝ գոքա գարուս սկիզբն սկսան հրաւիրել զիտունց ուշն. Ֆրանսուկան կառավարութիւնն 1828ին իւր ծախիւք Շուլց գերւմանացին յղած է ընդօրինակել զանոնք, սա ի

հասկնալի է, Միջազետաց հիւսիսային  
կողմանց լեզուներու հետ խնամութիւն ու-

ժուլամբոկ՝ քրդաց կողմանէ սպաննուելով՝ իր  
գործն կիսառ մնաց, և 1840ին միայն իր ընդ-  
օրինակութիւններն ձեռք անցուելով հրատարա-  
կուեցան: Շուլցէ վերջ ընդօրինակութեան զբլ-  
խաւոր աշխատողք եղած են, Մեսրոպ եպիսկո-  
պոս Սմբատեան, որ 1862ին ի վեր կը հրատա-  
րակէ «Արարատ» հանդէսին մէջ իր զանած ար-  
ձանագրութիւններն Սիմօնիս և Հիվեռնա փան-  
սացիք՝ որք մինչ իրենց օրերն (1893) ծանօթ  
68 արձանագրութեանց վրայ աւելցուցին 30  
նորեր. Վ. Պէլկ գերմանացին (1892), և Կի-  
կուսկի և Վանսկի ուսւերի (1893-4) իրենց հա-  
նապարհորդութեամբ կարևոր արձանագրութիւն-  
ներ հաւաքիցին: Այս վերջնոց արձանագրու-  
թիւններն բաղդատելու գացած են ապա Լէման  
և Բասմանեան:

Ընթերցման առաջին յաջող փորձն ըրբա Ստա-  
նիսլաւ Կիւար (1880), որոյ հետևելով կատա-  
րելագործեց այդ գրութիւնն Այլո (1881), մե-  
ծապէս նպաստեցին նաև Գ. Հ. Միւլէր (1888),  
և ի մերայնոց՝ Տիմոր Բասմաջեան ի Փարիզ և  
Հայր Սիստանեան ի Հռովմ: Առ այս նպաս-  
տած են նաև Լընորման, Հինքս, Լէման, Թօ-  
քերդ, Դայարդ և այլք:

Ուրարտերէնով և մի այլ ծանօթ լեզուով ար-  
ձանագրութիւններ մեծապէս պիտի նպաստեն  
ընթերցման և հասկացողութեան, բայց միայն  
1895ին երկրեզուեան (Ուրարտերէն և Ասորեստա-  
ներէն) արձանագրութիւն մը զանուած է, սա-  
կայն շատ համառօտ ըլլալուն մեծ ծառայու-  
թիւն մը չմատոյց:

Նենալ կը թուի, և սակայն կը կուհուի՝  
շնորհիւ յԱսորեստանեայց փոխ առնուած  
գաղափարանիշերու, անիծից ձեւերու, և  
մի քանի խալդեան ծանօթ բառերու՝ որոց  
ցուցակն հարստանալու վրայ է:

Գալով խալդեան սեպաձև զրերով ար-  
ձանագրութեան լեզուին՝ ըստնք արդէն  
թէ՝ գեռ խնդրոյ տակ է. ոմանք (Հինքս,  
Մորգման, Հիսարլեան) հին հայերէն կը  
համարին, այլը (Սանտալճեան) բառերու  
մեծամասնութիւնն միայն հայերէն կը կար-  
ծեն և միւսներն դրացի լեզուաց յատուկ.  
մի քանի գիտուններ (Լընորման, Աէլյո)  
Վրացերէնի մերձաւոր կ'ենթազրեն, կան  
ալ որ (Գալուստ Ժէր Մկրտիչեան) Ուտե-  
րէնի մօտ կը գտնեն և կամ անծանօթ  
լեզու մը կը համարին (Կիւար):

Խալդեան արձանագրութեանց մէջ ներ-  
կայիս շատ մը աշխարհագրական անուն-  
ներու ցանկն տուինք արդէն (էջ 7): Յա-  
տուկ անուններէ Մենուաշի՝ Մանաւազ,  
Արգիստիմի՛ Արագած, և Արամէի՛ Արամ  
ըլլալուն կասկած չունիմք:

Տիմար Բասմաջեան 1902ին «Բանա-  
սէր»ին մէջ հրատարակեց հայ նախարա-  
րութեանց լիակատար ցանկն՝ որոց մի

մասն յաջողած էր գտնել սեպածեւ արձաւ նազրովինանց մէջ:

Խալդեանը էին բարձրահասակ, հուժ կու, աշխատասէր, քաջամարտիկ և յանչ դուզն ի պատերազմի: Ժողովուրդն էր երկրագործ և կենդանաբոյժ: Գիտէին լաւ մշակել հողն՝ և առատ հունձքեր յառաջ բերել. հմուտ էին ողողման օրինաց և ջրմուղիներու միջոցաւ հեռուներէն ջուր բերելու արուեստին. առ այս ապացոյց են Արտամէտի, Բերկրի, Արծուաբերդի, Մանազկերտի և Խոտորջուրի ջրմուղիներն: Խաշնարած էին, ամառն իրենց հօտերով մարգերն կը շրջէին, լաւ ձիեր ու էշեր ալ կը բուծանէին: Ասորեստանեայք միշտ ձիու և էշի տուրք կը դնէին Խալդեանց վրայ:

Դախահայր՝ Ասորեստանեայց նման՝ կը ճանաչէին մետաղներն, անոնցմով զինքեր, զարդեր, բաժակներ ու արձաններ կը պատրաստէին, զորս ճարպիկօրէն կը նկարէին. գիտէին կերպամներ հիւսել:

Քաղաքներն ամուռ տեղեր և կամ լեռնաց բարձրերն կը հաստատէին: Քաղաքներն փոքր էին և երկայն բառանկիւնի ձևով, պարիսպներն առանց շաղախի՛ բա-

րերն կարգաւ ու արուեստիւ զետեղմամբ հիւսուած էին, բառանկիւն աշտարակներ կը կրէին և տկարազոյն մասանց առջև պատնէշներ (braie) կը շինէին:

Հաւանականաբար հմուտ էին լծակ, ճախարակ և զլան գործածել ի պէտս շինութեանց: Քարաժայոից մէջ սենեակներ կը փորէին՝ որք ըստ ոմանց արքայից գանձարաններ կամ ապաստարաններ էին և ըստ այլոց գերեզմաններ: Ճարտարապետութեան և քանդակագործութեան մասին շատ ետ մնացած ըլլալ կը թուին՝ իշրենց զրացի Ասորեստանեայց բաղդատամամբ:

Ցուներն քառանկիւնի էին, և քարէ կամ աղիւսէ պատերով շրջապատուած, վերն երդիք մ'ունէին ընդհանրապէս տափարակ, մերթ շեղ:

Արքայական պալատներն մեծ էին, ճակատն սիւներու շարք մը կը կրէր, և զարդարուած էր մետաղեայ նկարուն վահաններով ու սկուտեղներով: Արահներու ներքին երեսներն արձանագրութիւն կը ողքարերով պատեալ էին: Տաճարներն արտաքուստ աւելի կանոնաւոր կ' երեէին, որմերն աւելի արուեստիւ հիւսուած էին,

գաւկիթն լիքն էր պղինձեայ արձաններով։  
Անդ կը գտնուէին խորաններ, նուիրաբե-  
րութեան քարեր, մարդոց ու կենդանեաց  
կուռքեր։

Յ. Արմեններու ի Մեծ Հայու մուտքն ու  
անոնց ազգեցուրիննեն։ — Փոխւզական Ար-  
մէն ցեղի մուտքն 675ի ատեններն տեղի  
ունեցած համարելով՝ անոնց ազգեցութիւնն  
մինչ 610 թուականն պիտի քննեմք աստ.  
զի այն ատեն Մար-Պարսկական իշխա-  
նութեան տակ մտած ըլլալով մեր բնագա-  
ւառն՝ անոնց քաղաքակրթութեան ազգե-  
ցութիւնն սկսած է։ Վերջ կոյս այս շրջանի  
տեղի ունեցած Ակիւթացւոց տիրապետու-  
թիւնն նկատի չպիտի առնեմք, զի ինչպէս  
տեսանք, սոքա հեղեղի մը պէս եկան՝ ու  
բանի մը տարիէն գացին, հաւանականա-  
բար առանց մեծ ազգեցութիւն ներգործե-  
լու, և եթէ անոնցմէ երկրին մէջ մնացող-  
ներ եղան՝ որպէս հաւանական է՝ անոնք  
ալ անշուշտ համակերպեցան ու ընդունե-  
ցին երկրին քաղաքակրթութիւնն՝ բան թէ  
իրենցն անոնց տակ փորձեցին։

Գալով Արևմտից եկող Արմէններուն,  
սոքա մեծ յեղափոխութիւն մը յառաջ

չ'ըերին, զի մուտքերնին հանգարա էր և  
տեղական իշխանութիւնն արդէն տկարա-  
ցած ըլլալով մեծ ընդդիմութիւն չյարոց։

Երիմինա չունի ո՞ր և է արձանագրու-  
թիւն, զի չունի պատմելու արժանի գործ։  
Յաջորդներն Ուրսա Գ. և Արքիուրիս Գ.  
երկրի բարեկարգութիւնն հաստատել կը  
ճնին, և զգալով տկարութիւննին՝ ի-  
րենց երրեմնի ախոյեան Ասորեստանեաց  
արքայից դեսպաններ ու նուերներ լրկե-  
լով՝ կը դաշնակցին, կը բարեկամանան  
և անոնց օժանդակութեամբ կ'երազեն զօ-  
րացնել իրենց իշխանութիւնն. այլ ի զուր,  
զի Ասորեստանեայք ևս տկարացած էին.  
ուստի և այս ճիգերն ի գերեւ ելան։ Հուսկ  
ուրեմն Ակիւթական հեղեղն հասաւ։ Խալ-  
դեան իրքիասի օրով, որ արդէն Ե-  
րասխի ափոնքն ամփոփուած էր, և այդ  
իշխանութիւնն բարձաւ ու ապա Մարաց  
լուծին տակ մտաւ այդ երկիրն, ունենա-  
լով իրեն ուրոյն կառավարիչ իշխաններն՝  
որոց առաջինն խորենացւոց Պարոյըն կը  
թուի, և հաւանականաբար Արմէն ցեղին։

Ալորոտեաններէ շատեր՝ անշուշտ նե-  
ղուելով յարեւմտից եկող նորեկ տարրէն՝  
սկսան դէսլ ի հիւսիս ելանել ու կովկասի

լեռնաշղթային ամրութեանց ապաւինիւ.  
սակայն ժողովրդեան մեծ մասն մնաց իր  
բնագաւառին մէջ և խառնուեցաւ եկ ժու-  
դովրդեան հետ:

Արմէններու գալուստէն վերջ իսկ՝ Նա-  
խահայ իշխանը շարունակեցին իրենց  
ազգային սեպածե զրերով արձանագրու-  
թիւններն, ինչպէս իրքիաս, սակայն ա-  
պա այդ իշխանութեան բարձմամբ լըռուե-  
ցան. հաւանականաբար սկսան զործածել  
Արմէններու Փոխգական տառերն, սերեալ՝  
ի Փիւնիկականէ:

Մեր այս կարծիքն հաստատող զօրեղ  
ապացոյցներ՝ այսինքն զրական մնացորդ-  
ներ՝ չունիմք ի ձեռին, սակայն տրամա-  
բանութիւնն կը ստիպէ զմեզ հաւատալ  
նորա գոյութեան, զի հնար չէ որ այն-  
չափ վաղիւ զրականութիւն ունեցող մի  
ազգութիւն՝ յանկարծ դադրի ուրոյն զիր  
և զպրութիւն ունենալէ, մինչդեռ իր  
դրացի անզիր ազգեր իսկ մեծ ընդունե-  
լութիւն կ'ընէին Փիւնիկ ծագմամբ այրու-  
թենից և այնու զրականութեան կը սկսէին:

Այս զրերն ապրած են և յաջորդ շըր-  
ջանին. արդարե Քրիստոսէ 4 դար առաջ՝  
Արեմտեան Հայոց վրայ իշխող Տրիբագ

կառավարչին զրամներն՝ այս Փիւնիկ Փոխ-  
գական զրերն կը կրեն:

Այս տառերն եթէ ոչ ի ժողովրդեան՝  
գոնէ ի մեհեանս ի զործածութեան էին:  
Արշակունի հարստութեան առաջին շըրջա-  
նին ալ հաւանականաբար կը զործածուեին  
այս տառերն: Բատ Բ. զարու յոյն պատ-  
միչ Փիւնութատոսի՝ Արշակ թագաւորն Հա-  
յոց (հաւանականաբար նախորդն Մեծին  
Տիգրանի հօր) ինձ մը բռնելով՝ զայն  
նիւսիա Աստուծոյն նուիրեց և կենդան-  
ւոյն պարանոցն անցնել տալով ոսկի մա-  
նեակ մը՝ վրան զրեց հայ տառերով՝ «Ար-  
շակ թագաւորն Հայոց՝ Աստուծոյն նիւ-  
սիայ»: Այդ յոյն պատմիչի հայ տառեր  
անուանածն՝ հաւանականաբար այս փոխ-  
գական զրերն էին:

Ե. զարու հայ պատմիչը Դանիկիւսն  
զրերու ի ձեռն Մեսրոպայ զիւտի մասին  
խօսելով կ'ըսեն թէ՝ դոքա նոր չեն, այլ  
երեւենն ի կիր արկեալ և բարձի բողի և-  
դած զրեր (Կորիւն, Խորենացի, Փարանցի),  
և որը անշուշտ այս փոխգական զրերն  
կ'ակնարկեն:

Ազգային պատմիչը այս հինաւուրց  
զրերն Դանիկիւսն տառեր կ'անուանեն, զի

ի սկիզբն Ե. դարու Դանիէլ անուն մի հպիսկոպոսի բով գտաւ Մեսրոպ<sup>1</sup>:

Այս գրերութիւն հաւանականարար Փիւնիկ զրոց քանակաւ 22էր՝ և բնականարար ներկայ այրութենի մէջ մօտաւորագոյն հնչում ունեցող գրերն որպէս՝ ը, ո, գ, կ, չ, ջ, ձ, ևն. մէկ զրով միայն ներկայացեալ էին, և կարելի է խազերով ու պայմանական նշաններով, միհնոյն զրերու աւելի նուրբ կամ խիստ արժէք տալով՝ կը բաւականանային, զորս Մեսրոպ երկու տարի գործածելէ ետք կատարելաւ գործեց դրացի ազգերէ գրեր առնելով:

Հաւանականարար այս գրերն գործածուեցան մինչև Մակեդոնական տիրապետութիւնն՝ յորժամ յոյն գրերն մուտ զըտան ի մեզ, և միայն յազգային մեծեանս կը գործածուեին այս հինաւորց տառերն՝ որք ապա ի սկիզբն Պ. դարու բնաջինջ եղան ի ձեռն Թրիգոր Լուսաւորչի:

4. Մար-Փարսիկ ազդեցութեամ ժամանակ. — Յետ Նինուէի կործանման (608),

1. Տե՛ս «Ծագումն հայ բառից» Տօքթ. Տարաւարեան, Վիէննա, 1895:

Կիաքսար կը տիրէ Հայոց, և ի ձեռն Պարոյր իշխանին կը կառավարէ զայնս : Կիաքսարի յաջորդաց օրով Հայք քանիցս ապստամբութեան փորձեր կ'ընեն և վերջապէս կիւրոսի լուծին տակ կը մտնեն: Վահագնի ապստամբութեան փորձերն յաջող ելք չեն ունենալ և Հայք Պարսիկ իշխանապետութեան տակ կը մնան մինչև Աշերսանդր Մակեդոնացին (331):

Մար-Փարսիկ տիրապետութեան այս երեր դարերն ունեցած են բաւական խոր ազգեցութիւն: Մարը և Փարսիկը համացեղ են ծննդեամբ, երկուքն ալ Արիական, որը և ապա կրկին իրարու հետ խառնուեցան և միհնոյն քաղաքակրթութիւնն ունէին:

Փարսիկը՝ ինչպէս առիթ ունեցանք ըսեւլու՝ յաւուրս Դարեհ Վշտասպեանի Ասորաբարելացւոց զրութիւնն առին, ու այդ սեպահիսթերու ունանց տառական արժէք տալով՝ այրութենարան մ' ունեցան, ու այդ զրերով զրականութիւն մը մշակեցին, որ տեսց մինչև Աղեքսանդրի տիրապետութիւնն. թէպէտ Արշակունի Փարթևը կը գործածեն զայնս մինչ Քրիստոսի Ա. դարն՝ իրենց երկրին մէջ (Փարթևաստան):

Այս այրբենական սեպածև գրերով՝  
Քսերբսէս՝ վանայ քարաժայոին վրայ զրոշ-  
մել տուած է եռալեզուեան (Պարսիկ,  
Մար և Բարելական) արձանագրութեան  
պարսկերէնի մասն, սակայն հայ լեզուի  
համար գործածուած ըլլալու ապացոյցն  
չունիմ'ը ց'արդ:

Տիար Բասմաջեան կը կարծէ թէ հայ  
այրութենն՝ այդ պարսիկ սեպածև գրերէն  
սերած է<sup>1</sup>, մենք փախւզական տառերէն  
յառաջ եկած կ'ենթագրեմք որպէս արիթ  
ունեցանք ըսելու:

Ըստ Քսենոփոնի՝ իր ժամանակն (401)  
պարսիկ լեզուն շատ ընդհանրացած էր ի  
Հայս և զրեթէ ամեն որ կը հասկնար:

Այս ատեններն արդէն բանաստեղծուա-  
թիւնն զարգացեալ էր ի Պարսիկու, որոյ  
ապացոյց են Շահնամեներն, և որ մեծա-  
պէս ազդած է մեր նախահարց վրայ:

Պարսից կրօնն նախ պարզ էր: Երկնից  
կամարն կը պաշտէն իբր գերազոյն Աս-

1. Տե՛ս Բասմաջեան Ծ/17 Մայիս 1880ին առ  
Փրիորիի Միւլէր մնձանուն լեզուագէտ և ուսու-  
ոիչն Վիէննայի համալսարանին գրած նամակն,  
հրատարակեալ ի «Բազմալէպ Հանդիսին 1908  
'Առյեմբերի թուոյն»:

տուած, սակայն ապա Զրադաշտական  
եղան Քրիստոսէ վեց զար առաջ, ընդու-  
նելով բարոյ և չարի սկզբունքներն. կրօն՝  
որ ապա անցաւ դրացի ազգաց, որպէս  
և Հայոց<sup>1</sup>:

Հայք այս ժամանակամիջոցին Զրա-  
դաշտականը էին, Դարեհ Վշտասպեանի և  
Քսերբսէսի արձանագրութեանց մէջ Հայք  
Զանդիկ կրօնիւ ազգաց կարգն յիշատա-  
կուած են:

Պարսիկը ի Ակիւթացւոց տոին և Տար-  
բապաշտութիւնն և մանաւանդ կրակի  
պաշտօնն, որոց հետեւցան և Հայք: Պար-  
սիկը ո՞չ տաճար ունէին և ո՞չ արձան,  
բացօթեայ կը կատարէին իրենց կրօնա-  
կան արարողութիւններն, զիտէին սակայն  
կառուցանել զեղեցիկ պալատներ և զամ-  
բարաններ: Իրենց ճարտարապետութեան  
ուսուցիչը Ասորեստանեայք եղած են, սա-  
կայն իրենք զիտացած են այդ արուեստն  
իւրացնել՝ և ճարտարապետական ուրոյն  
ոճ մ'ունենալ: Այս պարսիկ ճարտարա-  
պետութիւնն մեծապէս ազդած է իրենց տիւ-

1. Ի մասին Զրադաշտական կրօնի տես ի մէջ  
այլոց մեր «Հայոց հին կրօններն» «Բանասէր»  
1903, Փարիզ, որոյ Բ. տիպն Մամլոյ տակ է:

բապետութեան ժամանակամիջոցին Հայոց շինութեանց վրայ:

Պարսիկը ճանապարհներու ցանց մը հաստատած էին իրենց կայսրութեան ամեն կողմն, և ընդ երկարութեան ճանապարհաց օթևաններ շինուած էին, ի պէտք ճանապարհորդաց և վաճառականութեան: Ամեն կողմ թղթատարական հաստատութիւններ կային և կանոնաւոր սուրհանդակներ կ'երթեեկէին:

Հայաստան ոչ միայն ունեցաւ այլ և պահեց այդ հաղորդակցութեան միջոցներն, զորս կը հաստատեմք և Արշակունեաց օրով:

Բայ մեր Պատմահօր՝ Տիգրան Երրուանդեան հայկական բանակն զարգացուց, երկրագործութեան և վաճառականութեան մեծաբէս նպաստեց:

Բանուփոն զՀայս հովիւ (կենդանարոյդ) և երկրագործ կ'անուանէ: Հայք կը բուժանէին ձի, եղ, կով, ոչխար, այծ զորս կը սնուցանէին խոտով: Իրենց գետնափոր սուներու մէջ ունէին ցորենի և զարիի լեցուն ամբարանոցներ, ունդեղէններ, որպէս նաև գինի, չամիչ, զանազան իւղեր, խոզի ճարպ, բոյսերէ հանուած իւղեր ու ողիներ, և գիտէին պատրաստել զարեջուր:

Մշոյ գաշտին մէջ երկրագործութիւնն շատ զարգացած էր, որով և մշակ (մշեցի) անուանումն երկրագործաց (Պարագաշ): Այս շրջանին մէջ մշակութիւնն յարգի էր ի Հայս: Երբակայ գաւառի յուոթի բարերերութիւնն առածի կարգ անցած էր: Հայաստանի գինին և ձիազգիներն անուանի էին և արտածութեան առարկայ:

Հայք իրենց ձիերով և ջորիներով Տիւրոսի հրապարակը կը լեցնէին (Եղեկիէլ իւշ. 14, 600 ն. Ք.): Պարսից՝ տարին 20,000 ձիու տուրք կուտային, որ սահմանեալ էր Միհր Աստուծոյն զոհի համար՝ հաւանականաբար և բանակին: Հերոդոտ կը յիշատակէ Հայոց՝ Բարելոնի հետ ունեցած վաճառականութիւնը, կը նկարագրէ Հայոց նաւերն, որը ձուածեէին՝ ուռենիի ճիւղերով կազմուած, մորթով պատուած, յատակն յարդ կը լեցնէին, երկու թիավարք կը վարէին, և առ նուազն մէկ էջ կ'ունենային: Այսպէս Տիգրիսին և Եփրատէն կ'իջնէին Բարելոն, հոն ապրանքը կը պարպէին, նաևն կ'աւրէին, կազմածի փայտն կը ծախէին և մորթերն իշուն բեոցնելով՝ կը վերադառնային: Այս

նաւերն մինչ 50,000 տաղանդ (100,000 քիլոկրամ) կը տանէին: Հայք Բարելուն կը զրկէին նա մանաւանդ գինի:

Այս շրջանին մէջ Հայք ոչ միայն Եւ փրատի և Տիգրիսի միջոցաւ մինչև Պարսից ծոցն կ'երթային՝ այլ և Արևելքն Արաքսի և Կուրի միջոցաւ կասպից ծովի հասնէին, և Իրասս ու Յաքսարէտէս զետերու միջոցաւ կը մտնէին ի Բակորիա, ի Սոբանիա, ի Պարթևս, և նոյն իսկ ի Հնդիկ (Malte-Brun géographie):

Կիւրոս՝ Հայոց և Կորդուաց զիմեց իր ի Հնդիկս զրկած պատգամաւորներն առաջնորդնելու համար (Քսեն.), զի վաճառականութեամբ ծանօթ էին այդ ճանապարհաց:

5. Յունական ազդեցորեան ժամանակ.  
— Աղեքսանդր Մակեդոնացւոյ տիրապետութեամբ կը սկսի այս շրջանն, որոյ մահուամբ Հայաստան Աելեկեանց բաժին ինչ կաւ, որ երկու իշխաններով (ընդհանրապէս հայազգի) կը կառավարէին, և վերջապէս ըստ նորագոյն ուսումնասիրութեանց Արտաքսիաս հաստատեց ի Մեծ Հայս մի ազգային թագաւորութիւն (189),

Արշակունի անուամբ, որով և վերջ կը գտնէ այս շրջանն:

Մակեդոնացիք և Աելեկեանց յոյն քաղաքակրթութեան հետեւողներ էին, առ այս ներկայ շրջանն Յունական ազդեցորեան շրջան անուանեցինք:

Այս շրջանին մէջ նախ Հայք հատաւարիմ մնացին իրենց Զրադաշտական կրօնին, ապա յոյն քաղաքակրթութեան ազդեցութեան տակ՝ որոց հետևած էին և այդ ժամանակի շրջակայ ազգերն՝ սկսան կուպաշտական հակումներ ունենալ, այսպէս ունեցան Արեգական և Լուսնի ներկայացուցիչ պատկերներ, և Աւեստայի սրբութիւններն՝ Ահուրամազդայ, Անահիտայ, Միհրի, Տիշտրիայ արձաններով ներկայացուցին, Արտաքսդ, Անահիտ, Միհր և Տիր անուանց տակ: Դրացիներուն նըման ունեցան իրենց զեղեցկութեան Աստուածունին (Աստղիկ), որդեզրեցին հետզհետէ Ասորւոց Նանէն և Բարշամինն և իրենց քաջարի նախնիքներ աստուածացուցին, որպէս Վահագն: Հաւանականար այս շրջանին մէջ կուպաշտական հակում մ'էր միայն գոյութիւն ունեցածն, և ապա Արշակունի անուանեալ շրջանին

մէջ բոլորովին կռապաշտական եղաւ :  
կռապաշտական հակումն աւելի Արևմտեան  
Հայոց մէջ յառաջ գացած էր, ուր էին և  
կռապաշտական կրօնի կեդրոններն քան  
յարեւելու :

Տիրան, Տիգրան, Տիրիթ, Տրդատ աւ  
նուանց մէջ Տիր Աստուծոյն հետքն կայ,  
գուցէ և անկէ է Տիր բառն :

Յոյն լեզուն իրը ժամանակի քաղաքա-  
կըրթութեան բարբառն սկսաւ գործածուիլ  
և ի Հայս, զոնէ զարգացելոց կողմանէ<sup>1</sup>,  
որով և Յոյն զրականութիւնն, որոյ հե-  
տևանօք մնշուշտ լքուեցաւ փիւնիկ սեր-  
մամբ փոփուկական տառերու գործածու-  
թիւնն, և գուցէ միայն մեհենական զրու-  
թեանց կը գործածուէր : Ժողովուրդն ի  
կիր կ'արկանէր յոյն տառերն որ միւնոյն  
ծագումն ունէին և աւելի յարմար էին յու-  
նական լեզուին : Դժբաղդաբար այս շրջա-  
նի յասուկ ո՛ր և է զրական բեկոր հա-  
սած չէ մեզ :

Գուցէ իրաց այս վիճակն շարունա-  
կուեցաւ մինչ ծաւալումն Քրիստոնէու-

1. Ըստ Յերոնիմոսի՝ յոյն լեզուն ընդհանրա-  
ցած էր այս կողմերն, բացի Գալատիոյ՝ չկար  
երկիր որ չխօսուէր յունարէն :

թեան ի Հայս և Ազաթանգեղոս յոյն տա-  
ռերով և հայ բարբառով զրած է իր  
զործն :

Այս շրջանին մէջ անշուշտ մուտք գտնել  
սկսածեն ի մեզ յոյն բառեր, յոյն քերա-  
կանի ձևեր և ի մի բան յունաբանու-  
թիւն : Յունարէնն ըիշ վերջ կ'ըլլայ երկրի  
զրական լեզուն և Տիգրան Մեծի զաւակն  
Արտաւագդ՝ այդ լեզուով ողբերգութիւններ  
կը զրէ (Պլուտարքոս) : Երկրագործութիւնն  
և վաճառականութիւնն նախորդ շրջանի  
վիճակն ունէին :

Յունական արհեստք և զեղարուեստք  
մեծ ներգործութիւնն ըրած չեն թուիր այս  
ժամանակամիջոցին :

Ա Յ Բ Զ

ՎՐԵՄԱԿԱՔ

ՑԱՆԿ ՆԵԽԹՈՅ

ԳԼՈՒԽԱԲԱՆ.	
ԳԼՈՒԽԱԲԱՆ.	
1. Սեր բնագաւառն, բնակչութեան ցեղերն, անուններն և լեզուն .	7
2. Սեր բնագաւառի և անոր բնակչութեան անուններն .	16
3. Սեր բնագաւառի վաղեմի լեզուն .	44
ԳԼՈՒԽԱԲԱՆ.	
1. Ուրուազիծ Պատմութեան Հայոց մինչ ցԱրշակունի հարստութիւնն .	48
2. Կալքեան Հարստութիւնն .	48
3. Ակիւթական արշաւանք .	52
4. Արմէնեան հարստութիւն .	79
5. Մակեդոնա-Սելլիկեան իշխանապետութիւն .	85
ԳԼՈՒԽԱԲԱՆ.	
1. Կախափորձ պատմութեան քաղաքարքութեան Հայոց՝ մինչ ցԱրշակունի հարստութիւնն .	92
2. Ասորեսական ժամանակ .	99
3. Ասորեսական ազգեցութեան .	99
4. Ասորեսական ազգեցութեան ժամանակ .	105
5. Արմէններու ի Մեծ Հայս մուտքն ու անոնց ազգեցութիւնն .	120
4. Մար-Պարսիկ ազգեցութեան ժամանակ .	124
5. Յանական ազգեցութեան ժամանակ .	130

Ա. Հ.	Տ. Պ.	Ա. Խ. Վ.	Ա. Հ. Վ.
13	6	Ուշիտովնի	Ուշիտովնի
13	14	Ամիթ	Ամիդ
14	6	որ	որք
18	18	Երեմանս	Երեմանս
»	21	»	»
19	16	Տարմըսթէթէրի	Տարմըսթէթէրի
19	26	աւազան	աւազան
20	7	Լէհման (1901)	(Լէհման 1901)
21	10	իւրմանի	իւրմանի
31	20	Kittite	Hittite
31	26	Ասորեստանիայ	Ասորեստանիայն
38	3	Հալդին	Հալդի
38	11	և	T
38	12	Հայու	Հայու
47	26	գուրանական	առուրանական լեզուաց
51	22	Քիսարի	Քիսարի
51	23	Խիզան	Խիզան
52	8	Արաւի	Արաւ Գ.ի.
52	10	Արիտարիս	Արիտարիս
»	22	»	»
»	24	»	»
53	6	Արգառաբան	Արգառաբան
56	21	Դախանիի	Դախանիի
59	6	Ուամնիստի	Ուամնիստի
60	2	Գուրութափ	Գուրութափ
60	11	Խօթազարի	Խօթազարի
64	5	Ակոչիի	Ակոչիի
66	5	Իրանցու	Իրանցու
»	8	»	»
»	12	»	»
67	5	Ուլուսանն	Ուլուսանն
»	7	»	»
67	11	19	22
75	1	Գուղայարք	Գուղայարք

ԵԶ	ՏԱՐԻ,	ԱԿԱԾԱԼ,	ՈՒԳԱՅԻ,
75	18	իթ,	լթ,
75	20	լուրաղի	լուրատի
77	20	լարգերօնի	լարգերոնի
79	4	երթալով	երթալ
79	11	բարեաթռոսա	բարեթռոսա
79	18	անցու	անցած
81	19	կ'անուանին :	կ'անուանին :
83	1	որոյ	որոց
83	22	զտան և քեթացի - ներն	զտաւ և քեթացինեւ - ըու
84	14	իւրիսս	իւրիսս
»	15	»	»
85	18	Փառնաւազ	Փառնուաս
89	12	Վամ-Ազնիին	Վահ-Ազնիին
92	9	ազգազատ	ազգ՝ ազատ
93	9	իպսի	իպսոսի
104	25	ըստ ազգերու	ըստ այդ ազգերու

---

ՏՕՔԹ. Ա. ՏԵՂԱԿԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՆ

	ԴՐԵ
Գիտական շարժում 1885, 1886, 1887ի տարեկան նկրն	20
Բնական Գոտամութիւն Ա. Հատոր Կենդ. Հիւսուա- ծաբան. և Մարդ. Կազմախոս. ու Բնախոս.	
Գասագիրք երկրորդական վարժարանց.	40
Կախորդին համառօտք. Գասագիրք Կախակրթարա- նաց.	8
Ոռութեանսիրութիւն միզային քարերու պատճառա- րանութեան և կազմութեան վրայ (Ֆրանս.)	10
Ծաղումն հայ տառից (Պատկեալ իզմիրեանց մրցա- նակաշ)	10
Մանրէարանութիւն	10
Միջրոպիուսի (Նախորդին Թուրք թարգմանութ.)	10
Տիեզերք և իր կազմութիւնը (Ֆրանսերեն)	10
Տիեզերք և իր կազմութիւնը (Հայ. բարգմանու- թիւն)	10
Գրիգոր Աղաթոն (Ծաղում և կենսազրութիւն)	2½
Առղջապահութիւն առանին	25
Ենդական Գործարանը (Կազմախոս. Բնախոս. և Առղջապահութիւն)	6
Մարդկային Աղմանախոսութիւն	5
Բառացուցակ Ախանուանց, Բ. Տիգ	4
Տարուինականութիւն, Գ. Տիգ	3
Ազգի մը պահպանութեան պայմաններն (ապառաժ)	
Մանրէք ու անոնց շահատակութիւններն (ապառաժ)	
Հայոց կաթողիկոսութիւնն և այժմու կաթողիկոսի ընտրութիւնն (ապառաժ)	
Ուրուագիծ Պատմութեան Հայոց մինչ ցԱրշակունի Հայոց հին կրօններն Բ. տիգ.	5
Հայոց հին կրօններն Բ. տիգ (Ամալոյ տակ)	

6344

6345

6346

6347

6348

00001997

ՀՀ Ազգային գրադարան



NL0002305

ՀՀ Ազգային գրադարան



NL0002304

ՀՀ Ազգային գրադարան



NL0002303

ՀՀ Ազգային գրադարան



NL0002302

ՀՀ Ազգային գրադարան



NL0001997

